Теоретическое обсуждение полученных в этих опытах результатов приводит нас к установлению ряда интересных положений. Прежде всего, они показывают несостоятельность «гормональной теории развития растений» и свидетельствуют о стадийности развития растений. В опытах, проведенных с периллой, мы видели, что растения, получившие 20 короткодневных фотопериодов, а затем перенесенные в условия естественного длинного дня, после образования ограниченного количества цветков и семян вновь переходили к вегетативному росту. Растения последующей группы, получившие на 4 дня больше короткодневных фотопериодов, в дальнейших измененных условиях светового режима нормально развивались, образуя большое количество цветков и семян, стадийно старели и отмирали. Этот факт М. Х. Чайлахян объясняет тем, что у растений, выявляющих смену генеративной фазы развития вегетативной, образование цветков шло до тех пор, пока не исчерпались запасы гормона в листьях, накопленные за время пребывания растений в условиях оптимальных фотопериодов (1937, стр. 39). После же полного использования запасов этого гормона растение вновь переходит к вегетативному росту. У растений II группы, не проявляющих смены фаз развития, по мнению М. Х. Чайлахяна, запас «гормонов цветения» был до того значительным, что обеспечивал непрерывное цветение до конца отмирания растений. Однако надо иметь в виду, что разница в продолжительности воздействия короткодневных фотопериодов между I и II группами растений составляла всего лишь 4 дня.

В другом нашем опыте (Казарян, 1946) растения периллы, получившие 28 короткодневных фотопериодов, показывали смену фаз развития, если после этого срока растения переставлялись на длинный естественный день. Растения же по-

лучившие на 2 дня больше короткодневных фотопериодов, т. е. всего 30 коротких дней, не переходили к вегетативному росту. Трудно предположить, что за эти 4 или 2 короткодневных фотопериода в растениях могло накопиться такое большое количество гипотетического цветообразующего гормона, которое могло бы обеспечить образование все новых и новых многочисленных цветков, а следовательно, и семян в течение 50—60 дней.

Из этих опытов вытекает, что исключение наступления смены генеративной фазы развития вегетативной было связано не с наличием какого-то гипотетического гормона цветения, а с полным прохождением растением световой стадии развития, что привело также к изменению требования растений к условиям внешней среды.

Все эти экспериментальные данные, кроме того, показывают, что изменение светового режима у растений, недозавершивших световую стадию развития, в зависимости от степени завершенности не приводит к одинаковым последействиям. В начальных периодах прохождения данной стадии развития оно приводит к смене генеративной фазы развития вегетативной, тогда как в последующих периодах этой стадии оно приводит к затягиванию световой стадии развития, т. е. к затягиванию стадийного старения растений, вследствие чего и увеличивается их общая урожайность. Эти периоды онтогенетического развития растений являются критическими периодами в отношении изменения светового режима. Для поднятия урожайности сельскохозяйственных культур или увеличения продолжительности периода цветения декоративных цветочных растений, представляет практический интерес определение времени наступления второго критического периода.

ЦИТИРОВАННАЯ ЛИТЕРАТУРА

Ботвиновский В. В., К физиологии развития конопли. Сборник памяти акад. В. Н. Любименко, 1936.

Еременко П. Т., Вивгения світловоі озимых пшениць. Збірник рабіт з агрофіаіолонії, 2, 1936.

Еременко В. Т., О промежуточном периоде развития и анатомо-морфологических признаках световой стадии пшениц ДАН СССР, 18, 8, 1938.

Жданова Л. П., Фотопериодическая реакция короткодневных и длиннодневных растений в связи с их возрастом, ДАН СССР, 58, 3, 1947.

Казарян В. О., О постфлоральном развитии однолетних растений, ДАН, Арм. ССР, 5, 4, 1946.

Казарян В. О., О репродуктивном развитии и старении однолетних растений, ДАН Арм. ССР, 7, 3, 1947.

Казарян В. О., Значение интенсивности света в световой стадии развития растений. Тр. Бот. ин-та, АН Арм. ССР, 6, 1949.

Казарян В. О., *Егиазарян А. М.* и *Балагезян Н. В.*, Изменение фотопериодического режима и урожайность растений, ДАН Арм. ССР, 9, 3, 1948.

Мошков В. С., Онтогенез и фотопериодизм у растений, ДАН СССР, 22, 7, 1939.

Чайлахян М. Х., Гормональная теория развития растений, Изд. АН СССР, Москва, 1937.

Кафедра физиологии растений.

ՂԱԶԱՐՅԱՆ Վ. Հ.

ՄԻԱՄՅԱ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՅԻՆ ՍՏԱԴԻԱՅԻ ԱՆՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Զարգացման այս կամ այն փուլում օնտոգենետիկ ծերացման պրոցեսների ձգձգվելը նշանակալի չափով արտահայտվում է բույսերի ընդհանուր բերքատվության փոփոխության վրա։ Եթե ծերացման ձգձգումն առաջանում է վեգետատիվ աճի փուլում, ապա հենց դրանով ավելանում է բույսերի ընդհանուր վեգետատիվ մասսան, որը համապատասխան կերպով հասցնում է բերքատվության ավելացման։ Ծերացումը ծաղկման փուլում ձգձգվելու դեպքում բույսերի բերքատվությունն էլ ավելի է մեծանում, որովհետև տերևների ընդհանուր ֆոտոսինթետիկ գործունեությունն ընթանում է միայն նոր ու նոր ծաղիկներ ու սերմեր գոյացնելու ուղղությամբ. Զարգացման այս փուլում, որպես ընդհանուր կանոն, խիստ թուլանում է միամյաների վեգետատիվ օրգանների աճը ի նպաստ գեներատիվ օրգանների աճի ուժեղացման։

Միամյաների օնտոգենետիկ ծերացման արագության փոփոխությունը կարելի է առաջացնել՝ փոփոխելով լուսային ռեժիմը նրանց զարգացման այս կամ այն փուլում։ Լուսային ռեժիմի փոփոխության, այսինքն՝ նպաստավոր ֆոտոպերիոդները ոչ նպաստավոր ֆոտոպերիոդներով փոխելու դեպքում բույսերի մոտ նկատվում է երկու բեկման էտապ։ Առաջին էտապը համապատասխանում է զարգացման այն էտապին, որի ժամանակ նպաստավոր ֆոտոպերիոդները ոչ նպաստավորներով փոխելը առաջացնում է զարգացման գեներատիվ փուլի հերթափոխությունը վեգետատիվով։ Բույսի զարգացման այս ժամանակաշրջանը համապատաս-

խանում է զարգացման լուսային ստադիայի անցման սկզբնական ժամանակաշրջանին, երբ աճման կոնի դեռևս ոչ բոլոր բջիջներն են կրում այն որակական, ստադիական փոփոխությունները, որոնք հատուկ են զարգացման այդ ստադիային։ Երկրորդ բեկման էտապը համապատասխանում է օնտոգենետիկ զարգացման այն ժամանակաշրջանին, երբ լուսային ստադիայի փոփոխությունը հասցնում է բույսերի բերքատվության առավելագույն ավելացման, բայց ոչ զարգացման գեներատիվ փուլը վեգետատիվով փոխելուն։ Զարգացման այս ժամանակաշրջանը համապատասխանում է լուսային ստադիայի ավարտման ժամանակաշրջանին։

Բույսերի կյանքում եղած այս բեկման ժամանակաշրջանները մենք դիտում ենք որպես կրիտիկական ժամանակաշրջաններ լուսային ռեժիմի փոփոխության նկատմամբ։ Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու կամ դեկորատիվ ծաղկաբույսերի ծաղկման շրջանի տևողությունն ավելացնելու համար գործնական հետաքրքրություն է ներկայացնում երկրորդ կրիտիկական ժամանակաշրջանի վրա հասնելու ժամանակի որոշումը։ Մեր փորձերը, որոնք տարված են ռուդբեկիա դեկորատիվ ծաղկաբույսի վրա (Rudbeckia hirta), կիրառելով սերմնատունկերի ուշամառային փոխատնկումը գրունտում, ցույց տվին ծաղկման ժամանակաշրջանի նշանակալի երկարացում գարնանը տնկած կոնտրոլ բույսերի համեմատությամբ։ Սա հասցրեց բույսի դեկորատիվ արժեքի բարձրացման, որ կարող է կիրառում գտնել ծաղկաբուծության պրակտիկայում։ Համանման մեթոդիկայով մեզ հաջողվեց ճյուղավոր հասկերի գոյացում առաջացնել «էրինացեում» գարնանացան ցորենի վրա։ Ռուդբեկայի ծաղկման ժամանակաշրջանի երկարացումը կամ ցորենի բերքատվության ավելացումը նկատվում էր այն դեպքերում, երբ երկրորդ կրիտիկական ժամանակաշրջանը զուգադիպում էր երկարօրյա ամառային ֆոտոպերիոդները աշնանային կարճօրյաներով փոխվելուն։

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова

XXXIII 1951

ՄԵԼԻՔՅԱՆ Ն. Մ.

ԼԻԳՆԻՆԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԵՋ՝ ԿԱՊՎԱԾ ՋՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՀԵՏ

1948 թ. պարտիայի և կառավարության որոշումը՝ բնության վերափոխման ստալինյան հանճարեղ պլանը դաշտապաշտպան անտառաշերտեր ստեղծելու մասին մի հոյակապ նախաձեռնություն է մեր ժողովրդական տնտեսության, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման, ինչպես նաև անտառային տնտեսության ուժեղացման համար։

Այդ պատմական որոշումը ջերմ ընդունելություն գտավ սովետական ողջ հասարակության կողմից, նրա իրականացումը դարձավ յուրաքանչյուր գիտնականի, ագրոնոմի, յուրաքանչյուր մասնագետի պատվի գործը, որին և լծվեցին եռանդուն թափով։

Անտառային տեսակների բազմակողմանիորեն ուսումնասիրության հարցն էլ՛ ավելի ակտուալ դարձավ մեր ժողովրդական տնտեսության զանազան բնագավառների համար։

Մենք ևս սկսեցինք անտառային տեսակների ուսումնասիրությունը՝ կապված նրանց փայտացման պրոցեսների հետ։

Բուսական օրգանիզմում անընդհատ տեղի ունեցող փայտացման պրոցեսը ամենակարևոր պրոցեսներից է, որը խոշոր դեր է կատարում մեր ժողովրդական տնտեսության մեջ։ Այդ պրոցեսի ժամանակ բույսի մեջ կուտակվում է փայտանյութ, այսինքն՝ լիգնին և բույսի որոշ մասերը դառնում են փայտ։

Փայտը օգտագործվում է որպես շինանյութ, որպես վառելանյութ, նրանից ստանում են պլաստ-մասսա, վանիլին և այլ նյութեր։ Լիգնինը մտնում է անասունների ռացիոնի մեջ և, ինչպես վերջերում ենթադրում են, մեծ դեր է խաղում օրգանիզմում տեղի ունեցող նյութափոխանակության պրոցեսում։

Իհարկե դրանով դեռ չի սահմանափակվում նրա նշանակությունը։ Փայտանյութի գործադրությունն ավելի լայն է և օրըստօրե այն ընդարձակվում է։ Լիգնինի քիմիական ուսումնասիրությունը բուռն ծաղկման շրջան է ապրում, և մեր սովետական գիտնականները կարճ ժամանակում ի վիճակի կլինեն պարզելու նրա մի շարք այլ արժեքավոր հատկությունները և իսպառ կդնեն մեր Հայրենիքի տնտեսության ուժեղացման համար։

Փայտացման պրոցեսը բուսական օրգանիզմում տեղի է ունենում անընդհատ՝ նրա կյանքի սկզբնական շրջանից մինչև խոր ծերություն և ապա մահ։

Այդ երևույթի էությունն այն է, որ բուսական բջջի ցելյուլոզային թաղանթի մեջ առաջանում է լիգնին։ Այդ նյութը ներծծվելով ջուր բարձրացնող անոթների պատերի մեջ, կազմում է ծառաբույսերի բնափայտը։

Լիգնինացումը պարզ մեխանիկական պրոցես չէ. նա մի բարդ բիոքիմիական պրոցես է, որը սերտորեն կապված է բջջի պրոտոպլաստի գործունեության և բջջի նյութափոխանակության հետ։

Բջջի կենդանի պրոտոպլաստի նյութափոխանակության հետևանքով առաջանում է լիգնին, այսինքն՝ փայտանյութ և որի հանդես գալը պատճառ է դառնում կենդանի պրոտոպլաստի մահվան, սակայն նույն լիգնինը կարող է նորից մասնակցել օրգանիզմի նյութափոխանակության պրոցեսի մեջ։

Ինչպես հայտնի է, բուսական օրգանիզմի փայտացումը երկարատև էվոլյուցիայի արդյունք է, դա կապված է ցամաքային կյանքի անցնելու հետ։

Բույսերը, ջրից բարձրանալով ցամաք, հանդիպեցին կյանքի դժվար պայմանների։ Թողնելով սննդարար նյութերով առատ ջրային միջավայրը, նրանք անցան այնպիսի կյանքի, որտեղ պետք է հայթայթվեին այդ նյութերը։ Կարիք զգացվեց ջուր բարձրացնող անոթների։

Ցամաքային կյանքը փոխեց բուսական օրգանիզմի նյութափոխանակության բնույթը, բույսերի օնտոգենետիկ զարգացման ընթացքում կենդանի պրոտոպլաստի կենսագործունեության հետևանքով առաջացավ լիգնին, որպես ցամաքային կյանքի հարմարանք։

Փայտացման սաղմերը նկատվում են մամուռների մեջ, իսկ այդ պրոցեսը հետագայում զարգացում է գտել անոթավոր բույսերի

մեջ։ Երիտասարդ բույսի բջջապատերը կազմված են մաքուր ցելյուլոզից. դա մի այնպիսի կազմություն է, որը հատուկ է ջրային նախնիներին և ջրային ժամանակակից բուսական ներկայացուցիչների մեծ մասին։ Հայտնի է նաև, որ օրգանիզմի ամրացման նախնական ստադիան պեկտինացումն է, որին անոթավոր բույսերի մեջ հաջորդում է փայտացումը։

Լիգնինն ամրացրեց ջուր բարձրացնող անոթների պատերը, նրա շնորհիվ զարգացավ մեխանիկական հյուսվածքը և բուսական օրգանիզմը ձեռք բերեց կանգուն դիրք և հարմարվեց ցամաքային կյանքի միանգամայն օտար պայմաններին։

Լիգնինն, ինչպես նշվեց, ունի նաև ժողովրդատնտեսական մեծ նշանակություն։ Հազիվ թե կարելի կլինի գերագնահատել այն դերը, որ ունի փայտը մեր առօրյա կյանքում, շինարարության մեջ, արդյունաբերության մեջ և այլն։

Այդ առնչությամբ էլ շատ հետաքրքրական է լիգնինի ուսումնասիրությունը, որը զբաղեցնում է գիտական միտքը մոտավորապես 100 տարի։

Դրանով երկար ժամանակ զբաղվել են քիմիկոսները, որոնք մերկասերմերի բնափայտի մեջ հայտնաբերել են կոնիֆերին, կոնիֆերիլ սպիրտ և այլ արոմատիկ նյութեր (Կլասոն—1897)։

Քիմիկոսների հետազոտությունները իրենց արտացոլումը գտան բուսաբանների ուսումնասիրությունների մեջ, որոնք գունավոր ռեակցիաների միջոցով հայտնաբերեցին փայտացումը, կապված բույսի տեսակի, հասակի և այլ կողմերի հետ (Բայարկին—1933)։

Մի շարք գիտնականներ ուսումնասիրել են անտառային որոշ տեսակների բնափայտի քիմիական կազմությունը՝ ջուրը, մոխիրը, լիգնինը և զանազան էլեմենտներ, կապված բույսի տեսակի հետ (Նիկիտին—1926, Քյոնիգ—1914, Ֆուքս—1926, Ժերեբով—1936, 1947, Շորիգին—1932)։ Ըստ այդ հեղինակների լիգնինի քանակը տարբեր ծառաբույսերի բնափայտի մեջ տարբեր է, նա տատանվում է 14,1—31,5 %-ի միջև։ Հայտնի է նաև, որ լիգնինի քանակը փոխվում է բույսի հասակի հետ միասին։

Նիկիտինը (1926), ուսումնասիրություններ կատարելով տարբեր հասակի ճյուղերի վրա, ապացուցեց, որ 14-ամյա ճյուղերում լիգնինը ավելի շատ է, քան երիտասարդ ճյուղերում։

Պալեեր (1940) ուսումնասիրեց լիգնինի քանակը աշորա ցո-

բենի ցողունի մեջ՝ կապված վեգետացիայի տարբեր շրջանների հետ, և ցույց տվեց, որ բույսի հասակի հետ նա մեծանում է։

Մանսկայան (1949) այն կարծիքն է արտահայտել, որ լիգնինացումը բարդ ֆերմենտատիվ պրոցես է և կապված է կոնիֆերինի փոփոխությունների հետ, այդ փոփոխությունները կատարվում են կամբիալ բջիջներում և կապված են օքսիդացնող ռեդուկցող ֆերմենտների գործունեության հետ։

Մեր հետազոտությունները լիգնինի վերաբերյալ սկսված են 1946 թ. և բաժանվում են երկու շրջանի, առաջին շրջանում ուսումնասիրված է լիգնինի քանակը միամյա բույսերի՝ կանեփի, պերելայի և սաֆլորի ցողուններում, կապված լուսային ստադիայի անցման հետ։ Պարզվեց, որ այն բույսերում, որոնց համար պայմաններ է ստեղծված լուսային ստադիան արագ ավարտելու, լիգնինացումը ավելի եռանդուն է տեղի ունենում, քան այն բույսերում, որոնք դեռ չեն ավարտել այդ ստադիան։ Բույսը լուսային ստադիան ավարտելով, ծերանում է. այդ պատճառով էլ լիգնինի շատ լինելը միամյա բույսերի ճյուղերում պետք է դիտել որպես ծերացման հատկանիշ։

Սկսած 1948 թ. մենք ուսումնասիրում ենք անտառային որոշ տեսակների միամյա ճյուղերը. այդ ուսումնասիրությունների նպատակն է պարզել լիգնինի կուտակումը՝ կապված շրջապատի պայմանների, հատկապես ջրային ռեժիմի հետ։

Մեր հետազոտության նյութի հիմնական մասը վերցված է Կոտայքի շրջանից. տեղական հացենին, փշատենին և ընկուզենին՝ Քանաքեռի ձորից, իսկ ողնին կամ ալոճը Գեղարդի ձորից։ Նյութի մի մասն էլ վերցված է Բուսաբանական այգուց։ Ջրաբերից վերցված նյութը բավականին հետաքրքիր է այն տեսակետից, որ մենք նույն տեսակից ունենք ժայռի վրա, Զանգվի և Գառնիչայի ափին։ Բուսաբանական այգուց վերցրել ենք այն տեսակները, որոնք երկու տարի շարունակ ջրվել են, իսկ վերջին տարին՝ ոչ. և, հետևապես, դրանց ճյուղերում վերջին տարում առաջացած տարեկան օղակն ավելի նեղ էր նախորդ տարիների համեմատությամբ։ Բոլոր բույսերի համապատասխան միջհանգույցներից պատրաստված են լայնական կտրվածքներ, որոնք նկարահանված են միկրոֆոտո ապարատով՝ օբեկտիվ № 4 և օկուլյար № 4 միամյա ճյուղերում և առանձին տարեկան օղակներում լիգնինի քանակը որոշված է 72%-ի H_2SO_4-ի ազդման մեթոդով, գլյուկոզան՝ Բերթրանի մեթոդով, ճարպերը՝ Ռուշ-



Նկ. 1. Ջրամերձ ընկուզենու ցողունի լայնական կտրվածքը։

Նկ 2. Ժայռի ընկուզենու ցողունի լայնական կտրվածքը։

կովսկու անյուղ մնացորդի մեթոդով։ Ճյուղերում որոշված է նաև մոխրի և խոնավության քանակը։ Աշխատանքը կատարված է Պետական համալսարանի Բույսերի ֆիզիոլոգիայի և անատոմիայի լաբորատորիայում։

Փորձերի առաջին սերիայի համար վերցված են տեղական հացենի՝ Fraxinus oxycarpa, ընկուզենի՝ Juglans regia, փշատենի Elaegnus angustifolia և սզնի կամ ալոճ՝ Crataegus orientalis։ Ինչպես ասացինք, այդ տեսակների տարբեր բույսերը գտնվում էին միանգամայն տարբեր պայմաններում. ժայռի վրա գտնվող բույսերը անշուշտ ջրի սակավության և ուժեղ լույսի պայմաններում էին, իսկ ջրի բույսերը ավելի խիտ էին, թույլ լուսավորված և ավելի ջրառատ հողում էին գտնվում։ Այս բույսերը միմյանցից խիստ տարբերվում էին։ Ժայռում աճած ծառաբույսի միամյա ճյուղերը շատ կարճ էին, տերևները փոքր, իսկ ջրամերձ բույսերի վրա հակառակ պատկերն էր նկատվում։ Ուսումնասիրելով բույսերի ներքին անատոմիական կազմությունը՝ դարձյալ մեծ տարբերություն նկատվեց։ Ջրամերձ բույսերի ցողունների ջրատար անոթները խոշոր են, իսկ ժայռերում աճածներինը փոքր (նկ. 1, 2)։ Այլ կերպ ասած ժայռերում աճած բույսերի մեջ նկատվում է քսերոմորֆ կազմություն։

Բիոքիմիական հետազոտությունները տվեցին հետևյալ պատկերը՝ ջրամերձ բույսերի փայտացումը ավելի մեծ չափով էր կատարվել, դրանց մեջ լիգնինն ավելի շատ էր։ Տվյալները բերված են աղյուսակ 1-ում։

Բերված աղյուսակից երևում է նաև այն, որ գլյուկոզայի և ճարպերի քանակը նույնպես տատանվում է. օրինակ՝ ընկուզենու և սզնու ժայռի վրա աճող բույսերի մեջ գլյուկոզան ավելի շատ է, իսկ ճարպերը ընդհակառակը՝ ջրամերձ բույսերի մեջ ավելի շատ են։ Այդ հաստատվում է գրականության մեջ նշված տվյալներով, որոնք վերաբերվում են սերմերին։

Ելնելով փորձերի տվյալներից՝ հետաքրքրություն առաջացավ պարզելու լիգնինի քանակը առանձին տարեկան օղակներում։ Այս կապակցությամբ մեզ հաջողվեց Բուսաբանական այգուց վերցնել մի քանի ծառատեսակներ. հաղարջենի՝ Ribes aureum, սոֆորա՝ Sophora japonica, կատալպա՝ Catalpa bignonioides, թեղի՝ Ulmus densa և արևելյան թույա՝ Biota orientalis։ Ծառաբույսերի եռամյա ճյուղերը երկու տարի շարունակ ջուր էին ստա-

Աղյուսակ 1

Լիգնինի քանակը ջրամերձ և ժայռի ծառաբույսերի միամյա ճյուղերում

Ծառաբույսի անունը	Որտեղ է աճել	Լիգնինի քանակը տոկոսներով	Գլյուկոզայի քանակը տոկոսներով	Ճարպերի քանակը տոկոսներով
Fraxinus oxycarpa—Հացենի	գետափին	33,0	1,5	8,2
	ժայռի վրա	29,0	1,4	7,3
Juglans regia—Ընկուզենի	գետափին	30,0	2,1	10,5
	ժայռի վրա	28,5	5,3	9,3
Elaeagnus angustifolia—Փշատենի	գետափին	34,3	2,4	8,9
	ժայռի վրա	31,5	2,5	6,5
Crataegus orientalis—Սզնի կամ ալոճ	գետափին	30,0	3,1	8,6
	ժայռի վրա	27,4	5,3	7,3

ցել, իսկ վերջին տարին՝ ոչ։ Ստացվել էր այն պատկերը, որ եռամյա ճյուղի առաջին երկու տարվա տարեկան շերտերը լայն են, վերջինը՝ նեղ։ Ճյուղերի տարեկան շերտերի անալիզի արդյունքները տվել ենք աղյուսակ 2-ում։

Աղյուսակ 2-ից երևում է, որ տարեկան լայն շերտերում լիգնինի քանակը ավելի մեծ է, քան նեղ շերտերում։ Գլյուկոզան ավելի շատ է նեղ շերտերում, իսկ ճարպերը լայն շերտերում։

Գրականությունից վաղուց հայտնի է, որ ծառի հիմքի յարուսների ճյուղերում ջրի քանակը շատ է։ Մեր ուսումնասիրության ընթացքում հարց ծագեց՝ որոշել լիգնինի քանակը ծառաբույսի տարբեր յարուսներում առաջացած միամյա ճյուղերի մեջ, ըստ որում վերցված են հիմքի և գագաթի յարուսների ճյուղերը։

Այս նպատակի համար վերցված է ուռենի՝ Salix australior, փշատենի՝ Elaeagnus angustifolia, թթենի՝ Morus alba, սալորենի՝ Prunus domestica և կաղնի՝ Quercus iberica։

Աղյուսակ 2

Լիգնինի կուտակումը եռամյա ճյուղերի լայն և նեղ տարեկան շերտերում

Ծառատեսակի անունը	Բնափայտի որ շերտն է	Լիգնինի քանակը տոկոսներով	Գլյուկոզայի քանակը տոկոսներով	Ճարպերի քանակը տոկոսներով
Ribes aureum—Հաղարջենի	լայն	34, 4	6, 8	7, 4
	նեղ	25, 1	2, 1	5, 5
Sophora japonica—Սոֆորա	լայն	37, 6	0, 5	10, 5
	նեղ	35, 5	2, 9	7, 8
Catalpa bignonioides—Կատալպա	լայն	35, 5	3, 0	11, 1
	նեղ	30, 1	2, 5	10, 6
Ulmus densa—Թեղի	լայն	37, 6	1, 5	12, 5
	նեղ	35, 5	1, 5	10, 5
Biota orientalis—Թույա	լայն	31, 5	0, 9	5, 5
	նեղ	29, 1	1, 4	3, 5

Տվյալները բերված են աղյուսակ 3-ում։

Աղյուսակ 3-ից երևում է, որ հիմքի յարուսի ճյուղերը իրոք ավելի շատ խոնավություն են պարունակում, շատ է նրանց մոխիրը։ Այդ ճյուղերում շատ է և լիգնինը, ինչպես նաև ճարպերը, իսկ գլյուկոզան շատ է գագաթի ճյուղերում։

Փորձերի վերջին սերիայի ուսումնասիրությունները կատարված են կենդանի և մեռած միամյա ճյուղերի վրա 1950 թ. գարնանը, երբ արդեն ծառերի վրա երևում էին ցրտահարված ճյուղեր, հետաքրքրություն առաջացավ պարզելու լիգնինի քանակությունը՝ կապված ճյուղի ընդհանուր վիճակի հետ։ Այդպիսի նյութ գտանք խաղողի՝ Vitis vinifera-ի, թթենու՝ Morus alba-ի, սա-

Աղյուսակ 3

Լիգնինի կուտակումը ըստ յարուսների

Ծառատեսակի անունը	Որ յարուսից է վերցված նմուշը	Լիգնինի պարունակությունը	Ֆլոբաֆենի պարունակությունը	Պենտոզանի պարունակությունը	Թաղանթանյութի պարունակությունը	Մոխրի պարունակությունը
Salix australior—Ուռենի	հիմքի	36,5	2,5	11,0	69,7	3,3
	գագաթի	30,5	3,5	10,5	58,3	2,2
Elaeagnus angustifolia—Փշատենի	հիմքի	34,2	2,7	8,9	67,3	4,1
	գագաթի	32,0	4,0	8,5	59,6	3,1
Morus alba—Թթենի	հիմքի	33,5	1,4	5,5	47,5	3,8
	գագաթի	25,4	1,2	4,8	45,8	3,1
Prunus domestica—Սալորենի	հիմքի	26,5	1,5	6,7	30,3	5,8
	գագաթի	23,1	2,1	5,4	29,1	4,5
Quercus iberica—Կաղնի	հիմքի	30,1	1,7	6,1	38,8	4,0
	գագաթի	27,1	2,3	6,4	32,4	3,2

լորենու՝ Prunus domestica-ի մոտ։ Այս նյութը նույնպես ենթարկեցինք անալիզի, արդյունքները բերված են աղյուսակ 4-ում։

Աղյուսակ 4-ից երևում է, որ կենդանի ճյուղերում լիգնինը ավելի շատ է, քան չորացած ճյուղերում։ Տարբերություն նկատվում է նաև մյուս նյութերի նկատմամբ, սակայն ամենացայտուն տարբերությունը մենք տեսնում ենք խոնավության մեջ, որ չորացած ճյուղերում շատ չնչին տոկոս է կազմում։

Աշխատանքի երկրորդ մասը կատարված է 1950 թ. Ստեփանավանի շրջանում, էքսպեդիցիայի ժամանակ։ Նույն ժամանակամիջոցում հետազոտվել են նաև Երևանի մերձքաղաքային անտառային տեսակներից մի քանիսը։

Ստեփանավանում նյութ է հավաքված 12 անտառային տեսակների հիմքի և գագաթի յարուսներից։ Միամյա ճյուղերի երկ-

Աղյուսակ 4

Լիգնինի քանակությունը չցրտահարված և ցրտահարված միամյա ճյուղերում

Ծառաբույսերի անունը	Ճյուղի վիճակը	Լիգնինի քանակը տոկոսներով	Պենտոզանի քանակը տոկոսներով	Մոխրի քանակը տոկոսներով	Խոնավության քանակը տոկոսներով
Vitis vinifera—*Խաղողի վազ*	*չցրտահարված*	26,2	2,5	13,4	45,3
	ցրտահարված	23,0	4,0	13,3	12,[illegible]
Morus alba – *Թթենի*	*չցրտահարված*	21,5	2,9	13,9	37,7
	ցրտահարված	20,4	3,5	13,0	14,1
Prunus domestica - *Սալորենի*	*չցրտահարված*	32,6	2,4	10,8	67,1
	ցրտահարված	29,5	3,9	12,6	41,5

բորդ միջհանգույցներից պատրաստված են լայնական կտրվածքներ, նկարահանված են թե միկրոֆոտո ապարատով և թե բինոկուլյար միկրոսկոպով. վերջին դեպքում հանված են սխեմատիկ նկարներ։ Սխեմատիկ նկարների վրա, պլանիմետրի միջոցով հաշված է բնափայտի բռնած տարածությունը տոկոսներով։

Ճյուղերում որոշված է խոնավությունը և մոխրի քանակը։ Ուսումնասիրությունները կատարված են հետևյալ տեսակների վրա. սոճի՝ Pinus hamata, *թեղի՝* Ulmus densa, *կաղնի՝* Quercus iberica, *սպիտակ ակացիա՝* Robinia pseudoacacia, *տանձենի՝* Pyrus communis, *ուռենի՝* Salix alba, *թխկի՝* Acer negundo, *խնձորենի՝* Malus orientalis, *հացենի՝* Fraxinus oxycarpa, *լորենի՝* Tilia cordata, *ընկուզենի՝* Juglans regia, *սզնի կամ ալոճ* Crataegus Meyeri։ *Տվյալները բերված են աղյուսակ 5-ում։*

Աղյուսակ 5-ից երևում է, որ խոնավության քանակը հիմքի յարուսների ճյուղերում ավելի մեծ է, իսկ մոխիրը շատ է միայն կաղնու, տանձենու, խնձորենու, ընկուզենու հիմքի ճյուղերում. Նկատվում է, որ որտեղ ջուրը շատ է, այնտեղ շատ է նաև մոխիրը։

Աղյուսակ 5

Խոնավության և մոխրի քանակը մի քանի ծառատեսակների միամյա ճյուղերում ըստ յարուսների

Ծառատեսակների անունը	Խոնավության քանակությունը տոկոսներով		Մոխրի քանակությունը տոկոսներով	
	հիմքի յարուս	գագաթի յարուս	հիմքի յարուս	գագաթի յարուս
Pinus hamata—*Սոճի*	51,0	32,0	3,0	4,3
Ulmus densa—*Թեղի*	37,5	28,0	4,3	4,2
Quercus iberica—*Կաղնի*	38,8	32,4	4,0	3,2
Robinia pseudoacacia—*Սպիտակ ակացիա*	46,8	40,3	4,5	4,9
Pyrus communis *Տանձենի*	35,1	30,0	4,6	3,5
Salix alba—*Ուռենի*	43,3	38,0	5,6	5,1
Acer negundo—*Թղկի*	36,0	35,0	3,4	3,4
Malus orientalis—*Խնձորենի*	20,5	21,3	4,5	3,4
Fraxinus oxycarpa—*Հացենի*	42,3	45,5	2,8	4,8
Tilia cordata—*Լորենի*	50,0	51,1	4,5	4,0
Juglans regia—*Ընկուզենի*	67,7	60,6	5,4	4,1
Crataegus Meyeri—*Սզնի կամ ալոճ*	37,5	28,6	3,6	2,3

Երևանի մերձքաղաքային անտառից ուսումնասիրության համար վերցված է հացենի՝ Fraxinus oxycarpa, *թղկի՝* Acer negundo, *լորենի՝* Tilia cordata, *սպիտակ ակացիա՝* Robinia pseudoacacia, *ուռենի՝* Salix australior, *թթենի՝* Morus alba, *սալորենի՝* Prunus domestica *և փշատենի՝* Elaeagnus angustifolia։ *Այս տեսակների մեջ ևս հիմքի և գագաթի ճյուղերում որոշված է խոնավության և մոխրի քանակությունը։ Տվյալները բերված են աղյուսակ 6-ում։*

Աղյուսակ 6

Երևանի անտառային մի քանի տեսակների խոնավությունը և մոխիրը

Ծառաբույսի անունը	*Խոնավության քանակությունը տոկոսներով*		*Մոխրի քանակությունը տոկոսներով*	
	հիմքի յարուս	*գագաթի յարուս*	*հիմքի յարուս*	*գագաթի յարուս*
Fraxinus oxycarpa—*Հացենի*	28,8	30,2	2,1	1,6
Acer negundo—*Թղկի*	37,6	40,5	5,0	2,8
Morus alba—*Թթենի*	50,0	45,8	5,8	4,5
Tilia cordata—*Լորենի*	39,0	39,1	3,1	2,[illegible]
Robinia pseudoacacia—*Սպիտակ ակացիա*	37,2	35,5	5,4	4,6
Prunus domestica—*Սալորենի*	30,3	29,1	5,6	3,8
Salix australior—*Ուռենի*	69,4	58,3	3,3	2,2
Elaeagnus angustifolia—*Փշատենի*	67,3	59,6	4,1	3,1

Աղյուսակ 6-ից երևում է, որ մոխրի քանակը հիմքի յարուսների ճյուղերում զգալիորեն ավելի է, իսկ խոնավությունը որոշ տեսակների, օրինակ՝ հացենու, թխկու վրա հակառակ պատկեր է տալիս։ Հիմքի յարուսի ճյուղերում շատ խոնավություն են պարունակում միայն թթենին, սպիտակ ակացիան, սալորենին, ուռենին

և փշատենին։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ թե Ստեփանավանի և թե Երևանի հացենու գագաթի յարուսի ճյուղերում խոնավության քանակությունն ավելի մեծ է։

Անատոմիական հետազոտությունները պարզեցին, որ Ստեփանավանից վերցրած տեսակների հիմքի յարուսի ճյուղերում քսելեմայի անոթները շատ խոշոր են, իսկ գագաթում բնդհակառակը (նկ. նկ. 3, 4, 5, 6)։

Սխեմատիկ նկարների վրա նույն պատկերն է ստացվում (սխեմայի սև շերտերը համապատասխանում են բնափայտի շերտին)։

Երևանի մերձքաղաքային անտառից վերցրած ջրովի տեսակներում բնափայտի ավելի լայն շերտ է կազմվում և այս դեպքում հիմքի և գագաթի շերտերը միմյանցից չեն տարբերվում (սխեմատիկ նկ. 1, 2, 3, 4, 5, 6)։ Ստեփանավանի անտառներից վերցրած տեսակներում հակառակ պատկերն է նկատվում՝ բնափայտի ավելի նեղ շերտ է կազմվում։ Այս դեպքում հիմքի և գագաթի շերտերը միմյանցից զգալիորեն տարբերվում են (նկ. 7. 8, 9, 10. 11, 12, 13, 14, 15, 16)։ Ավելի պարզ լինելու համար բերենք տոկոսները։

Ստեփանավանից վերցրած թղկիի հիմքի յարուսի միամյա ճյուղի մեջ բնափայտը կազմում է 40, 3 տոկոս, գագաթի ճյուղերում՝ 24,2 տոկոս, իսկ Երևանի անտառներից վերցրած օբեկտներում բնափայտի տոկոսը զգալիորեն բարձրանում է, օրինակ՝ Նույն բույսի հիմքի յարուսում այն հասնում է 66 տոկոսի, գագաթի յարուսում՝ 65,3 տոկոսի։ Նույն պատկերն ենք նկատում նաև մյուս բույսերի մեջ, ինչպես, օրինակ՝ Երևանից վերցրած սպիտակ ակացիայի հիմքի ճյուղերում բնափայտը հասնում է 64,6 տոկոսի, գագաթում՝ 53,0 տոկոսի, իսկ Ստեփանավանի տեսակների մեջ հիմքում բնափայտը կազմում է 57.4 տոկոս, գագաթում՝ 51,8 տոկոս։

ԱՄՓՈՓՈՒՄ

Միչուրինյան առաջավոր բիոլոգիան՝ ուսումնասիրելով օրգանական ձևերը, նրանց զարգացումը, կյանքը և գործունեությունը՝ կապված բնության մեջ տեղի ունեցող օրինաչափությունների հետ, հիմնովին հաստատեց այն անքակտելի կապը, որը գոյություն ունի օրգանիզմի և նրան շրջապատող ու սնուցող շրջապա-



Նկ. 3. Թզկնի (Թզկու) հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը։



Նկ․ 4. Թղկենի (Թղկու) գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը։

Նկ. 5. Կաղնու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը։

Նկ. 6. Կաղնու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը։

տի միջև։ Միջավայրը և օրգանիզմը հանդես են գալիս որպես մի դիալեկտիկական միասնություն, մեկի ուսումնասիրությունն անպայման պետք է կատարվի մյուսի փոխներգործության պայմաններում։

Նույն բույսերը՝ աճելով միջավայրի, այն է՝ ջրի, լույսի, ջերմության, միանգամայն տարբեր պայմաններում, իրանց օնտոգենետիկական զարգացման ընթացքում մեծ չափով հարմարվում են այդ պայմաններին։

Մեր հետազոտությունների ընթացքում պարզվեց, որ գետափերին աճած ծառատեսակների՝ հացենու, ընկուզենու, փշատենու և սղնու ցողուններում կազմվել են քսելեմայի ավելի խոշոր անոթներ, քան ժայռի վրայի բույսերի մեջ։

Այդ մորֆոլոգիական փոփոխությունները հետևանք են բիոքիմիական փոփոխությունների։

Լիգնինը, որն ընդհանրապես հանդես է գալիս օրգանիզմը ամրացնելու, նրա մեխանիկական կարողությունը մեծացնելու համար, դարձյալ կախված է միջավայրի պայմաններից։

Մեր կողմից զանազան վարիանտներով դրված փորձերը, նախնականորեն գալիս են ապացուցելու, որ ջրի առատության պայմաններում լիգնինը ավելի եռանդուն է կուտակվում։ Նկատվում է, որ ջրամերձ ծառատեսակների մեջ լիգնինի քանակը մեծ է։

Լիգնինը կենդանի պրոտոպլաստի գործունեության արդյունքն է։ Սակայն կենդանի պրոտոպլաստը միջավայրի տարբեր պայմաններում միանգամայն տարբեր բնույթի է գործում։

1950 թ. ամառը մեր կատարած էքսպեդիցիան բավականաչափ նյութ տվեց, որը մեզ դարձյալ նման եզրակացությունների բերեց, այն է՝

1. Իրոք որ ջրի առատության պայմաններում բնափայտի ավելի լայն շերտ է կազմվում և այս դեպքում հիմքի ու գագաթի յարուսների ճյուղերի բնափայտի շերտերը միմյանցից շատ չեն տարբերվում։ Այդ եզրակացությանը մենք հանդեցինք Երևանի անտառային տեսակների ուսումնասիրության հիման վրա։

2. Ստեփանավանի անտառներից վերցրած միամյա ճյուղերի բնափայտի ուսումնասիրությունից պարզվեց, որ չնայած նրան, որ անտառը խոնավ է, բայց քանի որ նա չի մշակվում, հետևապես ճյուղերում ընդհանրապես բնափայտի ավելի նեղ շերտ է կազմվում։ Այս դեպքում հիմքի և գագաթի յարուսների բնափայ-

տային շերտերը խիստ տարբերվում են (հիմքի յարուսում լայն է)։ Նկատվում է նաև, որ հիմքի յարուսի քսելեմայի անոթները ավելի խոշոր են, իսկ գագաթինը՝ մանր։

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է դառնում միջավայրի և ծառատեսակների փոխադարձ կապը։ Միջավայրի փոխվելու հետ միասին փոխվում է և օրգանիզմի նյութափոխանակության բնույթը, կենդանի պրոտոպլաստի կենսագործունեությունը և որպես հետևանք փոխվում է բուսական օրգանիզմի արտաքին մորֆոլոգիան, ինչպես նաև ներքին՝ անատոմիական կառուցվածքը։ Ջրի սակավության պայմաններում աճման պրոցեսները դանդաղում են, կրճատվում է բջիջների աճման ֆազան, նրանք արագ կերպով դիֆերենցվում են հաստատուն հյուսվածքների, որոնք ապահովում են օրգանիզմի կենսագործունեությունը։ Այդ դեպքում ստացվում է բնափայտի նեղ շերտ քսելեմայի մանր անոթներով։

Ջրի առատության պայմաններում աճման պրոցեսները եռանդուն են կատարվում, բջիջներն անցնում են իրենց աճման նորմալ ֆազաները, որից հետո միայն դիֆերենցվում են հյուսվածքների։ Այդ է պատճառը, որ այս դեպքում ստացվում է բնափայտի լայն շերտ քսելեմայի խոշոր անոթներով։

Պարզվեց նաև, որ ջրի առատության պայմաններում լիգնին ավելի շատ է կուտակվում։ Ըստ երևույթին դա դարձյալ կապված է աճման պրոցեսների հետ։ Այստեղ մենք հատկապես ի նկատի ունենք կողքի մերիստեմայի, այսինքն կամբիումի գործունեությունը, որի հետևանքով և երկշաքիլ բույսերի ցողունում առաջանում է բնափայտը։

Լիգնինի կուտակումը անշուշտ կապված է բուսական բջջում եղած նաև մյուս նյութերի, հատկապես պոլիսախարիդների հետ, որի մասին կհաղորդվի առանձին։

Հարցը հետաքրքրական է և ակտուալ. պետք է ավելի լրջորեն զբաղվել, գտնել և ստեղծել այն պայմանները, որոնք կուժեղացնեն լիգնինացման պրոցեսը։ Անտառային տեսակների մեջ կկուտակվի լիգնինի ավելի մեծ պաշար, որը կնպաստի մեր ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի զարգացմանը։

Սխեմատիկ նկ. 1. Թզկու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։



Սխեմատիկ նկ. 2. Թզկու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։

Սխեմատիկ նկ. 3. Ակացիայի հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։

Սխեմատիկ նկ. 4. Ակացիայի գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։

Սխեմատիկ նկ. 5. Սալորենու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։

Սխեմատիկ նկ. 6. Սալորենու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Երևան)։

Սխեմատիկ նկ. 7. Թղկու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 8. Թղկու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 9. Ակացիայի հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 10. Ակացիայի գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։



Սխեմատիկ նկ. 11. Կաղնու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 12. Կաղնու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 13. Թեղու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 14 Թեղու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 15. Սոճու հիմքի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

Սխեմատիկ նկ. 16. Սոճու գագաթի յարուսի ճյուղի լայնական կտրվածքը (Ստեփանավան)։

ЛИТЕРАТУРА

Бардинская М. С., К вопросу образования лигнина в растениях, ДАН СССР, т. LXXIII, № 1, 1950.

Жеребов А. П., К вопросу об образовании лигнина, „Ж. бум. пром.-ти" № 15, 9, 27, 1936.

Жеребов А. П., Природа лигнина, „Ж. бум. пром.-ти" № 5, 6, 7, 1947.

Жеребов А. П., Лигнин как часть сложной углеводной молекулы древесины, „Совещание по изучению и использованию лигнина", 1948.

Иванов А. А., Влажность древесины ствола в связи с водообменом в дереве, „Тр. ин-та физ. растений", АН СССР, т. 6, вып. 1, 1948.

Манская С. М., Образование лигнина в растениях, „Успехи современной биологии", т. XXIII, вып. 2, 1947.

Манская С. М., Условия образования лигнина в растениях, „Сб. IV, Конференции по высокомолекулярным соединениям", 1948.

Манская С. М., Ферментативное окисление фенольных соединений, Автореферат диссертации, представленной на соискание ученой степени доктора биологических наук, 1949.

Никитин Н. И., Очерки по химии древесины, 1926.

Никитин Н. И., (член. кор. АН СССР), Новые исследования в области химии древесины и целлюлозы, „Тр. ин-та леса АН СССР" т. II, 1948.

Одинцов Т. Н., Химия древесины и лигнина, „Совещание по изучению и использованию лигнина", 1948.

Палеев А. М., К вопросу об образовании лигнина, „Биохимия", т. 5, вып. 1, 1940.

Раскатов П. Б., О зависимости структуры годичных колец древесины от онтогенеза образовательных тканей, ДАН СССР, Новая серия, т. XXI, № 4, 1950.

Фукс В., Химия лигнина, 1926.

Шарков В. И., Исследования в области химии лигнина, „Совещание по изучению и использованию лигнина", 5—7 мая 1948 (тезисы докладов).

Шорыгин П. П., Химия целлюлозы, 1939.

Բույսերի ֆիզիոլոգիայի և
անատոմիայի ամբիոն

МЕЛИКЯН Н. М.

НАКОПЛЕНИЕ ЛИГНИНА У НЕКОТОРЫХ ЛЕСНЫХ ПОРОД В СВЯЗИ С ВОДНЫМ РЕЖИМОМ

РЕЗЮМЕ

Одревеснение или накопление лигнина является одним из важнейших процессов, происходящих в растительном организме в течение его общего онтогенетического развития. Оно является результатом эволюционного развития и приспособления растений к их переходу на сушу.

Этот же процесс играет огромную роль в нашем народном хозяйстве. Лигнин используется как строительный материал, как топливо, служит сырьем в производстве пластмассы и ванилина. Лигнин входит в рацион животных и играет значительную роль в обмене веществ животного организма. С этой точки зрения изучение процесса накопления лигнина представляется актуальной задачей.

К исследованиям по лигнину мы приступили еще 1946 г. Основным объектом изучения служили некоторые лесные породы. Мы задались целью выявить взаимосвязь между водным режимом внутренней структуры растительного организма и накоплением лигнина.

Проведенными исследованиями выяснилось, что у однолетних побегов лесных пород, выросших в благоприятных условиях водного режима, образуются крупные ксилемные сосуды (водоносные сосуды) и накопляется большое количество лигнина, в условиях же недостаточного водоснабжения замечается обратная картина, т. е. ксилемные сосуды мельче, количество накопленного лигнина также сравнительно меньше.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова
XXXIII 1951

ՊՈՂՈՍՅԱՆ Ա. Ռ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆԻ ԿՐԾՈՂՆԵՐԸ

Բոլշևիկների պարտիայի և Սովետական կառավարության 1948 թ. դեկտեմբերի 20-ի որոշումը դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման, խոտադաշտային սիստեմի, լճերի և ջրամբարների կառուցման, բարձր և կայուն բերքատվությունն ապահովելու մասին՝ տալիս է Սովետական Միության բնության վերափոխման հոյակապ աշխատանքների մեծ պլանը։

Ստալինյան այդ մեծ պլանը հիմնված է սովետական առաջավոր գիտության և պրակտիկայի հարուստ փորձի վրա և առաջադրում է բնության այնպիսի վերափոխում, որը տանում է դեպի նույն բնության հարստացումը։

Բայց այդ պլանի իրականացումը լուրջ խնդիրներ է առաջադրում սովետական գիտությանն ընդհանրապես և բիոլոգիական գիտություններին՝ մասնավորապես, խնդիրներ, որոնց լուծումը մեծապես կնպաստի բերքատվության բարձրացմանը և անտառաշերտերը վնասատուներից պաշտպանելու գործին։ Բիոլոգիական գիտությունների շարքում զոոլոգիան ևս իր լուրջ խնդիրներն ունի բնության վերափոխման համար մղվող պայքարում։

Դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, ցանքաշրջանառության խոտադաշտային սիստեմը, որոնց նպատակն է ապահովել բարձր և կայուն բերք գյուղատնտեսության ասպարեզում, յուրաքանչյուր երկրամասում և ռայոնում պահանջում է առաջադրված պլանի իրականացման պայմանների բազմակողմանի ուսումնասիրություն։ Տվյալ դեպքում զոոլոգիայի գծով անհրաժեշտ է ուսումնասիրել, ինչպես այդ արվում է Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում, համապատասխան տեղամասերի առկա կեն-

դանական աշխարհը իր առանձնահատկություններով։ Դրա հետ միասին այդ ուսումնասիրությունը պետք է կարողանա պարզել այն հնարավոր փոփոխությունները, որոնք տեղի կունենան դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման և ցանքաշրջանառության եռադաշտային սիստեմի կիրառման ընթացքում։

Զոոլոգիայի խնդիրն է ուսումնասիրել տվյալ տերիտորիայի կենդանական աշխարհը կենդանիների վնասակարության և օգտակարության տեսակետից։

Ինչպես հայտնի է, այս խնդրի առնչությամբ Մոլոտովի անվան Պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնը հանձն է առել ուսումնասիրելու մեր ռեսպուբլիկայի շրջաններից մեկի, այն է՝ Կոտայքի վնասատու կենդանիների առկա խմբերը։ Հայտնի է նաև, որ մեր անցյալ գիտական սեսիայում այդ ընդհանուր հարցից զեկուցում է լսվել Կոտայքի շրջանի միջատների ֆաունայի մասին։ Իսկ մեր այս աշխատանքը վերաբերում է այդ շրջանի կրծողների ուսումնասիրությանը։ Ռեսպուբլիկայի մյուս շրջաններում կատարած մեր ուսումնասիրությունները պարզել են, որ կրծողների մի քանի տեսակներ (դաշտամկներ, ավազամկներ, նապաստակ և այլն) զգալի վնաս են պատճառում ծառատեսակներին, ըստ որում մեր ուշադրությունը գրավել է մասնավորապես ծառատնկումների համար նոր յուրացված հողամասերում այդ կրծողների պատճառած վնասը։ Օրինակ, Սպիտակի, Հոկտեմբերյանի, Մարտունու շրջաններում և Երևանի շրջակայքում կատարած մեր ուսումնասիրությունները հաստատել են, նախ այն, որ մինչև անտառատնկումը կամ այգետնկումը տվյալ հողամասերում եղած կրծողները շարունակում են մնալ և բազմանալ նաև նոր պայմաններում, վնասելով ծառատեսակներին։ Ըստ որում կրծողները վնասում են բոլոր ծառատեսակներին՝ անկախ ծառերի հասակից։ Մինչդեռ գրականության մեջ այն սխալ կարծիքը կա, թե կրծողները վնասում են ոչ բոլոր հասակի ծառերին, այլ միայն մատղաշներին. օրինակ, Մոսկվայի համալսարանի 1950 թ. հրատարակած՝ Գեպտների, Մարզովա-Տուրովայի և Ցալկինի կոլեկտիվ աշխատության մեջ («Вредные и полезные звери районов полезащитных насаждений»—«Взрослым посадкам грызуны не страшны» (էջ 16)։ Մեր ուսումնասիրությունները հակառակն են ասում։

Ահա այդ փաստերը անհրաժեշտ դարձրին լրջորեն ուսումնասիրելու կրծողների տեսակային կազմը և տարածումը Կոտայքի

շրջանի բոլոր այն հողամասերում, որտեղ պետք է ստեղծվեն դաշտապաշտպան անտառաշերտեր։

Ըստ ռեսպուբլիկայի կառավարական պլանի՝ Կոտայքի բոլոր գյուղերի դաշտերում պետք է ստեղծվեն անտառաշերտեր, գերազանցապես պտղատու ծառերից (ծիրանի ծառ, սալորենի, բալենի, թթենի, խնձորենի և այլն)։ Կրծողների տարածումը և խտությունը պայմանավորված է տվյալ տերիտորիայի բնական, աշխարհագրական գործոններով, որոնք կարող են առավել կամ պակաս չափով նպաստավոր լինել կրծողների բնակության համար։

Կոտայքը գտնվում է ծովի մակերևույթից 1200—3000 մ բարձրության վրա։ Նրա ցածրադիր վայրերում ընկած են կիսանապատային տարածություններ, որոնք հետզհետե յուրացվում են. օրինակ Ջրվեժ գյուղը կիսանապատային տարածություններից այս տարի յուրացրել է 200 հեկտար։

Կոտայքը հարուստ է խոտհարքներով և արոտավայրերով. այս տեսակետից աչքի են ընկնում Աղմաղանի հարավ-արևմտյան լանջերը։ Բայց ասենք նաև, որ խոտհարքերն ու արոտավայրերը դաշտամկների մշտական օջախներն են հանդիսանում։

Կրծողների տարածումն ըստ տեսակների և նրանց խտությունը կախված է աշխարհագրական զոնաներից։ Բայց երբեմն նույն զոնայում իրար հետ բնակվում են կրծողների մի քանի տեսակներ, իսկ որոշ տեսակներ բնակվում են տարբեր զոնաներում առանձին-առանձին. օրինակ ավազամկները, դաշտամկները, կուրամկները իրար հետ են հանդես գալիս ցածրադիր վայրերում, իսկ շատ ավելի բարձրադիր մասերում ավազամկները չեն բարձրանում։ Այդ մասերում բնակվում են բացառապես դաշտամկները և համստերը։ Կատարված ուսումնասիրությունների (այդ թվում նաև մեր կատարած) տվյալների համաձայն Հայաստանում տարածված են 24 տեսակ կրծողներ, որոնցից՝ ըստ մեր նյութերի՝ 14-ը տարածված են նաև Կոտայքում։ Այդ 14 տեսակները ընդգրկված են 7 ընտանիքի և 10 սեռի մեջ, հետևյալ ձևով՝

I. Ընտանիք — Deporidae gray (1821) Зайцы — **Նապաստակներ**

Սեռ — Lepus Lin (1758) Зайцы-русаки — **Նապաստակ-ռուսակներ**

1. Lepus europaeus Pallas (1778) Заяц-русак — **Նապաստակ-ռուսակ**

II. Ընտանիք — Myoxidae gray (1821) Сонеобразные— *Քնամոլամկնակերպներ*

Սեռ—Dyromys Thomas (1907) Сони лесные — *Անտառային քնամոլներ*

2. Dyromys nitedula Pallas (1778) Соня лесная—*Անտառային քնամոլ*

III. Ընտանիք — Dipodidae Waterhause (1842) Мышевки, прыгунчики, тушканчики — *Ցատկամկներ*

Ենթաընտանիք—Allactaginae Vinogradovi (1925) Земляные зайцы—*Գետնանապաստակներ*

Սեռ — Allactaga Cuvier (1836) Земляные зайцы — *Գետնանապաստակներ*

3. Allactaga elater Léchtenstein (1825) Тушканчик малый *Փոքր ճագարամուկ*

IV. Ընտանիք - Muridae gray (1821) Мышеобразные— *Մկնակերպներ*

Ենթաընտանիք — Murinae Murray (1866) Мышевидные *Մկնատեսակներ*

Սեռ — Rattus Frisch — Крысы — *Առնետներ*

4. Rattus norvegicus Berkenhaut (1769) -- Крыса серая или насюк — *Մոխրագույն առնետ*

Սեռ — Mus Lèn — Мыши — *Մկներ*

5. Mus musculus Lèn — Мышь домовая — *Տնային մուկ*

Սեռ -- Silvimus Ognev et Verbjen - Мыши лесные *Անտառային մկներ*

6. Silvimus Silvaticus Lèn -- Мышь лесная -- *Անտառային մուկ*

V. Ընտանիք - Cricetidae Rochebrune (1883) Хомякообразные — *Համստերակերպեր*

Ենթաընտանիք - Cricetinae Murras Хомяковые *Համստերայիններ*

Սեռ -- Cricetulus Milne -- Edwards Серые хомяки—*Մոխրագույն համստերներ*

7. Cricetulus migratorius Pallas — Серый хомячек — *Մոխրագույն համստերիկ*

Սեռ - Cricetus Zeske -- Хомяки — *Համստերներ*

8. Cricetus auratus Waterhouse—Хомяк малоазиатский—*Փոքրասիական համստեր*

VI. **Ընտանիք** — Merioninae Neptner. (1933)

Սեռ — Meriones Neliger — Песчанки — *Ավազամկներ*

9. Meriones blackleri Thomas—Песчанка малоазиатская—*Փոքրասիական ավազամուկ*

10. Meriones persicus Blanford—Песчанка персидская—*Պարսկական ավազամուկ*

VII. **Ընտանիք** — Arvicolidae Grag (1821 Полевковые) *Դաշտամկնայիններ*

Սեռ — Ellobius Ficher — Слепушонки — *Կուրամկներ*

11. Ellobius lutescens Thomas — Слепушонка горная — *Լեռնային կուրամուկ*

Ենթաընտանիք — Microtinae Miller — Полевки — *Դաշտամկներ*

12. Microtus arvalis Pallas — Полевка обыкновенная — *Սովորական դաշտամուկ*

13. Chionomys nivalis — Снеговая полевка — *Ձյան դաշտամուկ*

14. Arvicola terrestris L. Водяная крыса—*Ջրային առնետ։*

Բացի այս տեսակներից, գուցե հատկապես դաշտամկներից Կոտայքի շրջանի տերիտորիայում կան այլ տեսակներ էլ, բայց մեր հավաքների ժամանակ նրանց չենք հանդիպել։

Կոտայքի շրջանում տարածված գրեթե բոլոր 14 տեսակներն էլ տարածված են նաև հարևան շրջաններում (Ախտա, Աշտարակ, Ն. Բայազետ, Վեդի, Արտաշատ և այլն)։ Այս փաստերը մեզ բերում են մի եզրակացության, որ Կոտայքի շրջանը իր ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով (հողային պայմանները) պայմանավորել է նույն շրջանի կրծողների ֆաունայի մի հիմնական առանձնահատկությունը, այն է, որ այս շրջանում միախառնվում են և ցածրադիր (Արարատյան դաշտի) և լեռնային զոնաներին հատուկ տեսակներ իրենց արիալներով։ Հետևաբար, Կոտայքի շրջանը, ի տարբերություն միատիպ ցածրադիր և միատիպ բարձրադիր շրջանների, կարելի է բնութագրել որպես միացնող, փոխանցող շրջան ցածրադիր՝ դաշտային և բարձրադիր՝ լեռնային զոնաների կրծողների ֆաունայի։ Ցածրադիր հարավից և հարավ-արևելքից այստեղ թափանցում են ավազամկները և

կուրամկները, որոնցից առաջինները տարածվում են մինչև Ջառ գյուղը, որը գտնվում է շրջանի բարձրադիր մասերում ծովի մակերևույթից 1700 մետր բարձրության վրա, իսկ երկրորդները՝ (կուրամկները) հասնում են մինչև Ողջաբերդ գյուղը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1775 մետր բարձրության վրա: Բարձրադիր հյուսիսից ու հյուսիս-արևելյան մասերից այս շրջանն են թափանցում և տարածվում դեպի ցածրադիր վայրերը լեռնային մասիվներին հատուկ սովորական ու ձյան դաշտամկները և համստերը, որոնք հասնում են մինչև Նորք, որը գտնվում է ծովի մակերևույթից 1000 մետր բարձրության վրա:

Այսպիսով, Կոտայքի շրջանը հատկանշվում է կրծողների ֆաունայի բազմազանությամբ, որը և ավելի է մեծացնում կրծողների վնասակարության աստիճանը շրջանի գյուղատնտեսության և ծառատեսակների համար առանձնապես:

Այժմ համառոտ կերպով կանգ առնենք այս կրծողների առանձին տեսակների տարածման և բիոլոգիական որոշ հարցերի վրա, ընդ որում ներկա դեպքում անհրաժեշտ չենք համարում այս կրծողների սիստեմատիկական նկարագրությունը:

1. **Նապաստակ-ռուսակ—Заяц-русак—Lepus europaeus Pallas:** *Տարածված է շրջանի բոլոր գոտիներում: Այս կրծողի էկոլոգիան Հայաստանում չի ուսումնասիրված: Ըստ մեր վերջին երկու տարիների մատերիալների, նրան հաճախ կարելի է հանդիպել Երևանի շրջապատի նորատունկ անտառներում, նրանց կրծելու հետքերը նկատել ենք ծառերի ճյուղերի վրա, իսկ ձմռանը՝ ձյան վրա նրանց ոտքերի հետքերը: Բայց նրանք մնայուն չեն այդ վայրերում: «Մարի լանջ» կոչված նոր անտառներում պատահել ենք նրանց պառկելու տեղերին:*

Նապաստակը հատկապես վնասում է տնկիները, այգիները, կրծելով մատղաշ ճյուղերը: Այդ են ապացուցում մեր 1942—43 թթ. Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզի տնկարաններից ու այգիներից և 1949—50 թվերին Երևան քաղաքի շրջապատի նորատունկ անտառներից հավաքված նյութերը: Հետևապես, չի բացառվում նրանց վնասը նաև Կոտայքի ապագա նորատունկ անտառներում, այգիներում և տնկարաններում:

2. **Անտառային քնամոլ մուկ—Соня лесная—Dyromys nitedula Pallas:** *Ծառաբնակ կենդանի է: Ըստ գրականության տվյալների (Огнев, 1947, 781) Սատունինի 1926 թ. հավաքներից հայտնի է մեկ օրինակ Կոտայքից: Իսկ մեր դիտողություններից հայտնի է*

մեկ բնտանիք Նորքի մանկական սանատորիայի այգու ընկուզենու վրայից։ Այդ կրծողի բիոլոգիան Հայաստանում նույնպես չի ուսումնասիրված։ Այգիներին և ծառատեսակներին նրա պատճառած վնասի մասին որոշ դիտողություններ ունենք 1943 թ. էջմիածին քաղաքի շրջապատի այգիներում եղած ծիրանի ծառերի նկատմամբ։ Նրանք այդ տեղերում ուտում են ծիրանի պտուղները և կորիզը։

3. Փոքր ճագարամուկ—Тушканчик малый—Allactaga elater Zicht։ Ըստ գրականության տվյալների այս կրծողը հայտնի է Երևանի շրջապատից (Аргиропуло, 1939 թ.), ըստ մեր հավաքի, նրանք ունեն հսկայական կուտակում Նորքի, Ջրվեժի, Ավանի, Ողջաբերդի դաշտերում, կիսանապատային գոտում, որտեղ գրունտը կազմված է կավավազային և փոքր քարերից։ Մեր հավաքների ժամանակ կատարած փորումները ցույց են տվել, որ նրանց բույնը շատ պարզ կառուցվածք ունի. երբ կենդանին բնի ներսումն է, նա ներսից բնի անցքը հողի փուխր խցանով փակում է։ Հենց այդ խցանով կարելի է անսխալ որոշել, որ բնակիչը ներսումն է։ Ըստ մեր հավաքած նյութերի՝ նրանք սնվում են բույսերի արմատներով, արմատապտուղներով, սոխուկներով և այլն։ Սրանք ապրում են շատ հաճախ պատահական ավազամկան և համստերի հետ միևնույն ստացիայում։ Մեծ մասամբ ակտիվ են գիշերը։ Ձմեռը բույն են մտնում։ Այս կենդանու բիոլոգիան չի ուսումնասիրված, բայց երևույթին այն նկատառումով, որ նա համարվել է անվնաս կենդանի։

4. Մոխրագույն առնետ—Крыса серая или насюк—Rattus norvegicus Berk. Այս կրծողը բնակվում է թե բնակարաններում և թե բնակավայրերից դուրս հողամասերում։ Հայաստանում լայն տարածում ունի. մեծ վնաս է պատճառում սողման ցանցին՝ փորելով առուների և ջրանցքների ափերը։ Մեր այս տարիների հավաքների ժամանակ նկատել ենք Նորքի շրջակայքում, Նոր ջրանցքի ափերին, Զառարկում, Ավանի ձորում, Բաշգյուղի առուների եզրերին։ Մեր դիտողությունները ցույց են տվել, որ մոխրագույն առնետներն ուտում են ծառերի տակը թափված պտուղները։ Հարմար կեր չլինելու պատճառով նրանք կարող են վնասել նաև ծառատեսակներին. գրականության մեջ այդ մասին որոշ տեղեկություններ կան հարավային Վրաստանից (Верещагин)։

5. Տնային մուկ—Мышь домовая —Mus musculus L.։ Այս

կրծողը լայն տարածում ունի Հայաստանում, այդ թվում նաև Կոտայքում։ Նրա պատճառած վնասը հանրահայտ է։

6. **Փոքրասիական համստեր** *(դարադյոլ մուկ)*—Хомяк малоазиатский—Mesocricetus auratus brandti։ *Այս կրծողի արիալը Հայաստանում ընդգրկում է ամբողջ լեռնատափաստանային շրջանները։ Անտառային մասերում բացակայում է, իսկ կիսանապատային զոնայում հազվադեպ է։ Այս տեսակի վերաբերյալ մենք նյութեր ունենք Կոտայքի Ջառ և Հրազդան գյուղերից։ Բազմաթիվ բներ ենք արձանագրել Ջրվեժ գյուղի և Նորքի դաշտերում։ Այս կրծողը՝ լինելով Հայաստանում շատ լայն տարածված՝ նկատելի վնաս է պատճառում հացահատիկային, բանջարանոցային (ճակնդեղ, կարտոֆիլ) կուլտուրաներին և արոտավայրերին։*

Ինչպես նշեցինք, այս կրծողը անտառներից խուսափում է, բայց այգիներում նրանց շատ ենք հանդիպել։ Սպիտակի շրջանի Համամլու գյուղում 1948—49 թթ. նորահաս այգում մեկ հեկտարի վրա միջին թվով կար 16 բույն, բայց միաժամանակ նրանց ծառատեսակների վնասելու ոչ մի դեպք չենք արձանագրել, իսկ Կոտայքի շրջանի դաշտերում շատ տարածված լինելով՝ մեծ վնաս են պատճառում։

7. **Մոխրագույն համստերիկ**—Серый хомячек—Cricetulus migratorius Pall. *Շատ լայն տարածված կրծող է. Հայաստանում դարձել է շատ ուժեղ անային պարազիտ, իսկ բնակավայրերից հեռու, բնության մեջ շատ քիչ է տարածված։ Այդ պատճառով էլ նա դաշտերում որպես խոշոր վնասատու Հայաստանի պայմաններում չի արձանագրվել։*

Այս կրծողի վերաբերյալ նյութեր ունենք Կոտայքի շրջանի Բաշ-գյուղի, Ջառի գյուղերի տներից, Ջրվեժի և Երևան քաղաքի շրջապատից։

8. **Փոքր ավազամուկ**—Песчанка малоазиатская—Meriones blackleri Thomas։ *Այս կրծողը Հայաստանում այնքան էլ լայն տարածում չունի. ըստ մեր դիտողությունների այս տեսակը տարածված է Զանգիբասարի, Բերիայի, Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում, Երևանի շրջակայքում, Կարմիր Բլուրում, Նորքում, Կոմսոմոլի պարկի ձախի շրջակայքում և մասամբ էլ Կոտայքի շրջանում, այստեղ այս կրծողին որսացինք Ջրվեժ գյուղի շրջակայքում։ Այս ավազամկան ստացիան խիստ տարբերվում է պարսկական ավազամկան ստացիայից։ Պարսկական ավազամուկը սիրում է քարքարոտ*

և նույնիսկ ժայռոտ, բայց կավային և կավավազային գրունտով ստացիաները, իսկ փոքրասիական ավազամկները գերադասում են քարերից զուրկ օշինդրային կիսանապատային վայրերը։ Նա չի բարձրանում նախալեռնային զոնայից և բնակվում է Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի հարավում ընկած դաշտերում։ Այս կրծողի բույնը համեմատաբար պարզ կառուցվածք ունի։ Արտաքին անցքերի չափերը լինում են 7×7, 6×7 սանտիմետր։ Ամբողջ բույնը բռնում է 1—3 քառ. մետր տարածություն և ունենում է 40—60 սմ խորություն։ Բները տեղավորված են լինում մեծ մասամբ բարձր տեղերում, փոսերի եզրերին, հին գերեզմանոցներում և ցամաքած առուների ափերին։ Ջրվեժ գյուղի հացահատիկային դաշտերում նրանք իրենց բները պատրաստել են արտերի մարգերի թմբերի վրա և դաշտերի շուրջը եղած փոսերի եզրերին։ Նրանք էլ ձագարամկների նման երբեմն ներսից բների անցքերը փակում են փուխր հողի խցանով։ Այդ խցանները շոգից ու ցրտից և արտաքին վտանգներից պաշտպանվելու համար են։ Այս ավազամուկը ձմեռային կամ ամառային քուն չի մտնում և տարվա ընթացքում տարբեր ակտիվություն է հանդես բերում. շատ ակտիվ է գարնանը, ամռանը և աշնանը, իսկ ձմեռը ավելի քիչ չափով։ Այդ են ապացուցում 1945—46 թ. մեր ձմեռային դիտողությունները. այն ժամանակ նկատել ենք նրանց ոտքերի հետքերը 15—20 սմ ձյան վրա։ Բացի այդ, —6° ցրտի ժամանակ դրված 10 թակարդներից 4-ում բռնվեցին։ Մենք դիտել ենք, որ ձմռանը և աշնանը սրանք ավելի ակտիվ են ցերեկը, իսկ գիշերը ավելի քիչ են դուրս ու ներս անում, իսկ գարնանը և ամռանը բացառապես ակտիվ են գիշերը, ցերեկը բոլորովին դուրս չեն գալիս։ Ըստ մեր դիտողությունների, փոքրասիական ավազամկները Հայաստանում ապրում են կիսանապատային զոնաներում, որոնց մեծ մասը յուրացվում են, որպես վարելահողեր ու այգիներ և այդ վայրերում ապրող կրծողները, բնական է, շարունակում են ապրել այդ նոր յուրացված հողերի չմշակված կտորներում, որոնք ընկած են մշակվող հողերի արանքներում։ Այդ տեղերում ավազամկները ուտում են այն վայրի և կուլտուրական բույսերը, որոնք աճում են այդ կենդանիների բների շրջապատում։ Այսպես, 1946 թ. հուլիսի 3-ին Ջրվեժի դաշտերում, փորած բներից մեկում կար 3 կգ 650 գ ցորեն. շատ բների մոտ թափված կար կապարի (Capparis spinosa) սերմերի թեփ. պարզ է, որ կապարի սերմերը ավազամկները կերել էին։ Մնացորդների մեջ կային նաև միջատների խետինային մասերը։ Այդ նյութերը

ապացուցում են, որ փոքրասիական ավազամուկը սնվում է ոչ միայն վայրի, այլև մշակովի բույսերով ու մասամբ էլ միջատներով։ Հաշվել ենք, որ մեկ ավազամուկը օրական ուտում է միջին թվով 3,24 գ հատիկ և 6,6 գ կանաչ խոտ։ Այս թվերը ցույց են տալիս, որ փոքրասիական ավազամուկը բնության մեջ գյուղատնտեսությանը հսկայական վնաս է պատճառում, ըստ որում թե դաշտավարությանը և թե անասնապահությանը։ Իսկ թե ինչքան, որ այս կրծողը վնասում է արոտավայրերին, այդ ապացուցում է Ջրվեժի դաշտերում նրա բներից հանած պաշարը, որը կազմված է հետևյալ բույսերից՝

1. Aegilopstriucialis L. 2. Vicia angustifolia Polh. 3. V. villosa Koth. 4. V. sativa L. 5. Medicago rigidula (L) Decr. 6. Capparis spinosa L.

Թվարկված բույսերը շատ թանկարժեք կեր են ընտանի կենդանիների և մեղվաբուծության համար կարևոր, հատկապես այն վայրերում, որտեղ տարածված են այդ ավազամկները։ Իսկ հիշյալ բույսերից կապարը շատ կարևոր սնունդ է հարավային շրջաններում ապրող աղվեսի համար, որը այդ վայրերում ոչնչացնում է նաև կրծողներին։ Ըստ մեր տվյալների Հայաստանում այս ավազամուկը տարեկան բազմանում է 2 անգամ՝ վաղ գարնանը և վաղ աշնանը, ըստ որում բազմացման շրջանները ձգձգված են, այդ պատճառով էլ այդ երկու շրջանների սահմանները դժվար է որոշել։ Ձագերի թիվը մեկ ծինում հասնում է մինչև 7-ի։ Ըստ մեր դիտողությունների՝ փոքրասիական ավազամուկը ապրում է զույգերով, իսկ ձագերը ցրվում են բավական ուշ, մնում են մոր հետ մինչև ծնվում են նորերը։ Ցրվելիս ձագերը շատ հեռու չեն գնում իրենց հին բներից. 10—12 մետր հեռավորության վրա փորում են նոր բներ, բայց գաղութներ չեն գոյացնում, ինչպես այդ մենք տեսնում ենք մյուս ավազամկների մոտ [10]։

9. **Պարսկական ավազամուկ**—Песчанка персидская—Meriones persicus Blan. *Ըստ գրականության տվյալների, այս ավազամուկը տարածված է Ղարաբաղի հարավ-արևմտյան նախալեռնային գոտում, Արաքսի հովտում մինչև Մեղրին, Երևանի շրջապատում և Արմենիում։ Ըստ մեր հավաքների, այս ավազամուկը Հայաստանում շատ լայն տարածում ունի. նա բնում է Միկոյանի և Ազիզբեկովի շրջանների կիսանապատային նախալեռնային գոտում, այսինքն նրա տարածման հյուսիսային կետը հասնում է մինչև Քարագլուխ գյուղը (1700 մ. ծ. մ. բ.), իսկ հարավայինը՝*

խաչիկ և Բարձրունի գյուղերը։ Այս տեղերում պարսկական ավազամուկը ապրում է համստերի և ձագարամկան հետ միևնույն ստացիայում։

Կոտայքի շրջանում նրա տարածումը Արզնիից հարավ-արևմուտք հասնում է մինչև Ջառ գյուղը (1700 մ ծ. մ. բ.), այդտեղ էլ նա ապրում է համստերի և սովորական դաշտամկան հետ նույն ստացիայում։ Նա տարածված է նաև Երևան քաղաքի շրջակայքում, Ջրվեժի, Ողջաբերդի, Գառնիի կիսանապատային և նախալեռնային տափաստաններում։ Հայաստանի պայմաններում այս ավազամուկը էկոլոգիորեն բավական ճկուն և շարժուն կենդանի է։

Օշինդրային կիսանապատից նա թափանցել է վայրի հացազգիներով հարուստ Կոտայքի և Վեդու շրջանների լեռնային տափաստանները, մշակովի դաշտերը։ Ըստ մեր դիտողությունների՝ շատ տեղերում նա թափանցել է նաև այգիները, ինչպես, օրինակ. Երևանի, Արենի, Խաչիկ գյուղերի այգիները, որտեղ նա ուտում է պտուղներ և կորիզներ։

Այս ավազամուկը մենակյաց է և ապրում է առանձնացած բներում, նույնիսկ շատ բազմացման տարիներին, երբ տվյալ հողամասում գոյանում են գաղութներ, դարձյալ յուրաքանչյուր բնի մեջ ապրում է մեկական կենդանի։ Բայց նկատելի է, որ մի քանի հարևան բների համար լինում է մեկ ընդհանուր պահեստ։ Այս տեսակի բների կուտակումները Ազիզբեկովի (Միկոյանի) դաշտերում բռնում են 10—15 քառ. մետր տարածություն, Ջրվեժի, Ողջաբերդի, Գառնիի, Ավանի դաշտերում բների մեծ կուտակումների չենք հանդիպել։ Իսկ եղած կուտակումները տարածվում են 2—3 քառ. մետրի վրա, հաճախ այդ տեղերում հանդիպում ենք մեկուսացած բների 1—2 գործող անցքերով, որոնց լայնությունը հասնում է 6—7 սանտիմետրի, իսկ անցուղիների երկարությունը՝ 140—175 սմ-ի, անկողնու տեղը լինում է 15—20 սմ, պահեստի երկարությունը 12—15 սմ, լայնությունը՝ 25—26 սմ։ Քարքարոտ տեղերում այս կրծողն իր բույնը պատրաստում է մեծ քարերի տակին. ըստ մեր դիտողությունների այս կրծողը մեծ պաշար է հավաքում. Ջրվեժի դաշտերում, փորած բներից մեկի մեջ գտել ենք 3.5 կգ ցորենի հատիկներ, իսկ մյուսում՝ 9 կգ, որից 800 գ հասկերով. ցորենի հետ միասին կային նաև այլևայլ բույսերի սերմեր, ինչպես, օրինակ՝ Vicia angustifolia 81 գ, V. villosa 180 գ, V. sativa 9 գ. Aeqilops triuncalis 333 գ։

Այս կրծողների պահեստները աչքի են ընկնում իրենց ամրությամբ և մաքրությամբ։

Ձմռանը և վաղ գարնանը այս կրծողները ուտում են իրենց պահեստած հատիկները, իսկ գարնանը, ամռանը և աշնանը սնվում են շրջապատի գրեթե բոլոր տեսակի բույսերի սերմերով։

Բարենպաստ պայմաններում միջին թվով մեկ պարսկական ավազամուկը օրական ուտում է 3.31 գ հատիկ և 5 գ կանաչ խոտ։ Դիտողությունները ցույց են տվել, որ այս կրծողները շատ լավ ուտում են թիթեռնածաղկավոր բույսեր և խաղողի տերևներ։ Պատահում է, որ ուտում են նաև միջատներ։ Սրանք նույնպես ակտիվ են գարնանը և ամռանը, մեծ մասամբ առավոտյան ժամը 6—9-ը և երեկոյան 18—20 ժամերին։ Ձմռանը ակտիվ են ցերեկվա ժամերին։ Սրանք էլ ձմեռային և ամառային քուն չեն մտնում։ Բազմանում են ոչ ինտենսիվ, ունենում են մինչև 7 ձագ։

10. Լեռնային կույր մուկ—Слепушонка горная—Ellobius lutescens Thom. Այս փոքրիկ կրծողի տարածման արիալը ձգվում է Զանգու գետի հարավային կողմից մինչև Աշտարակի, Ախտայի շրջանները, կիսանապատային գոտում, իսկ հարավ-արևելք՝ Արաքսի հովտում և Արփա գետի հովիտը մինչև Միկոյանի շրջանը։ Այս կրծողը Կոտայքի շրջանի կիսանապատային զոնայում շատ լայն տարածում ունի, նրա բիոլոգիան չի ուսումնասիրված և հայտնի չէ, թե ինչ դեր կարող է խաղալ անտառային շերտերում։ Նրա վերաբերյալ նյութեր ունենք Զովեժից, Ողջաբերդից։

11. Ջրային առնետ—Водяная крыса—Arvicola terrestris L.։ Նյութեր կան Երևանի շրջապատից, Գառնի ձորից և Ազատ գետի ափունքներից։ Սրա բիոլոգիան ևս չի ուսումնասիրված։

12. Ձյան դաշտամուկ—Снеговая полевка—Chionomys nivalis։ Մի քանի հատ բռնված են Նորքի շրջապատից։ Սրա բիոլոգիան նույնպես չի ուսումնասիրված։

13. Սովորական դաշտամուկ—Обыкновенная полевка — Microtus arvalis Pallas։ Այս կենդանու վերաբերյալ նյութեր հավաքել ենք Աղմաղանի լանջերից, Ջառ գյուղից և Ելիջա կոչվող բարձրությունից։

Ընդհանրապես Հայաստանում տարածված է բոլոր շրջաններում, ներառյալ նաև Արարատյան դաշտը։

Այս դաշտամկները հսկայական վնաս են պատճառում գյուղատնտեսությանը, առանձնապես նրանք վնասում են հացահատիկային կուլտուրաներին, բանջարանոցներին, իսկ վերջին տասնամյա-

կի ընթացքում մեր կողմից նկարագրված է Արարատյան դաշտում նաև ծառատեսակներին և տնկիներին նրանց տված զգալի վնասը։ 1942—43 թթ. Հոկտեմբերյանի շրջանի 3 և 4-րդ սովխոզներում դաշտամկները օղակաձև կրծելով 7—8 տարեկան ծառերի բները՝ նրանց զրկեցին կյանքից, պատճառելով հսկայական կորուստ այդ տնտեսություններին։ 1948—49 թթ. նույնը նկատվեց Երևանի շրջապատի նորատունկ այգիներում։ Սովորական դաշտամուկը մյուս կրծողների համեմատությամբ ամենից շատ բազմացող տեսակն է։ Նրա բազմացումը սկսվում է փետրվարի սկզբից և տարվա ընթացքում կարող է բազմանալ 6 անգամ, ամեն անգամ ունենալով 7—8 ձագ. իսկ ձագերը սկսում են վնասել 12 օրեկան հասակից. այս կրծողը շատ ճկուն է էկոլոգիական պայմանների նկատմամբ [9]։

Այս նկարագրություններից երևում է, որ Կոտայքի շրջանում տարածված վնասատու կրծողների բիոլոգիան ամբողջապես չենք ուսումնասիրել և միայն մասնակի դիտողություններ ունենք, իսկ հարցի ամբողջական ուսումնասիրությունը մնում է առաջիկա տարիների համար, կապված այս շրջանում կատարվող անտառատնկումների հետ։

Կարևոր է նաև այս շրջանում կրծողների դեմ պայքարի կազմակերպման հարցը, որով պետք է զբաղվել հենց այժմվանից, օգտագործելով պայքարի հայտնի և ընդունված մեթոդները, որ կիրառում են պայքարող կազմակերպությունները (Հողագործության մինիստրության ենթակա հիմնարկները և այլն)։

Կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Կոտայքի շրջանը յուրահատուկ է կրծողների ֆաունայի տեսակետից։

2. Ծառատեսակների համար ամենավտանգավոր կրծողներն են դաշտամկները, ավազամկները, համստերը և նապաստակը։

3. Մյուս տեսակներից մի քանիսն էլ (առնետ և այլն) կարող են վտանգավոր դառնալ ծառատեսակների համար։

ПОГОСЯН А. Р.

ГРЫЗУНЫ КОТАЙКСКОГО РАЙОНА АРМЯНСКОЙ ССР

РЕЗЮМЕ

Кафедра зоологии Биологического факультета Ереванского Государственного университета им. В. М. Молотова предприняла изучение различных групп вредителей территории полезащитных лесных насаждений Котайкского района Армянской ССР.

Настоящая работа посвящена изучению грызунов данного района.

По имеющимся у нас материалам в Котайкском районе распространено 14 видов грызунов, относящихся к 7 семействам и 10 родам.

Фауна грызунов Котайкского района отличается большим разнообразием, чем обусловливается степень их вреда для сельского хозяйства и в частности для лесных насаждений.

В данном сообщении даются предварительные результаты наших исследований. Углубленные же био-экологические наблюдения над грызунами будут продолжаться в дальнейшем и особенно после посадки лесных насаждений. В настоящее время весьма важными являются вопросы применения мер борьбы против указанных вредителей и проверка этих мер для отдельных видов в конкретных условиях Котайкского района.

Данные наших исследований позволяют сделать следующие, в известной мере предварительные, выводы:

1. Котайкский район характеризуется разнообразием фауны грызунов.

2. Для древесных пород наиболее вредными являются полевки, песчанка, хомяки и зайцы.

3. Из остальных видов грызунов древесные породы могут повреждаться крысами.

ЛИТЕРАТУРА

1. *Аргиропуло А. И.*, К распространению и экологии некоторых млекопитающих Армении, Зоологический сборник, вып. 1, Ереван. 1939.
2. *Бобринский Н. А.*, *Кузнецов Б. А.* и *Кузякин А. П.*, Определитель млекопитающих СССР, Москва, 1944.
3. *Виноградов Б. С.*, *Аргиропуло А. И.* и *Гептнер Б. Г.*, Грызуны Средней Азии, Москва, 1936.
4. *Виноградов Б. С.*, *Аргиропуло А. И.*, Определитель грызунов, Млекопитающие, Фауна СССР, Новая серия, № 29, Ленинград.
5. *Гептнер В. Г.*, Заметки о песчанках (Gerbillinae), обитающих между р. р. Уралом и Тереком, „Материалы к познанию фауны Нижнего Поволожья", вып. 1, Саратов, 1927.
6. *Даль С. К.*, Позвоночные животные Сарай - Булагского хребта, Зоологический сборник, III, Ереван, 1944.
7. *Флерев К. К.*, *Гуреев А. А.*, О млекопитающих, собранных Армянской паразитологической экспедицией в 1931 году, Труды СОПС АН СССР, Серия Закавказская 11, 1932.
8. *Шидловский М. В.*, Определитель грызунов Грузии и сопредельных стран, Тбилиси, 1941.
9. *Погосян А. Р.*, Об экологии обыкновенной полевки (Microtus arvalis Pallas) в условиях посевов зерновых культур Армянской ССР, Зоологический сборник, вып. V, Ереван, 1948.
10. *Погосян А. Р.*, Экология и биология песчанок в Армянской ССР, Зоологический сборник, вып. VI, Ереван, 1949.
11. *Погосян А. Р.*, Эколого - биологический очерк малоазиатского хомяка в условиях Армянской ССР, Известия Акад. наук Арм. ССР, т. IV, № 1, Ереван, 1951.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова
XXXIII 1951

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Բ. Ա.

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մարտունու շրջանը մեկն է Հայաստանի լեռնային այն շրջաններից, որի միջատների ուսումնասիրությամբ շատ քչերն են զբաղվել։ Այդ տեսակետից ներկա աշխատանքը, ընդհանուր գծերով, կարող է շրջանի էնտոմոֆաունայի գլխավոր կարգերի մասին գեթ մոտավոր պատկերացում տալ։

Աշխատանքի նյութը, հիմնականում, հավաքված է 1935 թվի ամռանը, բայց նա լրացվել է հետագայում նաև 1938 և 1939 թվերին։

Մեր շրջագայությունների ժամանակ ընդգրկել ենք ծովի մակերևույթից 1945—2258 մետր բարձրության վրա տեղադրըված գյուղերից 11-ը, որոնք զբաղվում են հացահատիկային, բանջարանոցային, խոտաբուծային մշակությամբ և մասամբ անասնապահությամբ։ Ավելի բարձրադիր վայրերը, ուր տիրապետող զբաղմունքն է անասնապահությունը, դուրս են մնացել մեր մարշրուտից։ Այդ բացը, սակայն միայն ուղղաթևերի գծով, լրացնում է Գ. Դ. Ավագյանը [2], իր 1939 թվին կատարած մանրամասն ուսումնասիրությամբ։ Նշված 11 գյուղերը, որոնցում մենք եղել և նյութ ենք հավաքել, հետևյալներն են՝

Աստղաձոր (Ալիղուլի)[1], Գյոզալդարա (Վերին Գյոզալդարա), Երանոս, Զոլաքար (Զոլախաչ), Լիճք (Գյոլ), Ծովինար (Քոլաղրան), Ղարանլուղ (Վերին Ղարանլուղ), Մարտունի (Ներքին Ղարանլուղ), Ներքին Գետաշեն (Ներքին Ադիաման), Վաղաշեն (Ավդալաղալու), Վարդենիկ (Ներքին Գյոզալդարա)։

Աշխատության մեջ նշված միջատներից մի մասը որոշված է մեր կողմից, որի ժամանակ շնորհակալ աջակցություն

---

1 *Փակագծերում տրվածները գյուղերի հին անուններն են։*

ենք ստացել Երևանի Պետական համալսարանի Նախկին դասախոս Լ. Ս. Բեկհովսեփյանից։ Անորոշ մնացած և մեր կողմից որոշված ամբողջ նյութը 1938 և 1939 թթ. որոշել և ստուգել են ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտի մի շարք մասնագետներ՝ Միրամ Է. Ֆ. ուղղաթևեր. Ֆիլիպև Ի. Ն. թեփուկաթևեր, Կիրիչենկո Ա. Ն. կիսակարծրաթևեր. Ռիխտեր Ա. Ա. և Լուկյանովիչ Ֆ. Կ. բզեզներ (բացի 8 տեսակից), Սկորիկով և Գուսակովսկի Վ. Վ. թաղանթաթևեր, բացի մրջյուններից, Կարավաև (Ուկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիա) մրջյուններ, Ակրամովսկի Ն. Ն. (Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիա) ճպուռներ։

ODONATA—ՃՊՌՒՌՆԵՐ

Ճպուռները շրջանում հանդիպել են սահմանափակ քանակով, այն էլ բացառապես լճափնյա հացահատիկային ցանքերում։

LIBELLULIDAE.

1.* *Sympetrum flaveolum austrinum* Akramovski[1]) Մարտունի 7. IX. 1935. 2։

2. * *Sympetrum fonscolombei* Selys. Վարդենիկ 3. IX. 1935. 1։

3.* *Sympetrum vulgatum flavum* Bartenef. Զոլաքար 2. IX. 1935. 1; Վարդենիկ 3. IX. 1935. 1։

SALTATORIA (Orthoptera)

ՑԱՏԿՈՂ ՈՒՂՂԱԹԵՎԵՐ

TETTIGONIIDAE (Ծղրիդներ)

4. * *Decticus verrucivorus* L. Գյոզալդարա 4. VII. 1935. 1; Ծակքար 7. VII. 1935. 2։ Մեր գտած երեք օրինակներն էլ եղել են երրորդ հասակի թրթուրներ։ Ըստ գրականության, այս տեսակը թրթուր և հասուն վիճակում վնասում է ցորենին, գարուն, եգիպտացորենին, կորեկին, ծխախոտին և մի շարք այլ կուլտուրաների (15:10)։ Շրջանի տեղական բնակիչների կարծիքով երբեմն զգալի վնաս է պատճառում (2:82)

---

[1] Մեկ աստղանիշով տրված են այն տեսակները, որոնք շրջանի համար առաջին անգամ նշված են ուրիշների կողմից, իսկ երկու աստղանիշանով՝ մեր կողմից 1941 թվին։

ACRIDIDAE (Մորեխներ)

Մորեխները շրջանում լայն տարածում ունեն. այդ ընտանիքի տարբեր ներկայացուցիչներին կարելի է հանդիպել ամենաբարձրադիր վայրերից սկսած մինչև լճափնյա հարթությունը՝ բուսական և հողային բազմազան պայմաններում։ Նկատելի է, որ մորեխներից Chorthippus ցեղը հատկապես կենտրոնացած է խիտ և բարձր բուսականությամբ հարուստ խոտհարքներում, մինչդեռ ընտանիքի մյուս ցեղերը՝ բուսականությամբ աղքատ քարքարոտ վայրերում, արոտավայրերում, ճանապարհների եզրերին և ցանքերի միջնակների մոլախոտերում։

5.* *Calliptamus italicus* L. Երանոս 10. VII. 1935. 11; Լիճք 11. VII. 1935. 7; Մարտունի 25. VII. 1935. 8, 7. IX. 1935. 6, 8. VIII. 1938. 8, 18. VII. 1939. 10; Զոլաքար 2. IX. 1935. 45, 10. VIII. 1938. 12; Վարդենիկ 3. IX. 1935. 21, 20. VII. 1939. 11; Ծովինար 6. IX. 1935. 6; Ղարանլուղ 12. VIII. 1938. 5։ Մեծ տարածում ունի շրջանի հացահատիկային ցանքերում։ Ընդհանրապես Հայաստանում, մորեխների մեջ, այս տեսակն իր վնասակարությամբ համարվում է առաջինը. առանձնապես մեծ չափերով է բազմանում մի շարք շրջաններում և մասսայական բազմացման տարիներին խոշոր վնաս է հասցնում գյուղատնտեսական ամենաբազմազան կուլտուրաներին։

6. *Stenobothrus* sp. Վարդենիկ 6. VII. 1935. 1♂; Ծովինար 6. VII. 1935. 1♂, 7. VII. 1935. 2♀. 6♂. խոտհարքներից։ Չորոշված այս տեսակից 9 հատ թողել էինք Լենինգրադ ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտում որոշելու համար։ Ըստ Է. Ֆ. Միրամի հաղորդման (1940 թ.) տեսակը նոր է՝ ենթակա նկարագրման։

7.* *Chorthippus apricarius* L. Գյոզալդարա 4. VII. 1935. 2; Մարտունի 12. VII. 1935. 3. հանդիպում է շրջանի խոտհարքներում, երբեմն միայն հացահատիկային ցանքերում։ Տնտեսական նշանակությունը մեզ մոտ անհայտ է, բայց Սիբիրի անտառատափաստանային և տափաստանային գոտու հյուսիսային մասում, մինչև Իրկուտսկ, վնասում է հացահատիկային կուլտուրաներին, հատկապես ուշ ցանվող վարսակին (15 : 17)։

8.* *Chorthippus biguttulus* L. Զոլաքար 2. IX. 1935. 2; Մարտունի 5. VIII. 1938. 1; Վարդենիկ 20. VII. 1939. 1. Շրջանում, որպես վնասատու, աննշան արժեք ունի. մեծ մա-

սամբ հանդիպում է արոտավայրերում. կուլտուրական մշակույթներում պատահական է։ Արևելյան Սիբիրում վնասում է հացահատիկային ցանքերին, հատկապես վարսակին (15 : 17)։

9.* *Chorthippus bicolor* Charp. Լիճք 11. VII. 1935. 1; Զոլաքար 2. IX. 1935. 3; Վարդենիկ 3. IX. 1935. 2; Մարտունի 5. VIII. 1938. 1։ Շրջանում, ընդհանրապես, հանդիպում է խոտհարքներում. աննշան չափով կտրում է խոտը։ Սովետական Միության տարբեր վայրերում վնասում է խոտհարքների և արոտավայրերի բուսականությանը և ոռոգվող դաշտերի ցանքերին (15 : 17)։

10.* *Chorthippus mollis* Charp. Զոլաքար 2. IX. 1935. 1; Վարդենիկ 3. IX. 1935. 1։ Շրջանում, որպես կուլտուրական մշակույթների վնասատու չի դիտված։ Սովորաբար, նա ապրում է մարգագետիններում և խոտհարքներում։

11.* *Chorthippus dorsatus* Zett. Գյոզալդարա 4. VII. 1935. 2; Ծովինար 6. VII. 1935. 2; Վարդենիկ 7. VII. 1935. 4, 20. VII. 1939. 4; Երանոս 10. VII. 1935. 4; Լիճք 11. VII. 1935. 7; Մարտունի 25. VII. 1935. 9, 7. IX. 1935. 8, 5. VIII. 1938. 3, 18. VII. 1939. 7; Ղարանլուղ 12. VIII. 1938. 5; Զոլաքար 2. IX. 1935. 5, 10. VIII. 1938. 3։ Շրջանի ամենավաղահաս մորեխներից է. տարածումը մեծ չափերի է հասնում լճափնյա խոտհարքներում, արոտավայրերում. երբեմն հանդիպում է նաև բլուրների վրա և հացահատիկային ցանքերի միջնակներում։ Հասուն վիճակում հանդիպել է հուլիսի սկզբներից մինչև սեպտեմբերի վերջը։ Աննշան չափով կտրում է խոտը. կուլտուրական մշակույթների նկատմամբ, որպես վնասատու, շրջանում նշանակություն չունի։ Ըստ գրականության տեղ-տեղ վնասում է մարգագետնային բուսականությանը (15 : 18)։

12.* *Aeolopus thalassinus* F. Զոլաքար 2. IX. 1935. 1; Վարդենիկ 3. IX. 1935.2; Մարտունի 7. IX. 1935. 5, 8.VIII. 1938. 2։ Խոտհարքներում կտրում է խոտը. այդ վայրերում կուլտուրական բույսերի նկատմամբ, անկասկած, հանդիսանում է պատահական վնասատու (15 : 23)։

13.* *Oedaleus decorus* Germ. Ծովինար 6. VII. 1935. 2; Երանոս 10. VII. 1935. 3; Լիճք 11. VII. 1935. 1; Զոլաքար 2. IX. 1935. 8, 9. VIII. 1938. 3; Վարդենիկ 3. IX. 1935. 5, 20. VII. 1939. 3; Մարտունի 7. IX. 1935. 3, 8. VIII. 1938. 7, 18. VII. 1939. 3; Ղարանլուղ 18. VIII. 1938. 2։

Տնտեսական զգալի նշանակություն չունի. ամենուրեք հանդիպում է հացահատիկային ցանքերում և քարքարոտ կիսանապատներում՝ իտալական մորեխի հետ միասին։ Ըստ գրականության վնասում է հացահատիկային, բանջարանոցային կուլտուրաներին, խոտհարքներին, արոտավայրերի և տափաստանային բույսերին, բայց շատ դեպքերում, հավանաբար, ինքնուրույն նշանակություն չունի (15:24)։

14. Oedipoda coerulescens L. Զոլաքար 2. IX. 1935. 2, 10. VIII. 1938. 1; Վարդենիկ 5. IX. 1935. 3; Ծովինար 5. IX. 1935. 3; Մարտունի 7. IX. 1935. 2; 7. VIII. 1938. 3; Ղարանլուղ 12. VIII. 1938. 2։ Հանդիպում է, մեծ մասամբ, քարքարոտ կիսանապատներում, հացահատիկային ցանքերի և ճանապարհների եզրերում* Sphingonotus coerulipes, coerulipes *տեսակի հետ. տնտեսական շոշափելի նշանակություն չունի։*

15. Sphingonotus coerulipes, coerulipes Uvarov. Զոլաքար 2. IX. 1935. 1, 10. VIII. 1938. 2; Վարդենիկ 3. IX 1935. 1; Ծովինար 6. IX. 1935. 1; Մարտունի 10. IX. 1935. 1, 7. VIII 1938. 2; Ղարանլուղ 12. VIII. 1938. 2։ Հանդիպել է ամենուրեք քարքարոտ վայրերում, հացահատիկային ցանքերի և ճանապարհների եզրերում նախորդ տեսակի հետ միասին։ Հավանաբար, շրջանում տնտեսական ինքնուրույն նշանակություն չունի։*

DERMAPTERA—ՄԱՇԿԱԹԵՎԵՐ ԿԱՄ ԱԿԱՆՋՄՏՈՒԿՆԵՐ

FORFICULIDAE

16. Forficula auricularia L. (Հասարակ ականջմտուկ) Մարտունի 5. VIII. 1938. 1; Ղարանլուղ 12. VIII. 1938. 2; Վարդենիկ 20. VII. 1939. 1։ Այստեղ վնասակարությունը պարզված չէ, բայց ըստ գրականության Սովետական Միության տարբեր վայրերի համար թե՛ թրթուր և թե՛ հասուն վիճակում նշված է որպես վնասատու հացահատիկային տարբեր կուլտուրաների, բանջարանոցային բույսերի, ծաղկաբուծության, պտղատու ծառերից, հատկապես խնձորենու և դեղձենու նկատմամբ (15:34)։

17. Anechura bipunctata F. Զոլաքար 1. VI. 1935. 1; Մարտունի 5. VI. 1935. 2; Լիճք 13. VI. 1935. 1։ Ամենուրեք հանդիպել է խոպան հողերում։

HEMIPTERA (HETEROPTERA)

ԿԻՍԱԿԱՐԾՐԱԹԵՎԵՐ ԿԱՄ ՄԼՈՒԿՆԵՐ

ANTHOCORIDAE

18. *Lyctocoris campestris Fabr.* Մարտունի 9. VI. 1935. 1։ Հայտնաբերված է հացահատիկային ցանքերում։

MIRIDAE (CAPSIDAE)

19. *Stenodema virens L.* Գյոզալդարա 4. VII. 1935. 1. արոտավայրից։

20. *Notostira tricostata Costa.* Վարդենիկ 3. IX. 1935. 1; Զոլաքար 9, VIII. 1938. 1. հացահատիկային ցանքերի եզրերից։

21. *Lygus pratensis L.* Զոլաքար 2—3. VI. 1935. 2; Մարտունի 6. VIII. 1938. 1. անմշակ հողերից։ Որոշ վայրերում վնասում է՝ ծծելով տարբեր բույսերի (բամբակ, արևածաղիկ, ճակնդեղ, խաչածաղիկներ, հացահատիկներ, սոյա, կանեփ, մանանեխ) մատաղ տերևներն ու բողբոջները (15:73)։

22. *Poeciloscytus vulneratus Panz.* Ղարանլուղ 29. VI. 1935. 1. հացահատիկային ցանքից, Մարտունի 12. VII. 1935. 1. արոտավայրից։ Վնասում է դաշտային և բանջարանոցային շատ կուլտուրաների՝ կորեկ, գարնանացան գարի, բամբակ, ճակընդեղ, գազար, լոբի և այլն (15:74)։

23. *Deraeocoris scutellaris* (Fabr.) *var. morio.* Գյոզալդարա 4. VII. 1935. 1. խոտհարքից։

NABIDAE

24. *Reduviolus ferus L.* Զոլաքար 7. VI. 1935. 1. արոտավայրից։

PYRRHOCORIDAE

25. *Pyrrhocoris apterus L.* Զոլաքար 31. V. 1935. 1; Ղարանլուղ 25. VI. 1935. 1; Գյոզալդարա 4. VII. 1935. 4; Լիճք 13. VII. 1935. 1; Վարդենիկ 3. IX. 1935. 1; Մարտունի 5. VIII. 1938. 2. ամենուրեք՝ արոտավայրերից և հացահատիկային ցանքերի եզրերից։ Վնասում է բանջարանոցային կուլտուրաների ծիլերին (15:72)։

MYODOCHIDAE (*Lygaeidae*)

26. *Spilostethus* (Lygaeus) *eguestris L. Զոլաքար 3.* VI. *1935. 3; Վարդենիկ 3.* IX. *1935. 2; Ղարանլուղ 12.* VIII. *1938. 2. հացահատիկային ցանքերի եզրերից։ Վնասում է մանանեխի տերևներին (10 : 72)։*

27. *Heterogaster cathariae Geoff. Երանոս 12.* VI. *1935. 2. մարգագետնից; Ղարանլուղ 26.* VI. *1935. 1. ցանքերի եզրից։*

28. *Trapezonotus arenarius L. Զոլաքար 2.* VI. *1935. 1. անմշակ հողամասից։*

29. *Aphanus guadratus Fabr. Երանոս 11.* VI. *1935. 2; Մարտունի 30.* VI. *1935. 1. հացահատիկային ցանքերի եզրերից։*

30. *Aphanus pini L. Ղարանլուղ 29.* VI. *1935. 1; Ծովինար 7.* VII. *1935. 1. արոտավայրերից։*

COREIDAE

31. *Liorhyssus hyalinus Fabr. Զոլաքար 7.* VI. *1935. 1; Մարտունի 26.* VI. *1935. 1; Ղարանլուղ 29.* VI. *1935. 2։ Ամենուրեք հանդիպել է խոտհարքներում։ Վնասում է բամբակին, Հյուսիսային Կովկասում՝ կանեփին (15 :72)։*

32. *Mesocerus marginatus L. Զոլաքար 3.* VI. *1935. 1; Մարտունի 5.* VI. *1935. 3, 5.* VIII. *1938. 2; Ղարանլուղ 29.* VI. *1935. 3. միշտ հացահատիկային ցանքերից։ Գրականության համաձայն, տարբեր վայրերում վնասում է ճակնդեղին, թրթնջուկին* (щавель), *մոշին, մորուն, Ֆինլանդիայում՝ խնձորին (15 : 72)։*

33. *Coreus disciger Kol. Երանոս 13.* VI. *1935. 2; Զոլաքար 2.* IX. *1935. 1. հացահատիկային ցանքերից։*

34. *Coriomeris denticulatus Goeze* (Scop.) *Զոլաքար 11.* VI. *1935. 1. խոտհարքից։*

PENTATOMIDAE (*Հնգատներ*)

35. *Sciocoris distinctus Fieb. Մարտունի 5.* VI. *1935. 1. խոտհարքից։*

36. *Carpocoris fuscispinus Boh. Մարտունի 9.* VI. *1935. 2; Զոլաքար 11.* VI. *1935. 3, 10.* VIII. *1938. 2; Երանոս 12.* VI. *1935. 1; Վարդենիկ 3.* IX. *1935. 2։ Ամենուրեք հանդիպել է*

հացահատիկային ցանքերում։ Ամուրի շրջանում աննշան վնաս պատճառում է սոյային (15:69)։

37. *Carpocoris lunulatus* Goeze. Զոլաքար 2. VI. 1935. 3. անմշակ հողերից։

38. *Eurydema oleraceum* L. Մարտունի 7. VI. 1935. 1. մարգագետնից։ Գրականությունից հայտնի է որպես կուլտուրական խաչածաղիկների վնասատու (15:71)։

THYREOCORIDAE

39. *Cydnus aterrimus* Forst. Վարդենիկ 3. IX. 1935. 1. հացահատիկային ցանքից։

40. *Sehirus morio* L. Զոլաքար 3. VI. 1935. 1. կորընգանի ցանքից։

COLEOPTERA—ԿԱՐԾՐԱԹԵՎԵՐ ԿԱՄ ԲԶԵԶՆԵՐ

CARABIDAE (Գնայուն բզեզներ)

41. *Harpalus aeneus* F. Զոլաքար 31. V 1935. 2; Մարտունի 5. VI. 1935. 1. հացահատիկային ցանքերից։ Այս բզեզի պատճառած վնասը նշված է միայն մորու և ասեղնատերև ծառերի սերմերի համար (15:273)։

HISTERIDAE

42. *Chalcionellus decemstriatus* Rossi. Վարդենիկ 7. VII. 1935. 1։

43. *Hister uncinatus* Ill. Զոլաքար 2. VI. 1935. 1; Ղարանլուղ 29. VI. 1935. 1. մարգագետնից։

SCARABAEIDAE

44. *Gymnopleurus flagellatus*. Ղարանլուղ 4. VII. 1935. 3; Վարդենիկ 5. VII. 1935. 3; Երանոս 10. VII. 1935. 6; Լիճք 11. VII. 1935. 4; Մարտունի 6. VIII. 1938. 5.; Զոլաքար 9. VIII. 1938. 5։ Հանդիպում է ամենուրեք, հատկապես արոտավայրերում և այն ճանապարհների եզրերում, որտեղ եղջյուրավոր անասուններ շատ են երթևեկում։

45. *Blitopertha lineolata* Fisch. Մարտունի 9. VI. 1935. 3, 18. VII. 1938. 1; Երանոս 12. VI. 1935. 2; Ղարանլուղ

29. VI. 1935. 2; Ծովինար 6. VII. 1935. 2; Լիճք 11. VII. 1935. 1։ Շատ տարածված է. միշտ հանդիպել է ծաղիկների փոշանոթների վրա։ Հասունը երբեմն կրծում է լոբու տերևները (15 : 145)։

46. *Epicometis hirta* Poda. Աստղաձոր 1. VI. 1935. 1։ Զոլաքար 2. VI. 1935. 4; Մարտունի 5. VI. 1935. 2, 8. VIII. 1938. 2; Գյոզալդարա 4. VII. 1935. 2. ամենուրեք եղել է ծաղիկների վրա։ Բզեզը վնասում է պտղատու տարբեր ծառերի ծաղիկներին, խաղողի վազին, հացահատիկներին (մեծ մասամբ ցորեն, հաճար), թիթեռնածաղիկ, խաչածաղիկ և այլ բույսերի (15 : 325)։

47. *Potosia hungarica* Hbst. Մարտունի 7. VI. 1935. 4, 5. VIII. 1938. 5; Լիճք 12. VI. 1935. 3; Երանոս 13. VI. 1935. 6։ Միշտ հանդիպել է Onopordon sp. բույսի վրա։ Հասուն ձևը կրծում է արևածաղկի և խնձիլի (ревень) տերևներն ու ծաղկափթությունը (15 : 148)։

STAPHYLINIDAE (Կարճաթևեր)

48. *Paederus* sp. Զոլաքար 7. VI. 1935. 1. լճափի խոտհարքից։

ELATERIDAE (Դյուրադարձներ)

49. *Selatosomus latus* F. Զոլաքար 3. VI. 1935. 2. Լճափի կորնգանի ցանքից։ Թրթուրը վնասում է հաճարի, գարու, ցորենի, ծխախոտի, ճակնդեղի, կաղամբի, արևածաղկի և դաշտային ու բանջարանոցային ուրիշ այլ բույսերի ընդհողյա մասերին (15 : 83)։

COCCINELLIDAE (Զատկեբզեզներ)

50. *Adonia variegata* Goeze. Վարդենիկ 3. IX. 1935. 1. խոտհարքից։

51. *Adalia bipunctata* L. Ղարանլուղ 29. VI. 1935. 1; Մարտունի 18. VII. 1939. 1. մարգագետիններից։

52. *Coccinella septempunctata* L. (Զատիկ) Զոլաքար 3. VI. 1935. 3; Մարտունի 7. VI. 1935. 6, 5. VIII. 1938. 2; Երանոս 13. VI. 1935. 2; Ղարանլուղ 25. VI. 1935. 3, 12. VIII. 1938. 5; Գյոզալդարա 4. VII. 1935. 4։ Հանդիպում է բազմազան կուլտուրաների վրա։

MELOIDAE

53. *Meloë proscarabaeus* L. Մարտունի 5. VIII. 1938. 1։ Բզեզը երբեմն կրծում է ձավնդեղի տերևները (15 : 91)։

54. *Mylabris quadripunctata* L. Զոլաքար 3. VI. 1935. 2, 10. VIII. 1938. 1; Մարտունի 30. VI. 1935. 3, 18. VII. 1938. 2; Ծովինար 5. VII. 1935. 3; Վարդենիկ 7. VII. 1935. 4, 20. VII. 1938. 2; Երանոս 10. VII. 1935. 2։ Մեծ տարածում ունի խոտհարքներում և մասամբ հացահատիկային ցանքերում։ Բզեզը վնասում է մանանեխի, բանջարեղենի, սոյայի և հացահատիկների տերևներին ու ծաղիկներին (15 : 89)։

55. *Lydus collaris* F. Զոլաքար 2. VI. 1935. 1; Երանոս 13. VI. 1935. 3; Մարտունի 30. VI. 1935. 2; Ծովինար 7. VII. 1935. 2։ Ամենուրեք՝ մարգագետիններում և հացահատիկային ցանքերում։

TENEBRIONIDAE (*Սևամարմիններ*)

56. *Tentyria tessulata* Աստղաձոր 1. VI. 1935. 2; Զոլաքար 2. VI. 1935. 2, 18. VII. 1938. 1; Երանոս 12. VI. 1935. 1; Ծովինար 6. VII. 1935. 2; Մարտունի 6. VIII. 1938. 2։ Շատ տարածված է և միշտ գտնվել է խոպան հողերում։

57. *Opatrum sabulosum* L. Աստղաձոր 1. VI. 1935. 1; Ղարանլուղ 29. VI. 1935. 2; Մարտունի 18. VII. 1939. 2։ Շատ է պատահում հացահատիկային ցանքերի եզրերում։ Թրթուրն ու հասունը կրծում են ցանած սերմերը, հացահատիկի, արևածաղկի, ծխախոտի, հնդկացորենի, թիթեռնածաղիկների և ուրիշ այլ բույսերի ծիլերը. ինչպես նաև խաղողի վազի, փշատերև ծառերի բողբոջներն ու տերևները (15 : 95)։

58. *Gonocephalum pusillum* Fabr. Աստղաձոր 1. VI. 1935. 3; Զոլաքար 2. VI. 1935. 1; Ծովինար 6. VII. 1935. 2։ Լայն տարածում ունի. միշտ հանդիպել է անմշակ հողերում, երբեմն միայն բանջարանոցներում։ Թրթուրի վնասը նշված է բանջարանոցային, տեխնիկական, դաշտային կուլտուրաների և խաղողի վազի համար (15: 95)։

CHRYSOMELIDAE (*Տերևակերներ*)

59. *Clytra* sp. Մարտունի 30. VI. 1935. 1; Զոլաքար 2. VII. 1935. 2։ Հաճախ է պատահում ցանքերում և խոտհարքներում։

BRUCHIDAE *(Ընդակերներ)*

*60.*** *Bruchus incurvatus Mot.* Ղարանլուղ *26.* VI. *1935.* 2; Մարտունի *12.* VII. *1935. 2, 23.* VIII—*4.* IX. *1938. 252*; Զոլաքար *10.* IX—*10.* X. *1938. 23*։ Զարգանում է Vicia sativa, V. angustifolia, V. pannonica-ի սերմերում. ունի տնտեսական զգալի նշանակություն *(4:331)*։

*61.*** *Bruchus lugubris Fahr.* Մարտունի *23.* VIII.—*4.* IX. *1938. 19*; Զոլաքար *30.* IX—*4.* X. *1938. 28*։ Զարգանում է Vicia sativa, V. pannonica, V. sp. (variabilis ?)-ի սերմերում *(4:337)*։

*62.*** *Bruchus nubilus Boh.* Զոլաքար *2.* IX. *1938. 4.* Vicia sativa-ի սերմերից։ Գրականության տվյալներով տեսակը, ընդհանրապես, զարգանում է Vicia sativa, V. sepium, V. angustifolia-ի սերմերում *(4:338)*։

*63.*** *Bruchus transcaucasicus Luk.* Մարտունի *5—8.* VIII. *1938. 9*; Զոլաքար *9—10.* VIII. *1938. 3.* բոլոր օրինակները էլ եղել են Vicia sativa-ի ցանքերից։ Ունի տնտեսական զգալի նշանակություն *(4:343)*։

*64.*** *Bruchidius femoralis (Motsch.) Gyll.* Զոլաքար *9—10.* VIII. *1938. 3*։

*65.*** *Bruchidius gilvus Gyll.* Մարտունի *15.* X. *1938. 8, 18.* VII. *1939. 3*։ Գրականության մեջ հայտնի է որպես կուլտուրական կորնգանի վնասատու, իսկ մեր տվյալներով Մարտունիում զարգանում է Onobrychis vaginalis-ի հաշվին *(4:348)*։

*66.*** *Bruchidius konigi Schil.* Երևան *12.* VI. *1935. 4*; Մարտունի *5—7.* VIII. *1938. 23, 7—15.* V. *1939. 12, 18.* VII. *1939. 90*; Զոլաքար *9—10.* VIII. *1938. 4*; Ղարանլուղ *12.* VIII. *1938. 5*։ Հասուն միջատը միշտ հանդիպել է մեզ կորնգանի ցանքերի եզրերում և միջնակներում Cichorium intybus, Centaurea depressa, Cerinthe minor և Onobrychis vaginalis բույսերի վրա. դրանցից առավել դրավիչը նրա համար հանդիսանում է Onobrychis vaginalis-ը, որի սերմերում էլ զարգանում է նրա թրթուրը *(4:349)*։

*67.*** *Bruchidius olivaceus Germ.* Զոլաքար *9—10.* VIII. *1938. 2, 8.* VI. *1939. 12*; Մարտունի *18.* VII. *1939. 22*։ Զարգանում է Onobrychis antasiatica-ի սերմերում *(4:352)*։

*68.*** *Bruchidius viresceus Boh.* ***Մարտունի 5—7.*** VIII. ***1938. 80, 20.*** IX. ***1938. 35, 7.*** VI. ***1939. 4, 18.*** VII. ***1939. 15; Ղարանլուղ 12.*** VIII. ***1938. 5; Վարդենիկ 20.*** VII. ***1939. 8։ Զարգանում է*** Onobrychis antasiatica, O. viciaefolia, O. vaginalis-***ի սերմերում և հանդիսանում է Հայաստանի մի քանի շրջանների կորնգանի սերմնաբուծության վնասատու (4: 357)։***

*69.*** *Euspermophagus sericeus Geoffr.* ***Զոլաքար 9—10.*** VIII. ***1938. 2։ Հասունը սնվում է վարդածաղիկ, բարդածաղիկ, խաչածաղիկ, թիթեռնածաղիկ, հովանոցածաղիկ, պատատուկազգի և ուրիշ ընտանիքների պատկանող բազմազան բույսերի ծաղիկներով. իսկ զարգացումը, Հայաստանում, հայտնի է միայն*** Convolvulus arvensis-***ի սերմերում (4 :327).***

CURCULIONIDAE (*Երկարակնճիթներ*)

70. Eusomus sp. ***Զոլաքար 2.*** VI. ***1935. 2; Մարտունի 9.*** VI. ***1935. 3; Երանոս 12.*** VI. ***1935. 4; Վարդենիկ 7.*** VII. ***1935. 2։ Հանդիպել է հացահատիկային ցանքերում, խոտհարքներում և բանջարանոցներում։***

71. Phytonomus variabilis Hbst. ***Զոլաքար 3.*** VI. ***1935. 2; Լիճք 12.*** VI. ***1935. 1; Երանոս 13.*** VI. ***1935. 2։ Բզեզը, հատկապես թրթուրը, առվույտի տերևների առաջնակարգ վնասատու է։***

72. Cionus sp. ***Լիճք 12.*** VI. ***1935. 1; Երանոս 13.*** VI. ***1935. 2։***

HYMENOPTERA – ԹԱՂԱՆԹԱԹԵՎԵՐ

CEPHIDAE

73. Cephus haemorrhoidalis F. ***Զոլաքար 11.*** VI. ***1935. 2♀. 1♂. խոտհարքից։***

TENTHREDINIDAE

74. Tenthredo solitaria Scop. ***Ղարանլուղ 26.*** VI. ***1935. 1. արոտավայրից։ Թրթուրը լինում է*** Corylus avellana L. ***բույսի վրա. բազմակեր է. աննշան վնաս պատճառում է տերևներին (15:335)։***

75. Macrophya crassula Kl. ***Մարտունի 5.*** VI. ***1935. 1♀. խոտհարքից։***

76. *Dolerus niger* L. Ջոլաքար 3. VI. 1935. 1♀. ցորենի ցանքի միջնակից։

77. *Dolerus pratensis* L. Ջոլաքար 2. VI. 1935. 1♂. անմշակ հողերից; Մարտունի 12. VIII. 1935. 1♀. մարգագետնից; Ղարանլուղ 14. VII. 1935. 1♀. խոտհարքից։ Հայտնի է, որ թրթուրը լինում է հացազգիների վրա. Ուկրաինայում աննշան վնաս նկատված է ցորենի համար (15: 185)։

78. *Dolerus haematodes* Schr. Ջոլաքար 2. VI. 1935. 1♀; Մարտունի 5. VI. 1935. 1♀ արոտավայրերից։ Թրթուրը լինում է Jancus, Scirpus բույսերի վրա. Անգլիայում աննշան վնաս դիտված է ցորենի և վարսակի նկատմամբ (15: 184)։

79. *Dolerus gonager* F. Ջոլաքար 3. VI. 1935. 2; Մարտունի 5. VI. 1935. 1. անմշակ հողերից և կորնգանի ցանքից։ Թրթուրն աննշան վնաս է պատճառում տարբեր հացազգիների (15: 184)։

80. *Athalia glabricollis* Thoms. Ջոլաքար 7. VI. 1935. 1♀; Մարտունի 7. VI. 1935. 1♀. 1♂. մարգագետիններից։ Բեսարաբիայում թրթուրը նշված է որպես վնասատու Iris florentina L. (касатик) բույսի համար, իսկ ավելի հին ցուցումներով՝ նաև խաչածաղիկների (15: 185)։

81. *Athalia lineolata* Lep. Գյոզալդարա 4. VII. 1935. 1♂. մարգագետնից։

82. *Athalia colibri* Chirst. Ջոլաքար 7. VI. 1935. 2♂. խոտհարքից։ Այս աղոցող թաղանթաթևի թրթուրը վնասում է խաչածաղիկ կուլտուրաների (կաղամբ, մանանեխ, գոնգեղ), տերևներին (15: 185)։

ICHNEUMONIDAE (Հեծյալներ)

83. *Paniscus gracilipes* Thoms. Վարդենիկ 7. VII. 1935. 2; Ծովինար 7. VII. 1935. 1; Մարտունի 12. VII. 1935. 3. Շատ է պատահել խոտհարքներում։ Հանդիսանում է բազմակեր պարազիտ, հատկապես թիթեռների, թաղանթաթևերից էլ՝ աղոցողների համար։

MUTILLIDAE

84. *Dasylabris maura* L. Ղարանլուղ 29. VI. 1935. 1♀. արոտավայրից։

PSAMMOCHARIDAE

85. Anoplius dispar Dahlb. Երանոս 13. VI. 1935. 1♂. լճափից։

SPHECIDAE

86. Ammophila hirsuta Sc. var. mervensis Rad. Մարտունի 5—9. VI. 1935. 4; Երանոս 12. VI. 1935. 1։ Հանդիպել է ցանքերի մեջ, ճանապարհների վրա և անմշակ հողերում։

87. Ammophila affinis Kby. Լիճք. 14. VI. 1935. 1♂. լճափից։

88. Ammophila marawitzi And. Երանոս 13. VI. 1935. 1♂. լճափից։

APIDAE (Մեղուներ)

89. Halictus zonulus Sm. Երանոս 10. VII. 1935. 1♀. առվույտի ցանքից։

90. Halictus subauratus Rossi. Ծովինար 7. VII. 1935. 1. խոտհարքից։

1. Halictus xanthopus Kby. Լիճք 14. VI. 1935. 1♀. լճափի արոտավայրից։

92. Sphecodes gibbus L. Զոլաքար 7. VI. 1935. 1♀; Մարտունի 7. VI. 1935. 1♂. խոտհարքներից։

93. Andrena ovatula Kby. Զոլաքար 7. VI. 1935. 1♂. խոտհարքից։

94. Andrena flavipes Panz. Զոլաքար 2. VI. 1935. 2♂. մարգագետնից; Մարտունի 7. VI. 1935. 1♂. խոտհարքից։

95. Xylocopa valga Gerst. Լիճք 14. VI. 1935. 1♂. լճափի արոտավայրից։

96. Apis remipes Pall. Մարտունի 7. VI. 1935. 1. արոտավայրից.

97. Apis sp. Մարտունի 7. VI. 1935. 1. խոտհարքից։

98. Nomada furva Panz. Ղարանլուղ 26. VI. 1935. 1♂. մարգագետնից։

99. Agribombus daghestanicus Rad. Զոլաքար 2. VI. 1935. 2. մարգագետնից։

100. Agribombus laesus F. Mor. Վարդենիկ 6. VI. 1935. 1; Երանոս 13. VI. 1935. 1; Լիճք 15. VI. 1935. 1; 11. VII. 1935.

1; Ղարանլուղ 14. VII. 1935. 2։ Ամենուրեք հանդիպել է խոտհարքներում, ծաղիկների վրա։

101. *Agribombus simulatilis* ? Rad. Երանոս 13. VI. 1935. 1. լճափի արոտավայրից։

102. *Pomibombus alboluteus* Pall. Զոլաքար 2. VI. 1935. 2. անմշակ հողից։

103. *Sibiricibombus niveatus* Kriechb.? Երանոս 12. VI. 1935. 1. ցորենի ցանքի եզրից։

FORMICIDAE (*Մրջյուններ*)

104. *Messor structor striaticeps* And. Ղարանլուղ 14. VI. 1935. 3; Վարդենիկ 3. IX. 1935. 3. հացահատիկային ցանքերից։

105. *Tetramorium caespitum ferox* Rur. Երանոս 13. VI. 1935. 2. հացահատիկային ցանքերից։ Գրականությունը վնասի դեպքեր չի հիշատակում, բայց ըստ տեղացիների և տեղում աշխատող մասնագետների՝ խիստ վնաս է պատճառում հացահատիկներից հատկապես ցորենին, այն կրծելով կաթնային և մոմային շրջանում. այդ դրությունը լավ նկատված է Մարտունի գյուղում։ Նախնական այդ հաղորդումն ստուգման կարիք ունի։ Ըստ Կարավաևի, նշված մրջյունը համարվում է հազվադեպ տեսակ։ Մեր նյութից մի օրինակը որոշողի (Կարավաևի) խնդրանոք պահվել է Ուկ. Գիտ. ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտի Թանգարանում, Խարկովում։

106. *Tetramorium caespitum* L. Երանոս 13. VI. 1935. 1; Ղարանլուղ 14. VII. 1935. 1։ Մեր կողմից վնասակարությունը չի պարզված, բայց գրականության մեջ տեղեկություններ կան, որ այս տեսակը տարբեր վայրերում սնվում է գետնանուշի (apaxuc) հողում եղած սերմերով, կամ կրծում ծխախոտի, շաքարի ճակնդեղի, գազարի, կարտոֆիլի, կաղամբի և ուրիշների արմատները։ Հաճախ էլ մտնում է մարդկանց բնակարանները և փչացնում քաղցրեղենն ու միրգը (15:189, 426)։

107. *Cataglyphis cursor aenescens* Nyl. Զոլաքար 2. VI. 1935. 3, 2. IX. 1935. 2; Ծովինար 6. VI. 1935. 3; Ղարանլուղ 26. VI. 1935. 5; Վարդենիկ 3. IX. 1935. 4։ Ամենուրեք հանդիպել է անմշակ հողերում, մարգագետիններում և հացահատիկային ցանքերում։

108. *Formica rufibarbis* Fabr. Զոլաքար 2. VI. 1935. 4; Ղարանլուղ 25. VI. 1935. 2; Գյոզալդարա 4. VII. 1935. 4; Ծովինար 6. VII. 1935. 3; Լիճք 11. VII. 1935. 5; Վարդենիկ 3. IX. 1935. 3; Հանդիպել է անմշակ հողերում և հացահատիկային ցանքերում։ Եվրոպայում անների պատահական բնակիչ է (15:424)։

LEPIDOPTERA—ԹԵՓՈՒԿԱԹԵՎԵՐ ԿԱՄ ԹԻԹԵՌՆԵՐ

AEGERIIDAE (SESIIDAE)

109. *Sesia* sp. Երանոս 12. VI. 1935. 1; Մարտունի 25. VII. 1935. 1. հացահատիկային ցանքերի եզրերից։

PYRALIDIDAE

110. *Crambus craterellus* Sc. Ծովինար 7. VII. 1935. 2; Երանոս 10. VII. 1935. 1. հացահատիկային ցանքերից. ցերեկ ժամանակ թռչում է ցանքում հասկակալած մի ցողունից մյուսի վրա։

111. *Aglossa pinguinalis* L. Զոլաքար 8. VII. 1935. 2. բնակարանից, գիշեր ժամանակ։

112. *Pyrausta* sp. Զոլաքար 24. VI. 1935. 1. բնակարանից, գիշեր ժամանակ։

HESPERIIDAE

113. *Hesperia* sp. Զոլաքար 7. VI. 1935. 2. խոտհարքից։

PAPILIONIDAE

114. *Papilio machaon* L. Երանոս 14. VI. 1935. 1; Լիճք 11. VII. 1935. 1. բանջարանոցներից։ Թրթուրն աննշան չափով վնասում է բանջարանոցային հովանոցածաղիկ բույսերի տերևներին, ծաղիկներին և խակ պտուղներին (8:2, 15:201)։

PIERIDAE

115. *Pieris brassicae* L. (Կաղամբի ճերմակաթիթեռ) Զոլաքար 7. VI. 1935. 4, 24. VI. 1935. 2, 9. VIII. 1938. 3; Մարտունի 9. VI. 1935. 5, 25. VII. 1935. 3, 18. VII. 1939. 4; Երանոս 12. VI. 1935. 5; Լիճք 14. VI. 1935. 4; Ղարանլուղ 29. VI. 1935. 3; Վարդենիկ 6. VII. 1935. 3, 20. VII. 1939. 2; Ծովինար 7. VII. 1935. 4. Հանրածանոթ և լայն տարա-

ծում ունեցող վնասատու է։ Մինչև բանջարանոցային խաչածաղիկ կուլտուրաների զարգացումը թիթեռը թռչում է խոտհարքներում և արոտավայրերում, որից հետո մասսայաբար անցնում է բանջարանոցները։

116. *Pieris rapae* L. (Շաղգամի ճերմակաթիթեռ) Զոլաքար 7. VI. 1935. 1, 2. IX. 1935. 1, 10. VIII. 1938. 2; Երանոս 13. VI. 1935. 3; Վարդենիկ 3. IX. 1935. 2, 20. VII. 1939. 1; Մարտունի 7. IX. 1935. 1, 6. VIII. 1938. 2, 18. VII. 1939. 2։ Ամենուրեք հանդիպել է բանջարանոցներում և արոտավայրերում. Նախորդի համեմատությամբ համարվում է ավելի պակաս վնասատու՝ քանակապես քիչ լինելու պատճառով։ Թրթուրը սնվում է խաչածաղիկ կուլտուրական բույսերի վերերկրյա մասերով (8:5, 15:201)։

117. *Pieris daplidicae* L. (Գոնգեղի ճերմակաթիթեռ) Զոլաքար 7. VI. 1935. 2; Մարտունի 9. VI. 1935. 1, 7. VIII. 1938. 1; Երանոս 12. VI. 1935. 1; Ղարանլուղ 26. VI. 1935. 1, 29. VI. 1935. 3; Գյոզալդարա 4. VII. 1935. 1; Ծովինար 7. VII. 1935. 1; Լիճք 11. VII. 1935. 1; Վարդենիկ 20. VII. 1939. 2։ Միշտ հանդիպել է բանջարանոցներում, խոտհարքներում և արոտավայրերում, ամբողջ ամռան ընթացքում։ Նախորդ երկու տեսակների համեմատությամբ տնտեսական զգալի վնաս չի պատճառում։ Թրթուրը սնվում է նույն բույսերով, ինչ նախորդ երկու տեսակները (15:202)։

118. *Colias erate* Esp. Զոլաքար 2. IX. 1935. 1; Մարտունի 7. IX. 1935. 1. հացահատիկային ցանքերից։

119. *Colias crocea* Fourcr. (*C. edusa* F.) Մարտունի 9. VI. 1935. 2; Երանոս 13. VI. 1935. 1; Ղարանլուղ 26. VI. 1935. 1; Զոլաքար 15. VII. 1935. 2։ Բավական տարածված է. միշտ հանդիպել է հացահատիկային ցանքերում, Colias erate-ի հետ թռչելիս։ Հազվադեպ վնասում է երեքնուկին և առվույտին (15:202), բայց նա լինում է նաև Cytisus, Onobrychis, Lotus, Vicia թիթեռնածաղիկ բույսերի վրա (8:9)։

LYCAENIDAE

120. *Chrysophanus dispar rutilus* Wern. Երանոս 13. VI. 1935. 1. խոտհարքից։ Այս թիթեռն, ըստ Гофман-ի և Борецкус-ի համարվում է խիստ հազվադեպ, իսկ որոշ վայրերում (Անգլիա-

յում չի դիտված 1848 թվից) արդեն սերատված Polyommatus dispar Hew-ի փոքր տարատեսակը, որը դեռևս հանդիպում է Ֆրանսիայում, հարավային Գերմանիայում, Իտալիայում և Կովկասում (7 : 98, 8 : 12)։

121. Lycaena icarus Rott. Զոլաքար 7. VI. 1935. 3, 2. IX. 1935. 2; Մարտունի 9. VI. 1935. 2, 25. VII. 1935. 1, 18. VII. 1939. 2; Երանոս 13. VI. 1935.3; Լիճք 15. VI. 1935. 2; Ղարանլուղ 25. VI. 1935. 1; Գյոզալդարա 4. VI. 1935. 2; Վարդենիկ 5. VII. 1935. 2; Ծովինար 7. VII. 1935. 3։ Շրջանի խոտհարքներում մեծ տարածում ունի. հանդիպել է ամբողջ գարնան և ամռան ընթացքում։ Թրթուրը մայիս, հունիս և օգոստոս ամիսներին լինում է Lotus, Medicago, Ononis, Genista և այլ թիթեռնածաղիկ բույսերի վրա (7 : 100, 8 : 16)։

122. Lycaena semiargus Rott. Մարտունի 7. VI. 1935. 2, 25. VII. 1935. 1; Զոլաքար 11. VI. 1935. 1, 2. IX. 1935. 2; Երանոս 13. VI. 1935. 2; Ծովինար 6. VII. 1935. 1; Վարդենիկ 7. VII. 1935. 2; Լիճք 10. VII. 1935. 2։ Ամենուրեք հանդիպել է խոտհարքներում։ Թրթուրն, ըստ Ассмус-ի, լինում է Anthyllis, իսկ ըստ Целлер-ի Armeria vulgaris-ի գլխիկների վրա (8 : 18)։

123. Lycaena cyllarus Rott. subsp. Մարտունի 9. VI. 1935. 2. խոտհարքից։ Նշվում է, որ թրթուրն ամռան և վաղ գարնան լինում է Melilotus, Genista, Astragalus բույսերի վրա (8 : 18)։

NYMPHALIDAE

124. Vanessa urticae L. Ղարանլուղ 25. VI. 1935. 2, 29. VI. 1935. 1; Ծովինար 7. VII. 1935. 2; Զոլաքար 2. IX. 1835. 1; Մարտունի 7. IX. 1935. 2, 5. VIII. 1938. 1. բանջարանոցներից և նրանց մոտ հողամասերից։ Թրթուրը սովորաբար լինում է եղինջի վրա, բայց երբեմն նա կարող է վնասել գայլուկին, կանեփին և հաղարջին (смородина). վնասակարության մասին տեղեկություններ կան միայն Հեռավոր Արևելքից (7 : 82, 8 : 24, 15 : 203)։

125. Pyrameis cardui L. Զոլաքար 2. VI. 1935. 9, 11. VI. 1935. 4, 9. VIII. 1938. 3; Մարտունի 7. VI. 1935. 6, 7. VIII. 1938. 2; Երանոս 12. VI. 1935. 4; Ղարանլուղ 26. VI. 1935. 2; Գյոզալդարա 4. VII. 1935. 3; Ծովինար 6. VII. 1935. 4; Վարդե-

նիկ 7. VII. *1935. 4, 20.* VII. *1935. 3*։ Շրջանում ոչ միայն շատ մեծ տարածում ունի, այլ և քանակապես անսովոր չափերի է հասնում. Նա հանդիպել է բոլոր խոտհարքներում, արոտավայրերում և բանջարանոցներում։ Գրականության համաձայն (Гофман), այս տեսակն երբեմն հանդես է գալիս մեծ քանակությամբ, որից հետո ուժեղ զարգացումը մի քանի տարով կանգ է առնում. Նման դեպքերում տեղ-տեղ (երբեմն լուրջ) վնասում է պոմիդորին, կանեփին, թիթեռնածաղիկներին, բամբակին, խաղողին, իսկ նորմալ բազմացման տարիներում թրթուրը սովորաբար լինում է եղինջի, ուղտափուշի (Carduus), կռատուկի (репейник) վրա *(8: 24, 15: 202)*:

126. Argynnis pandora Schiff. Երանոս *13.* VI. *1935. 1*; Ղարանլուղ *26.* VI. *1935. 1.* հացահատիկային ցանքերից։ Թրթուրը լինում է մանուշակի վրա *(8: 30)*։

127. Argynnis latonia L. Վարդենիկ *3.* IX. *1935. 1*; Մարտունի *7.* IX. *1935. 1.* հացահատիկային ցանքերից։ Թրթուրը գարնան և ամռան լինում է մանուշակի, կորնգանի և ուրիշ այլ բույսերի վրա *(7: 87, 8: 29)*։

SATYRIDAE

128. Epinephele jurtina L. Երանոս *10.* VII. *1935. 1.* մարգագետնից։

129. Coenonympha pamphilus L. Երանոս *13.* VI. *1935. 1*; Լիճք *15.* VI. *1935. 1.* խոտհարքներից։ Թռչում է Lycaenidae ընտանիքի մեր նշած ներկայացուցիչների հետ։

GEOMETRIDAE (Երկրաչափներ)

130. Lithostege griseata Schiff. Զոլաքար *2.* VI. *1935. 1.* Հացահատիկային ցանքից։ Կուլտուրական մշակույթների վրա որպես վնասատու, չի նշված։

LASIOCAMPIDAE

131. Malacosoma franconicum Esp. Բնության մեջ թիթեռին չենք հանդիպել, այն ստացել ենք թրթուրից։ Թրթուրը վերցրել ենք 1935 թվի հունիսի 12-ին Երանոս գյուղում կաթնուկի (Euphorbia) վրայից. Նրան կերակրել ենք նույն բույսով.

սնվել է այդ բույսի ծաղիկներով և կոկոններով։ Թիթեռը հարսնյակից դուրս է եկել 1935 թվի հուլիսի 31-ին Երևանում։ Թրթուրին հանդիպել ենք շրջանի բոլոր գյուղերի անմիջակ հողերում։ Տարածումը, հատկապես Երանոս գյուղում, շատ է։ Թրթուրն իր փոքր հասակներում ապրում է մեծ խմբերով։ Տեղի կոլխոզնիկների պատմելով, այդ թրթուրի մասսայական բազմացումը հաճախ է կրկնվում, և նման տարիներում բանջարանոցային կուլտուրաները մեծ վնաս են կրում։ Գրականության համաձայն թրթուրը մայիս, հունիս և հուլիս ամիսներին լինում է Triticum, Rumex, Plantago, Geum, Statice բույսերի վրա (8:95)

NOCTUIDAE

132. *Barathra brassicae* L. Զոլաքար 5. VI. 1935. 1, 7. VI. 1935. 2, 11. VI. 1935. 2, 8. VII. 1935. 1, 18. VII. 1935. 1. միշտ բնակարանից. գիշերները։ Թիթեռը թռչում է գիշեր ժամանակ և գրավվում է արհեստական լույսից։ Թրթուրը կաղամբի և բանջարանոցային խաչածաղիկ այլ բույսերի լուրջ վնասատու է. հարձակվում է նաև շատ ուրիշ բույսերի վրա (ճակնդեղ, վուշ, կանեփ, ադկանեփ և այլն) (8:136, 15:210)։

133. *Polia* sp. Զոլաքար 24. VI. 1935. 1. բնակարանից, գիշերով։

134. *Chloridea dipsacea* L. Ծովինար 7. VII. 1935. 1. խոտհարքից։ Որոշ տարիներում հանդիսանում է վուշի բավականին լուրջ վնասատու. հանդիպում է նաև կուլտուրական շատ ուրիշ բույսերի վրա՝ եգիպտացորեն, սոյա, առվույտ, կանեփ, ծխախոտ, բամբակ, այլև Cichorium, Delphinium, Centaurea բույսերի վրա (7:200, 8:205, 15:206)։

135. *Erastria trabealis* Sc. Ծովինար 7. VII. 1935. 1. հացահատիկային ցանքից։ Թրթուրը հուլիսին և աշնանը լինում է պատատուկի վրա (7:202, 8:212)։

ARCTIIDAE

136. *Arctia caja* L. Բնության մեջ թիթեռին չենք հանդիպել, ստացել ենք թրթուրից։ Վերջինս գտել ենք 1935 թվի մայիսի 30-ին Զոլաքար գյուղում, ուռենիների տակ եղած բույսերի վրա։ Նրան կերակրել ենք «եզան լեզու» (Plantago) բույ-

սով։ Թիթեռը հարսնյակից դուրս է եկել նույն թվի հուլիսի 30-ին, Երևանում։ Թրթուրը լինում է եղինջի, խոտաբույսերի և տարբեր ծառերի (թզի, խնձորի, խաղողի թփի) վրա. Միջերկրական ծովի շրջակա երկրներում և մի քանի այլ վայրերում վնասում է բանջարանոցային կուլտուրաներին, հաճարին և ոլոռին (8: 78, 15: 379)։

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատության մեջ նշված են 136 տեսակ միջատներ, որոնք ըստ կարգերի հետևյալ պատկերն ունեն՝ ճպուռներ 3, ուղղաթևեր 12, մաշկաթևեր 2, կիսակարծրաթևեր 23, բզեզներ 32, թաղանթաթևեր 36 և թիթեռներ 28։ Ճպուռներից 3-ը համընկնում են՝ Ն. Ն. Ակրամովսկու աշխատության [3] մեջ հիշատակված տեսակներին, ուղղաթևերից 9-ը՝ Գ. Դ. Ավագյանի աշխատության մեջ [2] հիշատակված տեսակներին. իսկ բզեզներից 10-ը մեր կողմից տրված են 1941 թվին հրատարակված աշխատության մեջ [4]։ Մնացած տեսակները շրջանի համար մի մասն էլ Հայաստանի համար, նշվում են առաջին անգամ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Авакян Г. Д.*—Саранчевые Ленинаканской степи (Зоол. сб. II, Арм. ФАН СССР), Ереван, 1940.
2. *Авакян Г. Д.*—Прямокрылые Мартунинского района („Известия" АН Арм. ССР, № 2), Ереван, 1947.
3. *Акрамовский Н. Н.*—Фауна стрекоз Советской Армении (Зоол. сб. АН Арм. ССР, вып. V), Ереван, 1948.
4. *Багдасарян Б. А.*—Жуки зерновки (Bruchidae Coleoptera) Арм. ССР и их связь с растениями, в частности с бобовыми (Научные труды Ерев. Гос. унив., т. XVI), Ереван, 1941.
5. Бассейн озера Севан (Гокча), т. II, вып. 2, Ленинград, 1931.
6. *Бей-Биенко Г. Я.*—Насекомые кожистокрылые (фауна СССР), Москва-Ленинград, 1936.
7. *Борециус Ф.*—Бабочки Европы. С. Петербург, 1904.
8. *Гофман Э.*—Атлас бабочек Европы. С. Петербург, 1897.
9. *Кириченко А. Н.*—Полужесткокрылыя (Hemiptera—Heteroptera) Кавказского края, часть I, Тифлис, 1918.
10. *Макарян М. Я.*—К характеристике фауны Orthoptera Абарана (Армения) (Изв. Инст. Наук ССР Армении), Ереван, 1931.
11. *Макарян М. Я.*—Материалы к познанию фауны прямокрылых насекомых (Orthoptera) долины Аракса (Изв. Гос. унив. ССР Арм. № 5), Ереван, 1930.
12. *Макарян М. Я.* и *Аветян А. С.*—Обзор вредителей сельскохозяйственных и лесных растений ССР Армении. Ереван, 1931.
13. Определитель насекомых Европейской части СССР. Москва—Ленинград, 1948.
14. *Петросян А.*—Материалы к изучению прямокрылых Азизбековского района Арм. ССР и к биологии Армянской саранчи (Науч. тр. Ерев. Гос. унив., т. IX), Ереван, 1939.
15. Труды по Защите Растений. I серия: Энтомология, вып. 5, Ленинград, 1932.
16. *Якобсон Г. Г.*—Жуки России и Западной Европы. С. Петербург, 1910.

Կենդանաբանության ամբիոն

БАГДАСАРЯН Б. А.

МАТЕРИАЛЫ К ИЗУЧЕНИЮ НЕКОТОРЫХ ОТРЯДОВ НАСЕКОМЫХ МАРТУНИНСКОГО РАЙОНА АРМЯНСКОЙ ССР

РЕЗЮМЕ

Изучением насекомых Мартунинского района занимались очень мало. С этой точки зрения настоящая работа дает представление о главных отрядах энтомофауны данного района.

Материал в основном собран летом 1935 года и в дальнейшем дополнен в 1938 и 1939 гг.

Автором охвачено 11 сел, расположенных на высоте 1945—2258 метров над уровнем моря, где занимаются возделыванием зерновых и овощных культур, кормовых трав и отчасти животноводством. Местности, расположенные более высоко, обследованием охвачены не были. Этот пробел, однако только по отношению к прямокрылым, заполнен работой Г. Д. Авакяна [2].

С этой точки зрения величина и число листьев имеет важное значение для скорости прохождения световой стадии развития растений.

Опыты, проведенные нами с растениями периллы (растения короткого дня) и сафлором (растения длинного дня), привели нас к следующим выводам:

1. В зависимости от уменьшения числа и величины площади листьев затягивается прохождение и завершение световой стадии развития.

2. Затягивание прохождения световой стадии растений, в зависимости от уменьшения числа и величины поверхности листьев, можно объяснить недостаточным синтезом листьями определенной формы для прохождения световой стадии развития питательных пластических веществ.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова
XXXIII 1951

ԳԱԼՍՏՅԱՆ Ս. Խ.

ԼՈՒՅՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՐԱՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

(Ղեկավար՝ բիոլոգիական գիտ. թեկնածու Ս. Մ. Սարգսյան)

Ներկա աշխատանքով նպատակ ենք ունեցել ուսումնասիրել արտաքին ֆակտորներից մեկի, այն է լույսի, ազդեցությունը շերամի զարգացման ու նրա բերքատվության վրա։ Այդ ուղղությամբ փորձեր են դրվել կաղնու և թթենու շերամների վրա։ Ըստ որում առաջինի նկատմամբ 1948 թվին կատարված փորձերը հետապնդել են օրվա լույսի տևողության ազդեցությունը, նրա դիապաուզայի վրա. իսկ 1949 թվին երկրորդի նկատմամբ՝ լույսի տարբեր ինտենսիվության և տևողության (ֆոտոպերիոդիզմ) ազդեցությունը թրթուրի զարգացման տևողության և բոժոժի բերքատվության վրա։

Նույն խնդիրների կապակցությամբ գրականության մեջ եղած հակասական տեղեկությունները գլխավորապես վերաբերում են շերամի նկատմամբ լույսի տարբեր ինտենսիվության ունեցած ազդեցությանը։ Այսպես, օրինակ, մի շարք հետազոտողներ շերամը մութ պայմաններում կերակրելուց ստացել են բացասական արդյունքներ՝ երկարել է սնվելու շրջանը, ընկել է թրթուրների կենսունակությունը, վատացել է բոժոժների որակը և այլն։

Պլատովան [7] որդերին կերակրել է մթության և սենյակային բնական լուսավորության պայմաններում և որդերի մեջ չի տեսել ոչ մի տարբերություն, իսկ բոժոժների մեջ տարբերությունը եղել է այն, որ լույսի պայմաններում ստացված բոժոժները մոտ 20%-ով ավելի ծանր են եղել, քան մութ պայմաններում ստացվածները։

Ըստ Իկեդի, թրթուրների աճի լավ արդյունքներ ստացվում են այն ժամանակ, երբ նրանց կերակրում են ցրված լույսի պայմաններում, իսկ ամենավատ արդյունք՝ մթության դեպքում։

Ինչ վերաբերում է լույսի տևողությանը, այսինքն լուսային օրվա երկարության ազդեցությանը թթենու շերամի վրա, ապա պետք է նշել, որ այդ առթիվ գրականության մեջ մանրամասն տվյալներ չկան, որի հետևանքով էլ շերամի որդի կերակրման ագրոկանոնների մեջ այդ մասին կոնկրետ ցուցումներ բացակայում են։ Մինչդեռ պրակտիկայում հայտնի է որ շերամն իր թրթուրային զարգացման տարբեր հասակներում տարբեր վերաբերմունք է ցուցաբերում լույսի նկատմամբ։ Այսպես, օրինակ՝ առաջին հասակի թրթուրներն ավելի դրական ֆոտոտրոպիկ են, քան վերջին հասակի թրթուրները։

Լույսը նույնպիսի ակտիվ ազդեցություն ունի նաև կաղնու շերամի զարգացման և աճման վրա։ Փորձերը ցույց են տվել (Անդրյանովա [5]), որ լույսի տևողությունը և ինտենսիվությունը, միջավայրի մյուս ֆակտորների անփոփոխության դեպքում, զգալիորեն դանդաղեցնում կամ արագացնում է կաղնու շերամի թրթուրների աճը, ըստ որում, այդ երևույթը ցերեկվա և գիշերվա նկատմամբ պարբերական բնույթ է կրում։ Այդ նույն հեղինակը, շերամների հինգ տարբեր հասակների վրա դրած փորձերով և յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ կշռելու միջոցով եկել է այն եզրակացության, որ լույսն անհրաժեշտ պայման է կաղնու շերամի թրթուրների զարգացման համար։ Լրիվ մթության մեջ բուծվող թրթուրների զարգացումը ձգձգվում է, նրանց հյուսած բոժոժն ու վերջինիս մետաքսապատյանն ունենում է ավելի ցածր կշիռ, իջնում է թիթեռների ձվատվությունը և այլն։ Բացի դրանից, փորձարարը դիտել է, որ լուսային օրվա կարճացմամբ զարգացման տևողությունը որոշ չափով կրճատվում է, և, վերջապես, աշխատանքներից պարզվել է, որ կաղնու շերամի թրթուրները ևս իրենց զարգացման տարբեր հասակներում տարբեր վերաբերմունք են ցուցաբերում լույսի ազդեցությանը։

Ա. ԼՈՒՅՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՂՆՈՒ ՇԵՐԱՄԻ ԴԻԱՊԱՈՒԶԱՅԻ ՎՐԱ

ՍՍՌՄ-ում զարգացվող կաղնու շերամն (Antheraea pernyi G.) *ունի բիոլոգիական այն առանձնահատկությունը, որ մեկ տարվա ընթացքում տալիս է երկու իրար հաջորդող սերունդ, առանց դիա-*

պաուզայի։ Այդ հանգամանքը զգալիորեն դժվարացնում է, իսկ որոշ դեպքերում անհնար դարձնում, այդ արժեքավոր կուլտուրայի բուծումը բազմատեսակ կլիմա ունեցող շրջաններում։ Դժվարությունն այն է, որ այնտեղ, որտեղ տարվա ընթացքում տաք ամիսները չեն բավարարում կաղնու շերամի երկու սերնդի լրիվ զարգացմանը, երկրորդ սերունդն, ընկնելով անբարենպաստ կլիմայական և կերային պայմանների մեջ, չի ավարտում իր լրիվ զարգացումը և ոչնչանում է։ Հետևապես, այնպիսի մի պրոբլեմային հարցի մշակումը, որը հնարավորություն տար կլիմայական տարբեր պայմաններում արհեստականորեն ղեկավարելու կաղնու շերամի դիապաուզան, այսինքն, երկու սերնդի փոխարեն մեկ սերունդ ստանալ, մեծ արժեք կներկայացներ շերամի այդ տեսակն ամենուրեք զարգացնելու գործում։ Ենթադրելով, որ միջատի դիապաուզային նախորդող զարգացման ստադիան մեծ նշանակություն պիտի ունենա իրեն հաջորդող ստադիայի բնույթի վրա, մեր փորձերը դրվել են հինգերորդ հասակի թրթուրների վրա, որից հետո, ինչպես հայտնի է, թրթուրը հարսնյակավորվում է։ Հետևապես, մեր ենթադրությամբ միջավայրի պայմանների ազդեցությունը 5-րդ հասակում գտնվող թրթուրների վրա պետք է, որ վճռական նշանակություն ունենա նրան հաջորդող ստադիայի, այսինքն հարսնյակի զարգացման բնույթի, հետևաբար և դիապաուզայի վրա։ Այդ նկատառումով էլ հենց դրված է եղել հետևյալ փորձը։

Վերցրել ենք կաղնու շերամի 5-րդ հասակի 120 թրթուր և այն բաժանել 4 խմբի։ Թրթուրների մի խումբը զարգացրել ենք լուսային սովորական պայմաններում, այսինքն օրվա լուսավորության նորմալ տևողության պայմաններում։ Մյուս խումբը լուսավորել ենք բնական լույսով օրական 8 ժամ, երրորդ խումբը պահվել է լրիվ մթության պայմաններում, իսկ 4-րդ խմբին, բացի օրվա նորմալ լույսի տևողությունից, տրվել է նաև 150 վատտ ուժով օրական 3 ժամ տևողությամբ լրացուցիչ էլեկտրական լուսավորություն։ Բոլոր դեպքերում էլ կերակրումներն անց են կացվել ջրով լցված ապակյա սրվակներում պահվող կաղնու ճյուղերի վրա։ Կերը տրվել է ըստ անհրաժեշտության և թարմացվել է նոր ճյուղերով։ Ջերմաստիճանը բոլոր վարիանտների համար եղել է միահավասար՝ 22—26^{0} C։ Օդի խոնավությունը համապատասխանել է բնական խոնավությանը՝ արհեստականորեն չի փոփոխվել։ Փորձերից ստացված արդյունքները հետևյալներն են՝

Աղյուսակ 1

Վարիանտի №-ը	Փորձի պայմանների բնութագրումը	Վերցված թրթուրների քանակը	Ստացված բոժոժների քանակը	Ստացված թիթեռների քանակը	Դիապաուզայի ենթարկված հարսնյակների քանակը	Դիապաուզայի ենթարկված հարսնյակների տոկոսը
1.	Լույսի բնական տևողության պայմաններում (կոնտրոլ)	30	25	25	—	0
2.	Լույսի ութ ժամյա տևողության պայմաններում	30	27	7	20	74,1
3.	Լրիվ մթության պայմաններում	30	18	12	6	33,3
4.	Լրացուցիչ լույսի պայմաններում	30	28	28	—	0

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, լույսի տևողության սահմանափակումը, թեկուզ միայն կաղնու շերամի թրթուրի զարգացման 5-րդ հասակում, խորն ազդեցություն է թողնում հարսնյակի վարմունքի վրա։ Այսպես, օրինակ, եթե բնական պայմաններում զարգացած թրթուրներից ստացված բոլոր հարսնյակները զարգացել և թիթեռներ են տվել, ապա լույսի ութ ժամ տևողության պայմաններում զարգացած թրթուրներից ստացված հարսնյակների միայն 25,9%-ն է զարգացել, իսկ մնացածները ձմեռել են մինչև հաջորդ տարվա գարունը։ Լրիվ մթության պայմաններում թրթուրների զարգացումից ստացված հարսնյակներից ավելի քիչ տոկոսն է ձմեռում։ Հետևապես, ձմեռող (դիապաուզայի ենթարկված) հարսնյակներ ստանալու համար պարտադիր չէ լույսի տևողության անընդհատ կրճատումը, այլ գոյություն ունի զարգացման համար անհրաժեշտ լույսի տևողության օպտիմում, որն, անկասկած, մոտիկ է ութ ժամյա տևողությանը։ Փորձերից ստացված արդյունքները ցույց են տալիս նաև, որ զարգացման ժամանակ լրացուցիչ էլեկտրական լուսավորությունն ազդեցություն չի գործում կաղնու շերամի դիապաուզայի վրա։

Բ. ԼՈՒՅՍԻ ՏԱՐԲԵՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ (ՖՈՏՈՊԵՐԻՈԴԻԶՄԻ) ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԹԵՆՈՒ ՇԵՐԱՄԻ ԹՐԹՈՒՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈԺՈԺԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Շերամապահության գիտական հարցերի մեջ միշտ էլ կենտրոնական խնդիր է եղել՝ առանց թելի որակը և քանակը գցելու, գտնել միջոցներ թրթուրային շրջանի տևողության ժամանակամիջոցը, ըստ հնարավորին, կրճատելու համար։ Դրանով կխնայվի բանվորական շատ ուժ և, որ կարևորն է, մեծ քանակությամբ կեր (տերև), մի բան, որ միշտ էլ դժվարություններ է ստեղծում շերամապահության համար։

Այդ նույն նպատակով էլ 1949 թվի ամռան ամիսներին մեր կողմից դրվել են հետևյալ փորձերը՝ գարնանային կերակրումներից ստացած գրենայի ինկուբացումից դուրս եկած թրթուրները բաժանվել են երեք խմբի, յուրաքանչյուրում 150 հատ։ Այդ խմբերից առաջինը թրթուրների դուրս գալու օրից կերակրվել է լույսի ութ ժամ տևողության պայմաններում, երկրորդը՝ ցրված լույսի պայմաններում, իսկ վերջինը՝ լույսի բնական տևողության պայմաններում։ Փորձը դրվել է հետևյալ ձևով։ Բնական լույսից խուսափելու համար վերցրել ենք երկու մեծ, միևնույն ծավալով թերմոստատներ (որպես փոքր պահարաններ օգտագործելու նպատակով), որոնց մեջ տեղավորել ենք թրթուրները։ Կոնտրոլը պահվել է նույն սենյակում լույսի բնական տևողության տակ։ Թերմոստատներից մեկը առավոտյան ժամը 8-ին բացել, իսկ 4-ին փակել ենք, այսինքն նրանում եղած թրթուրներին տրվել է 8-ժամյա տևողությամբ լույս։ Այն թերմոստատը, որն օգտագործվել է թրթուրներին ցրված լույս տալու համար, փակցված է եղել թուղթ, որի միջով թափանցող լույսի քանակությունը հնարավորություն է տվել տեսնել և աշխատել թրթուրների հետ։ Փորձի երեք վարիանտներն էլ տարվել են ջերմության և օդի խոնավության միևնույն պայմաններում։ Փորձի մեջ եղած բոլոր թրթուրները կերակրվել են անկորիզ (բեդանա) թթենու տերևներով համաձայն գոյություն ունեցող ագրոկանոնների։ Թրթուրների զարգացման 3-րդ հասակում նկատվել է, որ լույսի ութ ժամ տևողության պայմաններում պահվող թրթուրներն ավելի արագ են զարգանում, քան մյուս վարիանտների թրթուրները։ Այդ արտահայտվել է նրանով, որ թրթուրների երկրորդ մաշկափոխությունը, վերոհիշյալ վարիանտում, համարյա թե մեկ

օրով շուտ սկսվեց, քան թե մյուս վարիանտների թրթուրների մոտ. Թրթուրների զարգացման վերջին հասակում այդ տարբերությունն արտահայտվել է 8-ժամյա լույսի տևողության պայմաններում կերակրվող որդերի բոժոժավելների վրա մեկ ու կես օր շուտ բարձրանալու, այսինքն թրթուրային ստադիայի մեկ ու կես օրով շուտ ավարտվելու փաստով: Նույնպիսի տարբերություն նկատվել է նաև թրթուրների աճի մեջ:

2-րդ աղյուսակում տրված են տարբեր վարիանտներում զարգացած 5-րդ հասակի 5-րդ օրվա թրթուրների համեմատական կշիռները:

Աղյուսակ 2

Վարիանտի №-ը	Փորձի պայմանների բնութագրումը	Թրթուրների թիվը	Մեկ թրթուրի միջին քաշը (գրամներով)	Թրթուրների քաշի տարբերությունը կոնտրոլի հետ համեմատած
1	կոնտրոլ (լույսի բնական ինտենսիվության և տևողության պայմաններում)	20	2,90	—
2	լույսի ութ ժամյա տևողության պայմաններում	20	3,114	+0,214
3	ցրված լույսի պայմաններում	20	3,09	+0,19

Ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ աղյուսակի տվյալները, երկրորդ վարիանտի թրթուրները բոժոժ հյուսելուց դեռևս մի քանի օր առաջ ունեցել են ավելի մեծ կշիռ, քան մյուս վարիանտների թրթուրները, իսկ երրորդ վարիանտ ավելի, քան կոնտրոլի թրթուրները: Նույն օրինաչափությունն է նկատվում նաև երրորդ աղյուսակում նշված վարիանտների թրթուրների հյուսած բոժոժների մեջ պարունակվող մետաքսի բացարձակ քանակության և տոկոսի մեջ, որը կարևոր տնտեսական ցուցանիշ է հանդիսանում:

Աղյուսակից երևում է, որ 2-րդ վարիանտում բոժոժները թե՛ բացարձակ կշռով և թե՛ տոկոսային հարաբերությամբ ավելի շատ մետաքս են պարունակում, քան թե մնացած երկու վարիանտնե-

Աղյուսակ 3

Վարիանտի №-ը	Փորձի պայմանների բնութագրումը	Ստացված բոժոժի միջին կշիռը (գրամներով)	Մետաքսի պատյանի միջին կշիռը (միլիգրամներով)	Մետաքսի պատյանի քաշի տոկոսը
1	կոնտրոլ	1,43	212	14,8
2	լույսի ութ ժամյա տևողության պայմաններում	1,44	225	15,6
3	ցրված լույսի պայմաններում	1,51	222	14,7

րում։ Ցրված լույսի պայմաններում ստացված բոժոժները նույնպես ավելի բարձր ցուցանիշներ ունեն, քան թե կոնտրոլինը։ Աղյուսակից միևնույն ժամանակ երևում է, որ ցրված լույսի պայ-

Աղյուսակ 4

Վարիանտի №-ը	Փորձի պայմանների բնութագրումը	Հաշված ածվածքների քանակը	Ձվերի ընդհանուր քանակությունը	Ածվածքում եղած ձվերի միջին թիվը
1	կոնտրոլ	10	5474	547
2	լույսի 8 ժամյա տևողության պայմաններում	10	5593	559
3	ցրված լույսի պայմաններում	10	6263	626

մաններում ստացված բոժոժներն ունեն ավելի մեծ քաշ, քան թե մնացած երկու դեպքում։ Հաշվի առնելով այդ, կարելի է ենթադրել, որ ցրված լույսի պայմաններում զարգացած բոժոժների մե-

տաքսի կշիռն ավելի մեծ պետք է լիներ, քան թե մյուս պայմաններում զարգացածներինը։ Բայց այդպես չէ, որովհետև բոժոժի քաշը ստացվում է մետաքսապատյանի և հարսնյակի կշիռներից, իսկ հարսնյակի քաշի բարձրացումն անդրադառնում է թիթեռի ձվատվության վրա, որը և պարզվեց հարսնյակներից զարգացած թիթեռների ձվադրման հաշվառումից (տես աղյուսակ 4)։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ աղյուսակից, ցրված լույսի պայմաններում կերակրված թրթուրներից զարգանում են ավելի մեծ պտղաբերություն ունեցող թիթեռներ, քան մյուս պայմաններում կերակրված թրթուրներից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թթենու շերամի (B. mori L.) և կաղնու շերամի (A. pernyi G.) նկատմամբ մեր կողմից դրված փորձերը ցույց են տալիս, որ՝

1. Լույսը, իբրև արտաքին միջավայրի ֆակտորներից մեկը, նշանակալից ազդեցություն ունի այդ միջատների զարգացման ընդհանուր ընթացքի վրա։

2. Կաղնու շերամի հարսնյակի դիապաուզայի ուսումնասիրությունից պարզվեց, որ լույսի տևողությունը (ֆոտոպերիոդիզմը) վճռական դեր է խաղում շերամի այդ կարևոր ժառանգական հատկության առաջացման հարցում, որ կաղնու շերամի թրթուրներից ձմեռող հարսնյակներ են զարգանում այն դեպքում, երբ լույսի տևողությունը հավասար է ութ ժամի կամ գտնվում է նշված տևողության սահմաններում։

3. Թթենու շերամի թրթուրը համեմատաբար ավելի արագ է զարգանում, երբ լույսի տևողությունը հավասար է ութ ժամի։ Այդ պայմաններում թրթուրն իր զարգացումն ավարտում է մեկ ու կես օր ավելի շուտ, քան օրվա լույսի բնական տևողության պայմաններում։

4. Լույսի ութ ժամ տևողությունը նպաստում է, մետաքսի մասայի համեմատաբար մեծ քանակության սեկրեցիային, որի հետևանքով այդպիսի թրթուրներից ստացված բոժոժներում մետաքսի թե բացարձակ և թե հարաբերական քանակությունն ավելի բարձր է, քան թե ցրված լույսի և կոնտրոլի պայմաններում։

5. Ցրված լույսի պայմաններում ստացված բոժոժների մետաքսի տոկոսը ավելի ծանր է լինում, որը պայմանավորված է հարսնյակի մեծ կշռով։ Նման հարսնյակներից զարգացած թիթեռներն աչքի են ընկնում իրենց բարձր ձվատվությամբ։

6. Վերոհիշյալ տվյալները բերում են այն պրակտիկ եզրակացության, որ շերամի բուծման գոյություն ունեցող կանոնները, լույսի ռեժիմի տեսակետից, չի կարելի համարել դեռևս բազմակողմանիորեն մշակված։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Богаутдинов Г., Лузин И. Х., Миляев А. П.* и *Рождественская А. Ф.*, Краткое руководство по шелководству, Москва, 1946.
2. *Данилевский А. С.*, и *Короткова В. П.*, Культура дубового шелкопряда в СССР, Москва, 1948.
3. *Золотарев С. Х.*, Диапауза и развитие куколок китайского дубового шелкопряда. „Зоологический журнал", т. XXVI, вып. VI, Москва, 1947.
4. *Лысенко Т. Д.*, Агробиология, Москва, 1948.
5. *Линде В. В.* и *Павельевой М. С.*, Культура дубового шелкопряда в СССР, Москва, 1948.
6. *Миляев А. П., Лузин И. Х., Рождественская А. Ф.* и *Жвирблис И. И.*, Шелководство, Москва, 1949.
7. *Михайлов Ч. Н.*, Червекормление, Ташкент, 1949.
8. *Поспелов В. П.*, Энтомология, Москва—Ленинград, 1935, стр. 207—229.
9. *Поярков Э. Ф.*, Шелководство, Ташкент, 1940.
10. *Ростан Ж.*, Жизнь шелковичных червей, Москва, 1947.
11. *Сахаров П. П.*, Наследование приобретенных признаков у животных. „Зоологический журнал", т. XXVIII, вып. 1, 1949.
12. Լիսենկո Տ. Դ., *Բիոլոգիական գիտության մեջ տիրող դրության մասին, Երևան, 1948։*
13. *Շերամապահության և գրենայի արտադրության ձեռնարկ, Երևան, 1935։*

Կենդանաբանության ամբիոն

ТАЛСТЯН С. Х.

ВЛИЯНИЕ СВЕТА НА РАЗВИТИЕ ШЕЛКОПРЯДА

(Руководитель канд. биологических наук С. М. Саркисян)

РЕЗЮМЕ

Автор имел целью изучить влияние продолжительности света на диапаузу дубового шелкопряда, на развитие личинки тутового шелкопряда и плодовитость кокона.

Опыты проводились при 8-ми часовом освещении, в темноте и при добавочном освещении.

Наблюдения показали, что различные продолжительность и количество света влияют на яйцекладку, на развитие личинки, окукливание и обильную секрецию шелковещества и т. д.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова
XXXIII 1951

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ժ.

ՍՈՃՈՒ ՇԻՎԱՊԱՏԱՏԸ (*Evetria buoliana Schiff.*) ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ՆՐԱ ԴԵՄ

(Ղեկավար՝ բիոլոգիական գիտ. թեկնածու Գ. Մ. Մարջանյան)

Դաշտապաշտպան անտառաշերտեր տնկելու ստալինյան մեծ պլանի հաջող իրականացման համար անհրաժեշտ նախապայման է նաև կազմակերպել անտառաշերտերն ու տնկարանները հիվանդություններից և վնասատուներից պաշտպանելու գործը։ Անտառներում ծառատեսակներին ամենամեծ վնասը հասցնում են վնասատու միջատները։ Անտառում չկա մի այնպիսի ծառատեսակ, որը չունենա իր վնասատուն։ Ծառի յուրաքանչյուր մասը, ինչպիսիք են տերևները, բողբոջները, արմատները, ծաղիկները և այլն, ունեն իրենց հատուկ վնասատուները։

1946 թվի ընթացքում Հայկական ՍՍՌ-ում կատարված հետազոտությունները հայտնաբերել են մի շարք լուրջ վնասատուների առկայությունը Երևանի նորատունկ անտառներում, որոնցից մեկն էլ հանդիսանում է սոճու շիվապատատը (Evetria buoliana Schiff.)։ *Անտառային մի շարք վնասատուների, այդ թվում և սոճու շիվապատատի բիոլոգիայի և պայքարի միջոցառումների խնդրով զբաղվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանության և Ֆիտոպաթոլոգիայի ինստիտուտի տոքսիկոլոգիական բաժինը, որին մասնակցել ենք նաև մենք 1949 թվի հուլիս և օգոստոս ամիսներին՝ ինստիտուտի ավագ գիտական աշխատող Գ. Մ. Մարջանյանի ղեկավարությամբ։*

* * *

Սոճու շիվապատատը Երևանի շրջակայքի անտառներում սոճու առաջնակարգ վնասատուներից է։ 1946 թվին Քանաքեռի անտառում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Կովկասյան սոճու համարյա բոլոր ծառերն այնտեղ վարակված են շիվապատատով. նրանց բողբոջների վարակվածությունը հասնում է 50—60%-ի։

Սակայն 1949 թվին մեր կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ սոճու շիվապատատը տարածված է ոչ միայն Քանաքեռի, այլև Այգեստանի (Նորքի) անտառում. Քանաքեռի անտառում 1949 թվին մեր կատարած դիտողությունները պարզեցին, որ սոճու ծառերի բողբոջների վարակվածությունը. շիվապատատով, հասնում է 72—85%-ի։

Սոճու շիվապատատի բիոլոգիան։ *Մեր կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ շիվապատատի թիթեռների թռիչքը Երևանի պայմաններում սկսվում է մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին և շարունակվում է մոտ մեկ ամիս։ Թիթեռները ձվադրում են սոճու տերևների, բողբոջների. իսկ որոշ դեպքերում նաև շիվերի վրա, մեծ մասամբ հատ-հատ։ Սակայն մեզ հաջողվել է գտնել նաև ձվակույտեր, որոնցում ձվերի թիվը հասել է 4—16-ի։ Ձվերը տափակ են, կլորավուն, սկզբնական շրջանում լինում են սպիտակ, իսկ հետո դառնում բաց շագանակագույն կամ ծիրանագույն։ Ձվադրումից մի քանի օր անց ձվերից դուրս են գալիս թրթուրները, որոնք լինում են բաց շագանակագույն, սև գլխով, վերջին հասակում 1,2—1,5 սմ երկարությամբ։ Թրթուրներն առաջին մի քանի օրը սնվում են տերևապատյանի տերևային հիմքով, որի հետևանքով էլ տերևը չորանում է։ Այնուհետև թրթուրներն անցնում են բողբոջների ներսը, սնվում բողբոջների միջուկով և այդտեղ էլ ձմեռում։ Գարնանը նրանք շարունակում են վնասել նոր բողբոջներ ու շիվեր և բողբոջների մեջ էլ (գարնանը) հարսնյակավորվում են։ Յուրաքանչյուր թրթուր մինչև հարսնյակավորվելը կարող է վնասել մի քանի բողբոջ։ Վնասված բողբոջներն առատ խեժ են արտադրում, դեղնում են, չորանում և թափվում։ Թրթուրները վնասում են նաև դալար շիվերի ծայրերը։ Շիվապատատի*

թրթուրները վնասում են գլխավորապես 5—15 տարեկան ծառերի գագաթնային բողբոջները, որի հետևանքով էլ ծառի աճը հետ է մնում, վնասված ճյուղերը չորանում են, կորանում, և ծառն այլանդակվում է։

Սոճու տարբեր տեսակների համեմատական վարակվածությունը շիվապատատով: *Հետազոտությունների ժամանակ ուշադրություն ենք դարձրել այն հանգամանքի վրա, որ սոճու տարբեր տեսակները տարբեր կերպ են վարակվում շիվապատատով։ Այդ երևույթն առաջին անգամ, Երևանի շրջակայքի անտառներում, նկատել է ավագ գիտաշխատող Գ. Մ. Մարջանյանը [2]։ Նրանց համեմատական վարակվածության աստիճանը Քանաքեռի անտառում պարզելու համար, 1949 թվի օգոստոսի 2-ին կատարել ենք սոճու Կովկասի և Ղրիմի իրար մոտ տնկված տեսակների վարակված բողբոջների հաշվառում, վերցնելով ամեն մի տեսակից տասը ծառ և յուրաքանչյուր ծառի միջին յարուսից 2—3 մեծ ճյուղեր. այդ հաշվառման արդյունքները տրված են ստորև՝ 1-ին աղյուսակում։*

Աղյուսակ 1

Սոճու Կովկասի և Ղրիմի տեսակների համեմատական վարակվածությունը շիվապատատով

№ №	Սոճու տեսակները	Ստուգված բողբոջների քանակը	Վարակված բողբոջների քանակը	Վարակված բողբոջների %-ը
1	Ղրիմի	187	26	13,9
2	Կովկասի	375	320	85,3

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, սոճու ղրիմի տեսակն ավելի քիչ է վարակված շիվապատատով, քան կովկասյան տեսակը։ Սակայն համեմատած 1946 թվի տվյալների հետ (որի ժամանակ վարակվածություն չէր նկատված)՝ սոճու Ղրիմի տեսակի վարակվածության աստիճանը բարձրացել է։

Սոճու տարբեր տեսակների համեմատական վարակվածության փաստեր հիշատակում է նաև Լոզովոյը Էլդարի սոճու նկատմամբ [1]։ Սակայն նրա այն տեսակետը, թե շիվապատատի հանդեպ դիմացկունությունը պայմանավորվում է Էլդարի սոճու բող-

բողբոջների փոքրությամբ, ճիշտ համարել չի կարելի, որովհետև տվյալ դեպքում, չնայած սոճու Ղրիմի տեսակի բողբոջները մեծ են, բայց նրանք դարձյալ շատ քիչ են վարակված շիվապատառով:

Մենք համամիտ ենք այն կարծիքին, որ այդ երևույթի պատճառը պետք է համարել, ավելի շուտ, սոճու տարբեր տեսակների բիոքիմիական առանձնահատկությունները:

Պայքարի միջոցները: *Չնայած նրան, որ շիվապատառը լայն տարածականություն ունի և մեծ վնաս է պատճառում, բայց այնուամենայնիվ պայքարի միջոցառումներ նրա դեմ քիչ չափով են մշակված:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ շիվապատառի թրթուրները ձվից դուրս գալուց անմիջապես հետո սնվում են տերևներով ու տերևապատյանի տերևային հիմքով և ապա միայն կրծում բողբոջներն ու մտնում նրանց մեջ, պետք է ենթադրել, որ նրա դեմ պայքարելու համար կարող են լավ արդյունք տալ նաև աղիքային ազդեցության պրեպարատները և ԴԴՏ տիպի ինսեկտիցիդները, որոնք օժտված են նաև կոնտակտ ազդեցությամբ:

1946 թվին Գ. Մ. Մարջանյանը և Ա. Կ. Ոստոյանը Քանաքեռի անտառում փորձեր են դրել շիվապատառով ուժեղ վարակված կովկասյան սոճու վրա: Նրանք փորձարկել են մանգանի արսենատը (20% As_2O_5 պարունակությամբ) և նոր սինթետիկ ինսեկտիցիդներ՝ ԴԴՏ և ՀՔՑՀ: Վերջիններս եղել են դուստ վիճակում և պարունակել են առաջինը՝ 7%, իսկ 2-րդը՝ 5% թունավոր հիմք: Փորձարկված պրեպարատներից լավ արդյունք է տվել ԴԴՏ-ի դուստը, որն իջեցրել է վնասված բողբոջների քանակը մոտ 9 անգամ: Մանգանի արսենատը տվել է բավարար, իսկ ՀՔՑՀ-ը՝ աննշան էֆեկտ:

Ծանոթանալով սոճու շիվապատառի բիոլոգիային և նրա պատճառած վնասին, մենք նույնպես կիրառել ենք պայքարի քիմիական մեթոդը, որի ժամանակ փորձարկել ենք հանքայուղային էմուլսիա՝ ԴԴՏ-ի 1,0, 2,0, և 3,0%-անոց կոնցենտրացիաները և ԴԴՏ-ի 5,5%-անոց դուստը:

Փորձը դրել ենք թե ձվերի և թե թրթուրների նկատմամբ: Նկատի ունենալով թիթեռների թռիչքի ձգձգվածությունը, սրսկումը և փոշոտումը կատարել ենք տարբեր ժամկետներում՝ 2-ական անգամ: Առաջին անգամ փոշոտումը և սրսկումը կատարել ենք հունիսի 15-ին, 22-ին և 27-ին, իսկ կրկնակին՝ հունիսի 22-ին,

27-ին և հուլիսի 2-ին։ Փորձի արդյունքները հաշվի ենք առել օգոստոսի 2-ին, առողջ և վնասված բողբոջների քանակով, որի ժամանակ բաց ենք արել բողբոջները և ստուգել թրթուրների ներկայությունը։

Սրսկումը կատարել ենք ձեռքի սրսկիչով։ Փոշոտել և սրսկել ենք նախօրոք ստուգված (որոնց վրա գտնվել են շիվապատատի ձվեր) և համարակալված ճյուղեր, որոնք եղել են ծառի միջին յարուսում։ Փորձի ամեն մի վարիանտի համար փոշոտել կամ սրսկել ենք 25 ճյուղ։ Փոշոտումը և սրսկումը կատարել ենք այնպես, որ փորձարկման ենթակա տերևներն ու բողբոջները հավասարաչափ ծածկվել են ինսեկտիսիդի բարակ շերտով։ Կոնտրոլ շիվերը փոշոտել ենք տալկի փոշով։ Փորձի արդյունքները բերված են 2-րդ աղյուսակում։

Աղյուսակ 2

ԴԴՏ-ի հանքայուղային էմուլսիայի և դուստի էֆեկտիվությունը սոճու շիվապատատի ձվերի նկատմամբ

№	Պրեպարատներ	Պրեպարատների կոնցենտրացիան %-ով	Մշակման կրկնությունը	Բողբոջների ընդհանուր քանակը	Բողբոջների վնասվածությունը %-ը
1	կոնտրոլ—տալկ	—	—	296	73,8
2	ԴԴՏ-ի հ. յուղ. էմուլսիա	1,0	2,0	158	4,3
3	» » »	1,0	1	155	7,4
4	» » »	2,0	2	188	1,1
5	» » »	2,0	1	150	12,4
6	» » »	3,0	2	207	0,0
7	» » «	3,0	1	210	7,6
8	» դուստ-փոշոտում	5,5	2	218	19,1
9	» » »	5,5	1	349	60,9

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված տվյալները, սոճու շիվապատատի ձվերի դեմ ամենից լավ արդյունք են տալիս հանքայուղային էմուլսիաներ ԴԴՏ-ի 1,0 2,0 և 3,0%-անոց կոնցենտրացիաների կրկնակի սրսկումները։ Բայց ԴԴՏ-ի 3,0%-անոց հանքայուղային էմուլսիան տերևների վրա առաջացնում է թեթև այրվածքներ, ԴԴՏ-ի 5,5%-անոց դուստի կրկնակի փոշոտումը նույն-

պես տվել է լավ արդյունք, իսկ մեկ անգամ փոշոտման էֆեկտիվությունը շատ ցածր է։

Նույն պրեպարատները փորձարկել ենք նաև շիվապատատի թրթուրների նկատմամբ։ Փորձը դրել ենք հունիսի 27-ին Քանաքեռի անտառում՝ տերևապատյանները վարակված ճյուղերի վրա։ Կրկնակի փոշոտումը և սրսկումը կատարել ենք հուլիսի 2-ին։ Փորձի մեթոդիկան նույնն է եղել։ Փորձի արդյունքները հաշվի ենք առել օգոստոսի 2-ին, որոնք բերված են 3-րդ աղյուսակում։

Աղյուսակ 3

ԴԴՏ-ի հանքայուղային էմուլսիայի և դուստի էֆեկտիվությունը սոճու շիվապատատի թրթուրների նկատմամբ

№ №	Պրեպարատներ	Պրեպարատների կոնցենտրացիան %-ով	Մշակման կրկնությունը	Բողբոջների ընդհանուր քանակը	Բողբոջների վնասվածությունը %-ով
1	կոնտրոլ—տալկ	—	—	253	71,9
2	ԴԴՏ-ի հ. յուղ. էմուլսիա	1,0	2	150	6,8
3	» » »	1,0	1	110	7,3
4	» » »	2,0	2	134	0,3
5	» » »	2,0	1	158	1,4
6	» » »	3,0	2	137	0,0
7	» » »	3,0	1	160	0,8
8	» դուստ—փոշոտում	5,5	2	144	12,5
9	» » »	5,5	1	152	21,7

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, շիվապատատի թրթուրների նկատմամբ ամենից լավ արդյունք են տալիս հանքայուղային էմուլսիաներ՝ ԴԴՏ-ի 1,0 2,0 և 3,0%-անոց կոնցենտրացիաների կրկնակի սրսկումները, գլխավորապես 3,0%-անոցը, միայն վերջինս տերևների վրա առաջացնում է այրվածքներ։

Եզրակացություններ: Ամփոփելով մեր կատարած փորձերի արդյունքները, կարող ենք գալ հետևյալ եզրակացությունների.

1. Սոճու շիվապատատի ձվերի և թրթուրների նկատմամբ ամենից լավ արդյունք է տալիս ԴԴՏ-ի հանքայուղային էմուլսիայի 3,0%-անոց կոնցենտրացիան։ Սակայն 3%-անոց էմուլսիան

բացասաբար է ազդում սոճու վրա, այսինքն առաջացնում է տերևնե-րի դեղնություն։ Ուստի ավելի նպատակահարմար է արտադրական կիրառման համար օգտագործել ԴԴՏ-ի հանքայուղային էմուլսիայի 2,0%-անոց կոնցենտրացիան։

2. Կարելի է փոշոտել նաև ԴԴՏ-ի դուստով։

3. Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ շիվապատատի թրթուրների դեմ քիմիական պայքարը պետք է կազմակերպել այն ժամանակ, երբ դեռ նրանք չեն անցել տերևապատյանների մեջ։

4. Ստացված տվյալները հնարավորություն են տալիս կարծելու, որ ԴԴՏ և աղիքային տիպի ինսեկտիսիդները կարող են էֆեկտիվ կերպով կիրառվել շիվապատատի դեմ։ Սակայն անհրաժեշտ է փորձնական աշխատանք ծավալել, վերջնականապես պարզելու այն խնդիրները, որոնք կապված են այդ պրեպարատների էֆեկտիվ օգտագործման հետ՝ փոշոտման ժամկետները, ծախսման նորմաները և մշակման կրկնողությունների թիվը, կապելով այն շիվապատատի զարգացման առանձնահատկությունների հետ։

Մեր կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ Նորքի անտառի սոճու ծառերի բողբոջների վարակվածությունը շիվապատատով հասնում է 72—85%-ի, այնինչ 1946 թվին այդ վնասատուն Նորքի անտառում եղել է հատ ու կենտ։ Դա նշանակում է, որ ժամանակին այդ վնասատուի դեմ պայքար չկազմակերպելու հետևանքով տարածվել է նա և այսօր հանդիսանում է լուրջ վնասատուներից մեկը Երևանի շրջակայքի նորատունկ անտառների սոճու ծառերի համար, որի դեմ անհրաժեշտ է լայն պայքար ծավալել։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Лозовой Д. И.*, Зимующий сосновый побеговьюн и сосновые лесокультуры в Закавказье, Тр. Кироваканской лесной опытной станции, 1942.
2. Գ. Մ. Մարջանյան և Ա. Կ. Ուսյան, *Դիտողություններ սոճու չփապատատի դեմ պայքարելու մասին, Երևան, 1947։*
3. *Попов В. И.*, Лесная энтомология, Москва—Ленинград, 1931.
4. *Римский-Корсаков М. Н., Гусев В. И.. Шиперович В. Я.* и *Полубояринов И. И.*, Лесная энтомология, Москва — Ленинград, 1949.
5. *Старк В. И.*, Вредные лесные насекомые. Москва—Ленинград. 1931.
6. *Тер-Григорян М. А.*, Вредная энтомофауна парковых культур Еревана и Ленинакана.
7. *Фисенко И. М.*, О вредителях сосны в Кироваканском леспромхозе Тр. Кироваканской лесной опытной станции, т. 1. 1941

ГРИГОРЯН Ж.

СОСНОВЫЙ ПОБЕГОВЬЮН (EVETRIA BUOLIANA SCHIFF) В НОВОНАСАЖДЕННЫХ ЛЕСАХ ЕРЕВАНА И ИСПЫТАНИЕ МЕР БОРЬБЫ ПРОТИВ НЕГО

(Руководитель канд. биологических наук Марджанян Г. М.)

РЕЗЮМЕ

Сосновый побеговьюн является главным вредителем сосны в новонасажденных лесах окрестностей Еревана.

Автор, наряду с изучением биологии данного вредителя, имел целью изучить влияние минеральномасляной эмульсии и дуста инсектисида ДДТ в разных концентрациях на яйца и личинки вредителя. Опыты привели к следующим выводам:

1. Эффективным средством борьбы против побеговьюна являются 2%-ая минерально-масляная эмульсия и 5,5%-ый дуст в двухкратном применении.

2. Целесообразно организовать борьбу до проникновения личинки в листовое влагалище.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետ. Համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского Государственного университета им. В. М. Молотова
XXXIII 1951

ԲՈՒԲՈՒՇՅԱՆ Ռ. Հ.

ՄԱՀԱՑՈՂ ԳԱՆԳՈՒՂԵՂԻ ԷԼԵԿՏՐՈՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՀԱՍԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՈՏ

Բիոէլեկտրական երևույթները, ինչպես հայտնի է, օրգանիզմի, օրգանների և հյուսվածքների կենսական պրոցեսների ցուցանիշներից մեկն են հանդիսանում։ Առաջին անգամ ռուս գիտնական Դանիլևսկին 1875 թվին ուսումնասիրեց շան ուղեղի կեղևի բիոէլեկտրական հոսանքները և գտավ, որ շան ուղեղը ցույց է տալիս պոտենցիալների սպոնտան տատանումներ։

1882 թ. «Ռուսական ֆիզիոլոգիայի հայր» Ի. Մ. Սեչենովը հայտնաբերեց երկայնածիգ ուղեղում էլեկտրական տատանումներ, անվանելով նրանց «հոսանքի սպոնտան (ինքնըեթաց) տատանումներ»։

Վվեդենսկին 1883 թ. կարողացավ հաստատել Սեչենովի հայտնագործումը, կիրառելով իր հեռախոսային մեթոդը։ Մի շարք հայտնագործումներ այդ ասպարեզում կատարել են անցյալ դարի 90-ական թվականներին Թարխանովը, Միսլավսկին և ուրիշները։

Անհրաժեշտ է առանձնապես նշել Պրավդիչ-Նեմինսկու աշխատանքները, որոնք հիմք դրեցին ժամանակակից էլեկտրոֆիզիոլոգիական գրաֆիկ հետազոտություններին։ Ներկայումս սովետական ֆիզիոլոգները լայնորեն կիրառում են էլեկտրոէնցեֆալոգրաֆիկ մեթոդը, ուղեղի հոսանքները ուսումնասիրելու համար։ Մասնավորապես զգալի հաջողություններ են ձեռք բերված պայմանական ռեֆլեքսների ուսումնասիրման գործում այս մեթոդի կիրառմամբ։

Այստեղ պետք է նշել սովետական գիտնականներ՝ Լապտևի, Գերշունու, Շպիլբերգի, Լիվանովի, Կոգանի աշխատանքները,

որոնցով նրանք իրագործում են Ի. Պ. Պավլովի թողած ծրագիրը
«հոգեկան» պրոցեսների օբեկտիվ հատկությունների հայտնաբեր-
ման ուղղությամբ։

Մեր ռեսպուբլիկայում էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտու-
թյուններ տարվում են սկսած 1948 թ. Հայկ. ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտում։ Այս ինստիտու-
տումն էլ կատարված է սույն աշխատանքը, որը մենք նկատի ու-
նենք շարադրելու այստեղ։

Աշխատությունը բխում է Ֆիզիոլոգիայի ինստիտուտի հիմնա-
կան պրոբլեմից, որը սերտորեն կապված է պավլովյան ուսմուն-
քի հետ։ Հարցը վերաբերվում է վնասվածքների վերականգնման
գործում գանգուղեղի հարմարվողականության դերին։

Այս տեսակետից կարևոր է պարզել, թե օնտոգենետիկ զար-
գացման ո՛ր շրջանում, գանգուղեղն այս կամ այն վնասվածքների
և հիվանդությունների դեպքում շուտ է մահանում։ Միաժամանակ
անհրաժեշտ է պարզել, թե ո՛ր հասակում գանգուղեղն ըստ իր
էլեկտրական ֆունկցիայի ավելի բարձր դիմադրողականություն է
ցուցաբերում դեպի արտաքին գործոնները։

Սույն աշխատանքի նպատակն է օսցիլոգրաֆիական մեթո-
դով որոշել, թե ինչպես է փոփոխվում էլեկտրոէնցեֆալոգրաման
կենդանու մահանալու ընթացքում։ Պետք է նշել, որ նման տիպի
էքսպերիմենտալ հետազոտություններ մեզ հայտնի գրականության
մեջ բացակայում են, այն ժամանակ, երբ մանրամասն կերպով
ուսումնասիրված են բազմաթիվ գործոնների ազդեցությունը գան-
գուղեղի սպոնտան էլեկտրական պոտենցիալների վրա։

ՄԵԹՈԴԻԿԱ

Փորձերը դրվել են զանազան հասակի (սկսած նորածնից
մինչև հասուն) կատուների և շների վրա։ Փորձի ենթակա կենդա-
նիները քնեցվել են էֆիրային նարկոզով։ Նրանց գանգուղեղի աջ կի-
սագնդի սահմանում, գանգի ոսկրի մեջ իրարից 1,5 սմ հեռավորու-
թյամբ ամրացվում են 2 չբևեռացվող պողպատե էլեկտրոդներ,
որոնց միջոցով գանգուղեղի սպոնտան տատանումները հաղորդ-
վում են ուժեղացուցիչին, որը ուժեղացած հոսանքը հաղորդում է
գրանցող սարքավորմանը՝ օսցիլոգրաֆին։ Մեր նպատակների
համար օգտագործել ենք երկճառագայթանի կաթոդային օս-
ցիլոգրաֆը։ Սկզբում գրանցվում է կենդանու գանգուղեղի էլեկտ-
րական պոտենցիալները նորմալ վիճակում։ Ապա կենդանին մա-

հացվում է երկայնաձիգ ուղեղի ոչնչացմամբ և գրի է առնվում ուղեղի բիոհոսանքները մահվան առաջին 20—30 վայրկյանի ընթացքում, 1-ին րոպեում, 2-րդ րոպեում, իսկ նորածին կենդանիների մոտ նաև 5—6-րդ րոպեում։ Փորձի ենթակա կենդանին, ուժեղացուցիչը և նրան սնող ակումուլյատորները դրված են էկրանացված կամերայի մեջ։ Ընդամենը կատարվել է 68 փորձ։

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հասուն կատու: *Սրանց մոտ նկատված է մի քանի ռիթմի ալիքներ։ Ալիքներ, որոնց հաճախականությունը 45 է մեկ վայրկյանում, լարվածությունը 120 միկրովոլտ, ալիքներ, որոնց հաճախականությունը 15—20 է մեկ վայրկյանում, իսկ լարվածությունը 50 միկրովոլտ (Նկ. 1 ա)։*

Երկայնաձիգ ուղեղը ոչնչացնելիս գանգուղեղի էլեկտրական պոտենցիալները առաջին իսկ րոպեին անհետանում են (Նկ. 1բ)։

Հասուն կենդանիների վրա (կատուների և շների) դրվել է 22 փորձ։ Ստացված արդյունքները հիմնականում նույնն են։



Նկ. 1ա.

Նկ. 1բ.

1,5 ամսական շան մոտ: *Նկատվում է տարբեր հաճախականության և տարբեր լարվածության ալիքներ։ Այս հասակի կենդանիների համար սա բնորոշ գիծ է հանդիսանում։ Կան ալիքներ, որոնց հաճախականությունը 5 է 1 վայրկյանում, 7 մեկ վայրկյանում և այլն։ Լարվածությունը տատանվում է 70—80 միկրովոլտի սահմաններում (Նկ. 2ա)։*

Երկայնաձիգ ուղեղն ոչնչացնելիս նկատվում է բիոպոտենցիալների որոշ ակտիվացում։ Առաջանում են ալիքներ, որոնց հա-

հաճախականությունը 5 է մեկ վայրկյանում, լարվածությունը 70 Մվ, ալիքներ որոնց հաճախականությունը 6 է 1 վայրկյանում, լարվածությունը 90 Մվ (Նկ. 2բ):

Երկայնաձիգ ուղեղի ոչնչացումից 2 րոպե հետո առաջանում են ցածր լարվածությամբ և շատ դանդաղ ալիքներ (Նկ. 2գ): Երրորդ րոպեի ընթացքում դրանք ևս անհետանում են:

Նկարագրված փորձի տվյալները հաստատում են նույն հասակի կենդանիների վրա կատարված 20 փորձերը:



Նկ. 2ա.



Նկ. 2բ.

Նկ. 2գ

Նորածին շուն (12 օրական): Սրանց էլեկտրաէնցեֆալոգրամմն հետևյալ տեսքը ունի:

Նորմայում նկատվում են հիմնականում մեկ տիպի դանդաղ ալիքներ, որոնց հաճախականությունը 8 է մեկ վայրկյանում, լարվածությունը 50 Մվ: Ալիքների ամպլիտուդան բացարձակապես հավասար չէ, նկատվում է որոշ աճ և անկում: Իրենց գագաթային մասում ալիքները տալիս են թույլ ձեղքավորում (Նկ. 3ա): Երկայնաձիգ ուղեղը ոչնչացնելուց 30 վայրկյան հետո նկատվում է դանդաղեցնող պոտենցիալների խիստ ուժեղացում, ալիքների հաճախականությունը մնում է նույնը, իսկ լարվածությունը հասնում է մինչև 150 Մվ-ի:

Ալիքների ճեղքավորումը ավելի խորն է գնում (նկ. 3բ)։

Ինչպես ցույց տվեցին մեր փորձերը, նույնիսկ 3-րդ րոպեի ընթացքում նորածին կենդանու գանգուղեղի էլեկտրական ակտիվությունը պահպանվում է (նկ. 3գ), միայն 5—6 րոպե հետո նկատվում է պոտենցիալների լիակատար անհետացում։

Նման տվյալներ ստացված են նույն հասակի 26 կենդանիների վրա կատարված փորձերից։



Նկ. 3ա.

Նկ. 3բ.

Նկ. 3գ.

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ստացված արդյունքները բացատրելիս մենք կանգ ենք առնում մի շարք կարևոր հարցերի առաջ։

Փորձերը նախ և առաջ ցույց են տալիս, որ նորածին կենդանու գանգուղեղի էլեկտրական պոտենցիալները կենդանու մահվան 1-ին վայրկյաններում ուժեղանում են, հետագայում աստիճանաբար թուլանում և վերջնականապես անհետանում են կլինիկական մահից 5—6 րոպե հետո։

Սկսած մեկ ամսական հասակից, գանգուղեղի պոտենցիալներն անհետանում են մահվան առաջին 2 րոպեի ընթացքում, ընդ որում սրանց մոտ չի նկատվում մահվան սկզբնական շրջանում

պոտենցիալների այնպիսի աճ, ինչպիսին կատարվում էր նորածինների մոտ։

Հասուն կենդանիների մոտ գանգուղեղի էլեկտրական պոտենցիալներն անհետանում են մահվան առաջին իսկ րոպեին։

Այստեղից հետևում է, որ ինչքան կենդանին հասուն է, այնքան նրա գանգուղեղի բիոպոտենցիալները մահվան ընթացքում շուտ են անհետանում։

Չնայած այն բանին, որ նորածին կենդանիները իրենց կենսական պրոցեսների համար անհամեմատ ավելի շատ թթվածին են պահանջում, քան հասուն կենդանիները, մեր փորձերից պարզվեց, որ նրանց գանգուղեղի դիմադրողականությունը թթվածնի պակասության հանդեպ ավելի բարձր է, քան հասուն կենդանիներինը։

Այստեղից կարելի է ենթադրել, որ նորածինների գանգուղեղը ընդունակ է որոշ ժամանակ ապրել ի հաշիվ անաէրոբիոտիկ պրոցեսների։ Այստեղ անհրաժեշտ է կատարել նոր հետազոտություններ։

Նորածինների գանգուղեղի բարձր դիմադրողականությունը և հասունների գանգուղեղի ցածր դիմադրողականությունը պետք է կապել նաև բջիջների սպեցիալիզացիայի հետ։

Ֆունկցիաների խիստ կոմպլիկացիան հասուն կենդանիների մոտ, ըստ երևույթին, պայմանավորում է բիոէլեկտրական հատկությունների լաբիլականությունը, միջավայրի պայմանների փոփոխման ժամանակ։

Գանգուղեղի բջիջների թույլ սպեցիալիզացիան նորածին կենդանիների մոտ հնարավորություն է տալիս բջիջներին դիմադրելու միջավայրի և նյութափոխանակության ինտենսիվության փոփոխության ավելի լայն սահմաններում։ Մեր փորձերում նկատվում են, որ մահվան ընթացքում ալիքների ռիթմիկ հաճախականությունը խախտվում է, ալիքները տալիս են ճեղքավորումներ, առաջանում են ավելի բարձր հաճախականության, բայց թույլ լարվածության ալիքներ, որոնք, կարծես թե, նստած են նորմալ ալիքների վրա, առաջացնելով շատ դանդաղ ալիքներ։ Այստեղ տեղի ունի ասինխրոնիզացիայի երևույթ, այսինքն, եթե մինչև մահը գանգուղեղի բջիջների առանձին խմբերը կամ հենց ամբողջ գանգուղեղը գործում են որպես մեկ միավոր (սինխրոն կերպով), ապա մահվան ընթացքում այդ խմբերը սկսում են գործել իրարից անկախ, տալով ասինխրոն ռիթմ։ Հետևաբար, դանդաղ ալիքների առաջացումը պետք է դիտվի որպես պաթոլոգիկ երևույթ, և, իրոք, հոգեկան որոշ

հիվանդությունների դեպքում (շիզոֆրենիա և այլն) նկատվում են շատ դանդաղ ալիքներ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչքան կենդանին հասուն է, այնքան մահանալու ընթացքում նրա ցանցաթաղանթի էլեկտրական պոտենցիալները շուտ են անհետանում։

2. Երկայնաձիգ ուղեղը ոչնչացնելիս առաջանում է ասինխրոնիզացիայի երևույթ։

3. Մահվան ընթացքում առաջանում են շատ դանդաղ ալիքներ, որը պետք է դիտվի որպես պաթոլոգիկ երևույթի ցուցանիշ։

4. Ինչքան խորն է նարկոզի աստիճանը, այնքան թուլանում է ցանցաթաղանթի դիմադրողականությունը։

ЛИТЕРАТУРА

Акопов С. А., Современное состояние учения об электрических явлениях в коре головного мозга. Доклад на объединенном заседании Азерб. Мед. общества и Азерб. Филиала общ. физиологов, биохимиков и фармакологов, 27-го сентября 1940 г., Баку, Сборник Науч. трудов Бакинского Госунта, № 2

Гуляев и Жуков, Методы электрофизиологических исследований. Ленинград, 1948 г.

Коган А. Б., Электроэнцефалографические исследования центральных механизмов некоторых сложных рефлексов. АМН. 1949.

Ухтомский А. Л., Физиология двигательного аппарата, Ленинград. 1927.

Чугунов С. А., Клиническая электроэнцефалография. Медгиз. 1950

БУБУШЯН Р. А.

ЭЛЕКТРОФИЗИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ УМИРАЮЩЕГО МОЗГА В РАЗНЫХ СТАДИЯХ ОНТОГЕНЕЗА ЖИВОТНЫХ

РЕЗЮМЕ

В Институте физиологии Академии наук Арм. ССР в настоящее время ведутся исследования, целью которых является выявление приспособляемости головного мозга при восстановлении нарушений в организме.

В связи с этим важно выяснить, в какой стадии онтогенетического развития головной мозг при разных болезнях и нарушениях быстрее отмирает.

В наших работах, пользуясь осциллографическим методом, мы стремились выяснить электроэнцефалографические изменения у умирающих животных.

Опыты ставились на собаках и кошках (от десятидневного до двухлетнего возраста). Всего поставлено 68 опытов. Подопытному животному давался эфирный наркоз. Токи действия отводили при помощи изолированных электродов, от черепной кости в области правого полушария. Электроды соединены с усилителем, который передает усиленные токи действия осциллографу. Мы употребляли двухлучевой катодный осциллограф.

Сначала изучались токи действия у нормального животного, а затем у умирающего животного, смерть которого вызвана уничтожением продолговатого мозга.

Наши опыты доказали следующее:

1. Чем ниже стадии онтогенетического развития животного

тем позже исчезают биопотенциалы умирающего мозга, при этом:

а) у новорожденных осциллограмма изменяется следующим образом. Через 1—2 минуты после перерезки продолговатого мозга замечается усиление активности биопотенциалов, потом постепенное снижение и окончательное исчезновение через 5—6 минут;

б) у молодых животных в первые минуты умирания такого усиления активности, как у новорожденных, не замечается, биопотенциалы окончательно исчезают в течение 2-ой минуты;

г) у взрослых животных биопотенциалы исчезают в течение первой же минуты после перерезки продолговатого мозга.

2. При уничтожении продолговатого мозга наблюдается явление асинхронизации.

3. В процессе умирания образуются очень медленные волны, возникновение которых нужно рассматривать как показатель патологических явлений.

4. Чем сильнее влияние наркоза, тем больше ослабляется сопротивление головного мозга.

Кафедра физиологии человека
и животных

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

Էջ—стр.

Գենետիկա—Генетика

Բատիկյան Հ. Գ., *Տոմատների վեգետատիվ և սեռական հիբրիդիզացիայի հարցի շուրջը* 5

Батикян Г. Г., К вопросу о вегетативной и половой гибридизации томатов . . . . . —

Բուսաբանություն—Ботаника

Տետերևնիկովա-Բաբայան Դ. Ն., *Հայկական ՍՍՌ Կոտայքի շրջանի ծառատեսակների և թփուտների հիվանդությունները* 19

Тетеревникова-Бабаян Д. Н., Болезни древесных пород и кустарников в Котайкском районе Армянской ССР. —

Տոնականյան Հ. Հ., *Մի քանի դիտողություններ Արագածի ալպյան բույսերի վերաբերյալ* 51

Тонаканян Г. А., Некоторые наблюдения над альпийскими растениями Арагаца. . . . . . —

Ծատուրյան Թ. Գ., *Կակաչազգիների ընտանիքի (Papaveraceae) կովկասյան ներկայացուցիչների փոշեհատիկները։* 63

Цатурян Т. Г., О пыльце кавказских представителей семейства маковых (Papaveraceae). . . . —

Հովհաննիսյան Ա. Բ., *Կարմրանազգիների և Ֆրանկենիազգիների ծաղկափոշու մասին* 77

Оганесян А. Б., О пыльце тамариксовых и франкениевых. . . —

Հովհաննիսյան Ա. Բ. և Մելիքյան Ս. Վ., *Լոբու վեգետատիվ հիբրիդների սերմերի քիմիական կազմության հարցի շուրջը* 89

Оганесян А. Б. и *Меликян С. В.*, К вопросу о химическом составе семян у вегетативных гибридов фасоли. —

Բույսերի ֆիզիոլոգիա—Физиология растений

Ղազարյան Վ. Հ., *Միամյա բույսերի բերքատվության և լուսային ստադիայի անցման արագության միջև եղած կապի մասին։* 95

Казарян В. О., О связи между скоростью прохождения световой стадии и урожайностью однолетних растений . . . . . . —
Մելիքյան Ն. Մ., *Լիգնինի կուտակումը մի քանի անտառային տեսակների մեջ՝ կապված ջրային ռեժիմի հետ* 115
Меликян Н. М., Накопление лигнина у некоторых лесных пород в связи с водным режимом . . —

Կենդանաբանություն—Зоология

Պողոսյան Ա. Ռ., *Հայկական ՍՍՌ Կոտայքի շրջանի կրծողները* . 131
Погосян А. Р., Грызуны Котайкского района Армянской ССР. . —
Բաղդասարյան Բ. Ա., *Նյութեր Հայկ. ՍՍՌ Մարտունու շրջանի միջատների մի քանի կարգերի ուսումնասիրության համար* 147
Багдасарян Б. А., Материалы к изучению некоторых отрядов насекомых Мартунинского района Арм. ССР. —

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա — Физиология человека и животных

Հակոբյան Ս. Ա., *Նավթալանոպրեպարատների ազդեցությունը լիպազայի հիդրոլիտիկ և սինթետիկ ակտիվության վրա* 171
Акопян С. А., Влияние нафталанопрепаратов на гидролитическую и синтетическую активность липазы . —
Հակոբյան Ս. Ա., *Ասկորբինաթթվի և ադրենալինի համատեղ ազդեցությունը նյութափոխանակության մի քանի կողմերի վրա* 181
Акопян С. А., Комбинированное действие аскорбиновой кислоты и адреналина на некоторые стороны обмена веществ . . . . . —

Ուսանողական դիպլոմային աշխատանքներից — Из дипломных работ студентов

Կուշյան Զ. Վ., *Բադրիջանի վեգետատիվ հիբրիդների փոփոխականությունը (ղեկավար պրոֆ. Հ. Գ. Բատիկյան)* 191
Кущян З. В., Изменчивость вегетативных гибридов баклажан (руков. проф. Г. Г. Батикян) . . . —
Ավագյան Դ., *Տերևների քանակի և մակերեսների մեծության նշանակությունը բույսերի զարգացման լուսային ստադիայում* 199
Авакян Д., Значение числа и величины площади листьев в световой стадии развития растений . . —
Գալստյան Ս. Խ., *Լույսի ազդեցությունը շերամի զարգացման վրա (ղեկավար՝ բիոլ. գիտ. թեկն. Ս. Մ. Սարգսյան)* 207
Галстян С. Х., Влияние света на развитие шелкопряда (руков., канд. биол. наук С. М. Саркисян) . . —

Գրիգորյան Ժ., *Սոճու շիվապատատը* (Evetria buoliana Schiff.) *Երևանի նորատունկ անտառներում և պայքարի միջոցառումների փորձարկումը նրա դեմ (ղեկավար՝ բիոլ. գիտ. թեկն. Գ. Մ. Մարջանյան)* . . . 217

Григорян Ж., Сосновый побеговьюн (Evetria buoliana Schiff.) в новонасажденных лесах Еревана и испытание мер борьбы против него (руков. канд. биол. наук Г. М. Марджанян) . . . —

Բուբուշյան Ռ. Հ., *Մահացող գանգուղեղի էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտությունները տարբեր հասակի կենդանիների մոտ* 227

Бубушян Р. А., Электрофизиологические исследования умирающего мозга в разных стадиях онтогенеза животных . . . . . . —

Խմբագրական կոլեգիա՝

Պրոֆ. ԲԱՏԻԿՅԱՆ Հ. Գ. (Պատասխ. խմբագիր)
Պրոֆ. ԲԱԲԱՅԱՆ Դ. Ն.
Դոց. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ Հ. Հ.

Редакционная коллегия:

Проф. БАТИКЯН Г. Г. (отв. редактор)
Проф. БАБАЯН Д. Н.
Доц. ТОНАКАНЯН Г. А.

Տեխ. խմբագիր՝ Ե. ՂԵՎՈՆԴՅԱՆ
Կոնտ. սրբագրիչ՝ Գ. ՊԱՐԻՍ

Հանձնված է շարվելու 13 VIII 1951 թ., ստորագրված է տպ. 2 IX 1951 թ. ՎՖ 05341, Թուղթ $60 \times 92\,^1/_{16}$ տպ. 15, հաշվ. հրատ. $14\,^1/_2$, հեղինակ. 13 մամուլ, պատվեր 492, տիրաժ 500

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի հրատարակչության տպարան, Երևան, Կիրովի փող. № 12

ЗАМЕЧЕННЫЕ ОПЕЧАТКИ

Страница	Строка	Напечатано	Следует читать
72	1 снизу	В. М. Козо-Полянский	Б. М. Козо-Полянский
74	6 сверху	Гроссегейм	Гроссгейм
74	8 сверху	В. Н. Козо-Полянский	Б. М. Козо-Полянский
77	10 снизу	Myricaria Reaumuria	Myricaria, Reaumuria
78	2 снизу	М 9Д	М—9
87	1 снизу	*տարրեր*	*տարրերել*
145	14 снизу	Флерев	Флеров

Գինը X ռ. 5-60